

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ  
(1880-1908)

ԵՌԱՄԵԱՅ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ

21 ՕԳՈՍՏՈՍ 1908 — 1911 ՕԳՈՍՏՈՍ 31



Կ. ՊՈԼԻՍ  
ՑԳԱԿՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՑԹԷՈՍԵԱՆ  
1912

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ

(1880 - 1908)



ԵՌԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

21 ՕԳՈՍՏՈՍ 1908 - 1911 ՕԳՈՍՏՈՍ 31



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
Ն. Շ. Ն. - Պ. Ա. Պ. Ե. Ե. Ա. Ն.  
Կ. ՊՈԼԻՍ  
1911

Կ. Պոլիս, 16 Հոկտեմբեր, 1944

Ազնուաշուք

Քոֆ. Յովնաննիկ Եսայրեան

Անդամ Միաց. Ընկերութեանց Տնօրէն Ժողովի  
մաս

Ազնիւ պաշտօնակից,

Տնօրէն Ժողովս հաճելի պատրաստութիւն մը կը եկասէ իրեն իր ջերմագին շնորհակալիչը ներկայէջ Ձեզ այն ծառայութեան համար զոր սոյն Եռամեայ Տեղեկագրի պատրաստութեան առթիւ Ձեր շննդած պատկոթեանքը մասնացիք Ընկերութեան՝ նոր գրառական մը սաշով այսու Գաւառի կրթութեան գործին համար Ձեր ունեցած ջերմ վերաբերմունքին՝ որուն իրական փորձերը մեկէ աւելի անգամներ տեսնելու բաղդն ունեցած եմք:

Մնամք խորին յարգանքով

Ի դիմաց Հայոց Միացեալ Ընկերութեանց  
Տնօրէն Ժողովոյ

Վ. Ասենազպիրի

ՄԻՀՐԱՆ Գ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Ասենապէս

ԵՐ. ԽՈՐԱՍԱՆ

# Հայոց Միացեալ Ընկերութիւն



## ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Անցեալ դարու Հայ Վերածնութեան ամէնէն արգասարեր արդիւնքն է Հայոց Միացեալ Ընկերութիւնը: Եւ ի՞նչ բան կարող է ազդ մը աւելի բարձրացնել, ազնուացնել, կազմակերպել ու քաղաքակրթութեան բարձրագոյն մակարդակի մը հասցնել քան դաստիարակութիւնը և դաստիարակութեան հզօր գործը:

Ազգի մը բարոյական ու սնտեսական բարձրացումը կախում ունի անոր ունեցած դաստիարակութեան կարելիութենէն և ճիգէն:

Հայոց Միացեալ Ընկերութիւնը ազգային այդ ճիգին արտայայտութիւնն եղած է՝ ու կը մնայ միշտ, չըջապատուած տոհմային միահամուռ խանդավառ համակրութեամբ և համազգային եղբայրական գործակցութեամբ: Հոն ու անոր շուրջը կը միանան ամէնուն ձեռքերն ու սիրտերը:

Միացեալին անցեալն ու ներկան այդ կը խօսին: Ակնարկ մը:

Երբ անցեալ դարու կիսուն արեւմուտքէն կուգային գաղափարապաշտ անձնուրաց Հայ երիտասարդներ՝ արեւմտեան քաղաքակրթութիւնը, արեւ-

մտեան դաստիարակութիւնը պատուաստելու, սիւնելու

**ՀԱՅԱՍՏԱՆ**

իրենց հայրենակիցներուն մէջ, ու նոր շարժումի մը,

**ՎԵՐԱՆՆՆՈՒՆԻ**

նոր սկզբունքներու, նոր խաչապնակներու ծաւալումին կը

բոլորանուիրուէին, ճիշդ այդ ստեղծները ուրիշ ազգակ-

ներէ մղուած նոր հոսանք մը կը ստեղծուէր ու կ'ուսնանար Մայր Հայրե-

նիքի ծոցին մէջ: Ազգային Գաղափարին վերածնութիւնն էր այդ: Ու այդ

Գաղափարին մարմնացումն ու առաքեալը կը հանդիսանար Հայաստանցի

երիտասարդ ու ներշնչուած վարդապետ մը՝ Վանի ու Տարօնի Հայրիկը:

Այդ մեծ Հայք, որ վերջէն Հայոց Հայրենի եղաւ, Հայաստանէն կ'անցնէր Կովկաս, կուգար մայրաքաղաքս ու ամէն տեղ իր դիւթիչ լեզուով Հայաստան կ'ողբար ու Հայաստան կ'երգէր: Հոտանքներն արեւմուտքէն ու արեւելքէն կը միանային, ու կրակը կը բռնկէր, կը հրդեհէր ամէնուն սրտերը:

Երազներ կը ծնէին սրտերու մէջ, հին ու նոր չի կար, ամէնքը մասնակից էին: Մանգի ու Խոսնոյի, գործունէութեան, միութեան ու անձնութեան շրջան մը կը սկսէր: Վերածնութեան ամէնէն աւելի կրագուն ու Խոսնոյն գերակատարները կը հանդիսանային զպրոցական պատանիները: Ու անոնք ծնունդ կու տային ՀԱՅՈՅ ՄԻԱՅԵԱՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ:



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Երբ Խրիմեան Հայրիկ 1869ին Պատրիարքութեան աթոռին կը կոչուէր, ճիշդ այդ կրջանիկ, անմեղ օրերուն, կըր ոչ օք գիտէր թէ ի՞նչ փոթորիկներ կը սպասէին Հայ Յեղին, ամէն հայրնակ վայրերու մէջ ընկերութիւններ ու միութիւններ կը կազմակերպուէին Հայութեան պատարարութեան, մասուր զարգացման ու քաղաքակրթութեան ստատրիալ համար: Այս շարժումը

զոյութիւն ունէր ոչ միայն չափահասներու, այլ աւելի ուժգնօրէն զպրոցական գրասեղաններու վրայ սպրոզ պատանիներու մէջ:

Այս կարգի պատանիներն էին որ իրական հիմնադիրները եղան Հայոց Միացեալ Ընկերութեան: Ակիզները առանձին առանձին ընկերութիւններ էին, որոնք վերջէն իրարու միացան, աւելի զօրուոր թափով մը վարելու համար այն գաւառական կրթական գործը, որուն համար գոհարեալ էին իրենց ջանքն ու աշխատանքը:

Առաջին ընկերութիւնը Նուպար-Շահնազարեան վարժարանի աշակերտները կազմեցին: Միացեալի առաջին սահմաններն ըլլալու պատիւը անոնց կը վերաբերի: Այս Հաստատութեան բարձրա-

**ԿՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ**

ժամաւորապէս Կիլիկիցի տասը ժառանգաւոր աշակերտները, իրենց ընկերակից Մինաս Զեբազի գրգիռովն ու Խոսնոյի Կովկասեան Նախագահ Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեանի քաջակերանքովը հիմնեցին Վարդանեան Ընկերութիւնը, որ նպատակ ունէր կրթութիւն ծաւալել Կիլիկիոյ մէջ: Նոյն տարին առաջին վարժարանը բացուեցաւ Հաճրն: Այս Ընկերութիւնն էր որ անուի նպատակալարմար փոփոխութեամբ մը եղաւ ապա Կիլիկեան Ընկերութիւնը, մին՝ Միացեալ Ընկերութիւնը կազմող երեք ընկերութիւններէն:

Երկրորդը՝ Դպրոցասիրաց Միութիւնը՝ հիմնուեցաւ 1870ին Կապիթա-Սէրայի Լիւթին Հայ ուսանողներուն կողմէ: Յովհաննէս Թորոսեան, Յովհաննէս Շահնազար, Յովսէփ Խոստաֆեան, Ստեփան Տառետեան, Կարապետ Սվածեան և ուրիշներ առաջին

**ՊՐՈՑԵՍՈՐԱՆ ԱՐՄԵՆԻԱՆ**

հիմնադիրները կը հանդիսանան այդ Ընկերութեան: Իրենց գործունէութեան զաշար Մեծ Հայոց Տուրքիստան նահանգը կ'ընտրեն, իրենց տեսակէտ ընտրելով նախ կայուն զբաղման մը կազմել և ապա զործի ձեռնարկել: Այս Միութիւնը զործի ապարէզ կ'իջնէ Արևելեան Ընկերութեան հետ միանալէ յետոյ և իր ստաջին վարժարանը կը բանայ Մուշի մէջ:

Իսկ երրորդը՝ որ հիմնուեցաւ 1876ին՝ ամէնէն կորովին ու ամէնէն զօրաւորն եղաւ: Արարատեան Ընկերութիւնն էր այդ, որուն հիմնադիրներն եղան Օրթագիւղցի չորս-հինգ խանդավառ երիտասարդներ՝ Արփիար Արփիարեան, Զարեհ Ծիլմանեան,

**ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ**

Պետրոս Վասիլեան, Յովհաննէս Երրորդեան ու Մկրտիչ Փորթուգալեան: Արարատեանին նպատակն էր Պոլիս գտնուող գաւառացի ազալոց ուսում և արուեստ սորվեցնել: Երբ առաջին նիստը կը գումարուի՝ Մինաս Զեբազն այ կը հրափրուի, և չուսով իր ծրագիրը փոխելով Վասպուրական նահանգը սուպարէզ կ'ընտրէ իրեն: Հիմնադիր

անդամներէն Մկրտիչ Փարթեզպետն որպէս տեսուչ Վան կը գրկուի և առաջին վարժարանը կը բացուի Ալիւր գիւղին մէջ:

Գործունէութեան ժամը այն հասած էր: Երեք ընկերութիւններն այլ բարենախանձ մրցումի մը մէջ են: Կը վազեն, կը գործեն, նոր վարժարաններ կը բանան, նոր յայտեր կը ստանան: Աննախորհուրդ գործունէութեան մը շրջանն է այդ: Երբէք Հայտիւնը աբիջ սեւէ տանն անսած չէ խանդավառումի և յայտի այս ծիփուն ալիքները: Թուրքիոյ մէջ ու դուրսը ուր որ Հայ կայ, նաև ձեռքեր կ'երկարին օգնելու Բնագաւառի կրթութեան Գործին:

«Մշակ» Հայկական նկարուն նամակները կը ստարածէ Արարատին չորս բոլորը և անհուն համակրանք մը կը ստեղծէ «Արարատեան»ին չորսը: Արժրուանի կը մղէ ու կը մարակէ հասարակաց կարծիքը, Հայտ սիրտ կրող մը չի կրնար խուսափիլ իր մասնակցութեան բաժինէն: Մեծ, հակոյ ու նախրական Փառափար մը կայ իրազգայնութեան և ամենքը սիրազօծար պարտախանութեան սեղանին չորսը կը բոլորին: Առ նպատակ առատ հաւանք մը կուզայ թափարկելու և կրկնապատկելու անձնուրաց երիտասարդներու աշխատանքը:

Երեք Ընկերութիւններն այլ կ'աշխատին: Գարսցիներ կը բացուին ու երկու տարուան մէջ անոնց թիւը կը բազմապատկուի: Արուեստանոց մը կը բացուի Մուշի Առաքելոց Վանքին մէջ ու վարժարանաց մը Վանի Այգեհատանին մէջ: Կիլիկիոյ ու Մեծ Հայքի ամեն կողմերը ցանցի նման կը սփռուին նորարաց վարժարանները որոնց թիւը:

**ՎԱՅՈՒՆԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

1880ին սկիզբները, 24ի կը համնի:

Այս երեք Ընկերութեանց գործունէութիւնը երբ իրական արդիւնքով երևան կուզայ, երբ պարտքներու բացումն ու անոնց տարեկան գործունէութեանց նախնական ու անդհատաւթիւնները կը հրատարակուին, համակրանքը արեւմտեան կը շատնայ որ ընդհանուր համայնք մը կը ստեղծուի և ամեն կողմէ միութեան հրաւեր կը կարգացուի: «Արարատեան»ը միանայ չուգեր: Ան ունի Արժրուանի հայակազ աջակցութիւնը, սղբուցեայ նահատակ Արթիւր Արթիւրեանի սրտացունց գրիչը, վարժարաններու աւելի մեծ թիւ մը և աւելի խոշոր գրամագլուխ մը:

Բայց միւս երկու ընկերութիւններն այլ անզործ չեն: Անոնք կ'աշխատին, կը աքնին, պարահանդէսներ կու տան ու վաս կը պահեն համակիր ժողովրդեան աջակցութիւնը. սակայն միութեան մէջ կը տեսնեն աւելի ընդարձակ և դարձուն գործունէութեան մը ուժը: Գարսցիներու-Արեւելեան Ընկերութեան կողմէ Յովհաննէս Շահապարի նման կրթով անձնուրութիւն մը Կովկաս կը մեկնի, նաև Արժրուանի համոզելու և երեք ընկերութեանց միութիւնը իրականացնելու համար: Արժրուանի հայակազ մէտք մը կ'ընէ զբաւարարելու խոտանալով որ պատրաստ է, նաւազգայն չափով, տարեկան 12,000 ռուպլիի նպաստ մը ապահովել Ընկերութեանց՝ եթէ բազմապատկումն արթիւններ կրողսրծուի:

Ամենքը միութեան ոյժ կու տան, ջանք կ'ընեն, մինչև վերջապէս հեղինակուար ձայն մը այդ կողմը կը հաստատէ: Երբևէ վարժարանեան, օրուան Պատրիարքը, այդ մեծ հայրենասէրը, որ

**ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՄԻՍՏՈՒՄԸ**

կրեք Ընկերութեանց այլ աջակից-գործակից ու պաշտպանն եղած էր, կը յաջողի իրարու բերել ու օրհնել այն միութիւնը որ ինչպէս անցեալին ու ներկային, նախապէս այլ ապագային համար կուստած է ազգային կրթութեան ապաւէնը բլրալու:



ՆԵՐՍԷՍ ՎԱՅՈՒՆԱՆՍԵՆՆԻ

«ՀԱՅՈՒՆ ՄԻՍՏՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ» պաշտնապէս յայտարարուեցան 1880 Յունիս 1ին:

Երբ «Արարատեան», «Գարսցիներու-Արեւելեան» և «Կիլիկեան» Ընկերութիւնները կը միանային վերջնականապէս 1880ին, առաջինն ունէր 11, երկրորդը 5, իսկ երրորդը 8 վարժարան: Նոյնպէս սրբով տնայրար գրամագլուխ առաջինն ունէր 3306,88 օամ. սակի, երկրորդը՝ 1386,28 օամ. սակի, իսկ երրորդը՝ 422,43 օամ. սակի և Արվազափոքի մէկ գեղեցիկ ու մեծապիւր ծովանկարը, որ սպաս վիճակահանութեան դրուելով 200 օամ. սակի գումար մը բերաւ Ընկերութեան գանձին: Միացումն յետոյ աւելի զօրութիւնով մը Միացեալ Ընկերութիւնը ձեռնարկեց զօրով ընդարձակումն և տարածման: Ոչ կամըր կը պակեր, ոչ ուշխտանքը և ոչ այլ ընդհանուր համակրութիւնը: Պահանջն անհամեմատ մեծ էր քան այն հարաւորու-

թիւները զորս Միացեալի Կեդրոնական Վարչութիւնը կարող էր իրագործել: Գաղափար մը ապու համար թէ որքան խոր տգիտութիւն կը տրէր Հայաստանի զիւղերուն մէջ, իշատակէնք միջազէլ մը: Այդ ասեմները Միացեալի Վասպուրականի փոխ-տեսուչը Հայ զիւղերէն մէկը կ'աչցելէ վիճակազրերու և Տնօրէն ժողովին հաղորդելու համար զիւղին կրթական վիճակը: Գիւղացիներն անգիտակ գործին խկութեանը՝ կը կասկածին թէ Միացեալի ներկայացուցիչը զիւղէր կը ցուցակագրէ որպէս զի իրենցմէ զինուոր առնուի: Դժուարու զիւղին քահանան կը համոզէ դանձրք համակերպելու: Բայց հագիւ թէ փոխ-տեսուչը վիճակագրութեանց ցուցակները գրպանը գրած կը պատրաստուի մեկնելու, զիւղացիները վրան կը յարձակին, կը դանակոծեն և կը փորձեն թուղթերն առնելով պատաս-պաստա ընել: Դժբաղդ վիճակագիրը հագիւ թէ կը ձողուրի անոնց ձեռքէն:

Պատկեր մին ! այս այն ասեմուան Հայ զիւղացիին հոգեկան վիճակին ու մտայնութեանը: Ո՛րքան փոխուած են հիմա ժամանակները:

Հայոց Միացեալ Ընկերութիւնը միացման թուականին իսկ կը ձեռնարկէն աւելի կանոնաւոր ու աւելի զրական վիճակի մը մէջ դնել զատու վարձարանները, անոնց թիւը կրկնապատկելով և գործունէութեան ամբողջ պայտը կրթական երկու անջատ շրջանակներու բաժնելով՝ Ա. Մեծ Հայք և Բ. Կիլիկիա\*):

Մեծ-Հայոց վարձարաններու տեսութեան կը կոչուի տարարախա հարձականք՝ Մկրտիչ Սարգսն, Կայսերական Լիսէի շրջանաւարտ և «Գպրոցատիրաց-Արեւելեան»ի անդամներէն մին, և կեդ-րոնը կը հաստատուի Մուշ: Փոխ-տեսուչներ կը նշանակուին իրեն Տաւրոսի, Վասպուրականի և Տարուբերանի շրջանակներու համար:

Այս եռուղեւ գործունէութեան հետեւանքով, երեք շարս տարուան ընթացքին մէջ, Ընկերութիւնը կը համար գնա-

(\*) Կեդրոնական ժողովոյ առաջին զիւանը կազմուած էր հետեւեալ անձերէն.

Տոբ. Ռամայէլեան	Ա. Ասեմայիս
Թովմաս Եսայեան	Բ. Ասեմայիս
Անդրանիկ Այվազեան	Ա. Ասեմայիս
Հրան Ասատուր	Բ. Ասեմայիս
Իսկ Տնօրէն ժողովը հետեւեալներէն՝	
Պետր Ապտուլան	Ասեմայիս
Ջարեհ Շիւճանեան	Ասեմայիս
Տիգրան Առաքելեան	
Յովնանէս Արեւիկեան	
Արփիար Արփիարեան	
Յովնանէս Շահնազար	
Կարապետ Ավանես	
Սեփան Տամեան	
Պետր Վասիլեան	

Մինչև լուծուր Ընկերութիւնը եօթ վարչական ժողովներ ունեցաւ:

հասակի արդիւնքի մը և վարձարաններու թիւը կը բարձրանայ 46ի(\*), որոնց մէջ կը պաշտօնավարէին 115 ուսուցիչ և կը սովորէին 2822 աշակերտ և աշակերտուհիներ: Ամէնէն փայտուն ժամանակն էր այս հայամուսնին ու կործանումին առաջ: Ընկերութեան պիւստէն այս վարձարաններուն համար տարեկան 3000 օսմ. ոսկին կ'անցնէր: Եկամուտի զլիսուար աղբիւրներն էին միանուազ նուէրներ, կանոնաւոր բաժանորդագրութիւն Պոլսոյ մէջ և զաւասանները (\*\*), ու ստրեկան պարահանգէսը: Միւսնոյն ժամանակ, ինչպէս հիմա, նոյնպէս և այլ շրջանին՝ որպէս զի զիւղացիները ինքնօգնութեան վարձուին, Միացեալ Ընկերութիւնը մասնակցութեան բաժին մը կը ստանար այն զիւղացիներէն, որոնք կարող էին տարեկան որոշ նպաստ մը վճարել:

Զի մուշանքը ըսիկ նաև թէ Ընկերութեան հրատարակած դասագիրքերը,

(\*) Միացումէն յետոյ բացուած նոր վարձարաններն էին՝

1. — Փղի-Գասպպա, Բարձրագոյն հայախրատան,	արական,	բացուած 1880	Գեկեմբեր	1ին
2. — " " " " " " " " " " " "	իգական,	" " " "	" " " "	" "
3. — Բերրի-Չարսանագ, զիւղային	արական	" " " "	" " " "	" "
4. — Սղերդ	" " " "	1881	Մարտ	3ին
5. — Խուսու-Չէլիբուլ	" " " "	" " " "	Ապրիլ	1ին
6. — " " " " " " " " " " " "	" " " "	" " " "	" " " "	" "
7. — Մուշ, Բարձրագոյն	իգական	" " " "	1882	Նոյեմբեր
8. — Տէն	արական	" " " "	1883	Ապրիլ
9. — Հազո, Սասուն	" " " "	" " " "	" " " "	" "
10. — Պարին	" " " "	" " " "	" " " "	" "
11. — Ռեհուան	" " " "	" " " "	" " " "	" "
12. — Մալաթի	" " " "	" " " "	1884	—
13. — Արեւն, Կիլիկ	" " " "	" " " "	" " " "	" "
14. — Անարճի	" " " "	" " " "	" " " "	" "
15. — Սղերդ	իգական	" " " "	" " " "	" "
16. — Կերկէն, Մալաթի	արական	" " " "	1882	" "
17. — Գարաբիլիսէ, Ալաշկերտ	" " " "	" " " "	1884	" "
18. — Չիւրէք, Մուշ	" " " "	" " " "	" " " "	" "
19. — Պոլսական	" " " "	" " " "	" " " "	—
20. — Խասուր, Ալաշկերտ	" " " "	" " " "	" " " "	—
21. — Ասանա, Բարձրագոյն	" " " "	" " " "	1881	Յունվար
22. — " " " " " " " " " " " "	իգական	" " " "	" " " "	" "
23. — " " " " " " " " " " " "	արական	" " " "	" " " "	" "
24. — Բրզգիա եպոպիէ, Հալէպ	երկուս	" " " "	" " " "	Սեպտեմբեր

Միացումէն առաջ վարձարաններու թիւն էր 22, առանց հաւուելու Վանայ վարձարանները: Միացումէն յետոյ 24 նոր բացուեցան, որով զուտար՝ 22 + 24 = 46:

(\*\*) Մասնակցութիւնը կը գտնուէին Ռոստոք, Մալաթի, Նիկոմիդիա, Ասարպատ, Ֆիլիպս, Երուսաղէմ, Սոփիա, Չափաձագ, Բերրի (Չարսանագ), Սղերդ, Պոլսա և Իզմիր: Կովկասի, Ռուսիոյ, Աւստրո-Հունգարիոյ, Անգլիոյ և այլ արտերկրի Հայեր պարբերական անգլագրարներով բարձրակ կը ստատէին Ընկերութեան կրթական ձեռնարկները:

մասնաւորապէս «Մայրենի Լեզու»-ները կանոնաւոր եկամուտ մը կը բերէին Ընկերութեան :

Ձեռք կարող զլանայ մեր համակրանքն ու գնահատումը և «Ազգա- նուէր-Հայուհեաց» Ընկերութեան, որ իզական սեռի կրթութեան տարածման գերազնիւ ճիգն ունեցաւ՝ Միացեալին սրամաղրեկով տարեկան որոշ գումար մը որով իզական վարժարանները կը կառա- վարուէին գաւառներու մէջ(\*): «Եւրոպոս- սէր Տիկնանց» Ընկերութիւնն ալ սքան- չելի ծառայութիւն մը կը մատուցանէր պատրաստելով վարժուհիներ, որոնցմէ շատերը սիրալոյծար գաւառ կ'երթային Միացեալ Ընկերութեանց վարժա- րաններուն մէջ ծառայելու համար :

Հայոց Միացեալ Ընկերութիւնը կրթական նոր ուղղութիւն, նոր դրութիւն մը մտցուց գաւառներու մէջ : Առաջ հոս ու հոն ցրուած ցանցաւ վարժարանները Սազմոս, Ժամագիրք ու

**ՄԻՈՅՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ**

նմկանուն ու խառն խառն էր ամէն ինչ, ոչինչ կար նպատակ իրական զատարարութեան ներմուծման և միջախոյրին ազնուացման : Միացեալը մանկավարժութիւն մտցուց գաւառը և գաւառացի տղան ձեռքը տուաւ «Մայրենի Լեզու»-ներն ու նոր ոճով գրուած դասագիրքերը : Անոր ուսուցիչ- ները տարբեր կը հագուէին, սպորտսփի ու վարուելակերպի տարբեր եղանակ մը ունէին, և այս բոլորը բաւական էր օրինակ հանդիսանալու, և նմանո- ղութիւնը, բնական հետևանքով, այս քաղաքակրթական նոր հոսանքը կը տանէր — կը ծառայէր Միացեալի վարժարան գանուած զիւրերու մէջ և անկէ դուրս ալ ամբողջ գաւառները : Միացեալը նեղխնակութիւն մը գործած էր գաւառին համար և այս բանը իր փրկարար հետևանքը կ'ունենար :

Ու այս չէր պատճառը, որ ամէն տեղ Միացեալի տեսուչները, ու- սուցիչներն ու ներկայացուցիչները սիրով կ'ընդունուէին : Միացեալի տեսիլ մը այցելութիւնը պատահար մըն էր իրօք : Ամբողջ զիւրն ոտքի կ'ելլար դի- մաւորելու Գաղտնաբերութեան ներկայացուցիչը, Հայ շինականին մեսիան : Կուսակալներ, միւլտարքիներ, գայմազամներ և ուրիշ պետական պաշ- տօնեաներ այս իսկ համակրանքի ու ազգեցութեան պատճառաւ էր որ մեծ կարեւորութիւն կու տային Ընկերութեան ներկայացուցիչներուն, շատ ան- գամ օրերով հիւրասիրելով զանանք իրենց բնակարաններուն մէջ, ու շատ

(\* ) Ազգանուէր-Հայուհեացին սահեկան նպաստը կը հասներ 210 օտ. ոսկիի : Սովիցը Յանձնաժողովը կու տար սահեկան 120 օտ. ոսկի : Իսկ Ալաշիէրի համար Էջմիածնէն կ'ու- նուէր սահեկան 70 օտ. ոսկի :

անգամ ալ, կարեւոր խնդիրներու առթիւ, անոնց խորհրդակցութեանը կը դիմէին :

Երբ Հայոց Միացեալին գործը օրէ օր կը զարգանար, կը ծաւալէր և կը խոստանար ցեղային միասնակ ու միահամուռ դաստիարակութեան փայլուն ապագայ մը, քաղաքական փոփոխու- թիւններ կուզային միագնելու. Հայաստանի հորի- զանը և օր մը խորտակելու բոլոր քաղաքակրթա- կան, զարգացողական և անտեսական ձեռնարկ- ները և մինչև իսկ ամբողջ ցեղի մը կեանքը : Հայոց Միացեալին գործն ալ վտանգի մէջ էր :

**ԿԱՍԻԱՆՆԵՐ ՄԻՈՅՆԱԿԱՆ ՂՂՄ**

Վերածնութեան այս հսկայ գործն այլևս սուր փուշ մը կը գաւառը Ապոխլ Համիտի աչքին ու կեդրոնէն հրահանգ կ'երթար գաւառները հետա- պնդելու բոլոր Հայկական ձեռնարկները : Արեւելեան Բուսնիլի միացումը Պուլկարիայ հետ Բաճապետեալին կապածները զրգուած էին : Միացեալը այս անարդար կառկածներէն զմտազ զո՛րը դարձաւ :

Երբուրդի չրջափակին մէջ այն կարծիքը գոյացած էր իէ Հայոց Միաց- եալ Ընկերութիւնը կրթական անուան ներքեւ յեղափոխական կազմակեր- պութիւն մըն էր :

Ասկէ աւելի վատ կասկած մը գոյութիւն չէր կրնար ունենալ : Միացեալը իր կեդրոնական մարմինովն ու ամբողջ կազմովը միայն մէկ խառն ունէր, մէկ ծրագիր, այն է կրթութիւն տարածել գաւառի մէջ : Անոր հաշիւները բաց էին, տարեկան տեղեկագրեր ու վիճակագրոյցներ հրա- պարակ կ'ելլէին, և նոյն իսկ կառավարութիւնը ամիսներով կեդրոնէն գա- ւառ զրկուած նամակները կը բանար և կը կարդար, և օր մը օրանց յեղափո- խական, սպորտամրական բառ մը անգամ անոնց մէջ չի գտաւ :

Վանայ Վարժարկետանոցը արդէն փակուած էր 1881 Սեպտեմբեր : Փակ- ման զլիւսաւոր շարժումները նիւթականին չափ և աւելի ալ քաղաքական հա- խաղաղութիւնն էր : Տեսուչ Մկրտիչ Փորթուգալեան անկէ յետոյ երկու տարի եւս շարունակեց գալն Կեդրոնական Վարժարան անուան ներքեւ և ապա 1884ին Կառավարութիւնը փակեց այդ հաստատութիւնը և Տեսուչը Պոլիս աքսորեց :

1885-1886 դպրոցական տարին ամէնէն տազնապալի չրջանն եղաւ Միացեալ Ընկերութեան համար : Տեսուչներ և ուսուցիչներ սկսան հարցա- քննութեանց ենթարկուիլ ու դժուարութեանց մասնուիլ :

**ՀԱՍԻԱՆՆԵՐ ԵՒ ՋԵՐԲԱՆԱԿԱՆՈՒՄ**

1886 Դեկտեմբեր 15ին՝ միևնույն օրը՝ ձերբակալուեցան Հայաստանի Ընդհանուր Տեսուչ Մկրտիչ Սպարեան Ալաշիէրալի մէջ և Օգնական Տեսուչ Մարկոս Նախան- կան Մուշի մէջ : Երկուքն ալ երկար ասան բանտը մնացին առանց հարցաքննութեան և առանց գիտնալու իէ ինչ էր իրենց դէմ

եղած ամբաստանութիւնը: Վերջէն ասոնք արքայութեան ասանց դատական վճռի: Տարարազդ Սարգսն մինչև իր մահը անյուր հայրամանաց ենթարկուեցաւ և իր մահկանացուն կնքեց տառապանքի ու թշուառութեան մէջ<sup>(\*)</sup>: Իսկ Մարկոս Նախանեան երկար ասան նրուադէմ արքայ մնայէ յետոյ ներման արժանացաւ:

Ձերակալութիւնները ընդհանուր վնասութիւն առաջ բերին և ամէնքը կը վախճային թէ կառավարութիւնը վճռած է կործանել Հայոց Միացեալ Ընկերութիւնը: Վնասակետան Յարութիւն Պատրիարք չափազանց զգուշատը դիրք մը բռնեց և ստատմանցաւ գիտնականներ ընկու ի նպատակ Ընկերութեան՝ կասկածելով իր դիրքը խախտել կառավարութեան մաս: Համիտական հայածանքները նեղչեալ էր ստատմանային Հայոց գէմ, մանաւանդ երթիւնեկութիւնը Հայաստանի մէջ գրեթէ անկարելի կը դառնար:

Այնուամենայնիւ Միացեալի վարժարանները կը շարունակուէին: Ընդհանուր և Օգնական Տեսուչներու ձերբակալումէն յետոյ Մուշի «Նեկաէսեան» վարժարանի Տնօրէն Միհրան Տառնտեան Կեդրոնէն ստացած հրահանգներուն վրայ մասնաւոր շքարեականով մը բոլոր ուսուցիչներուն գումանց լուրը՝ յորդոր կարգադով միանգամայն իրենց գործը անձնուիրարար շարունակելու:

Եւ ո՛վ կը յուսահատէր: Ընկերութեան վարժարաններուն մէջ պատշաճ նախարող ուսուցիչներուն մեծ մասը Միացեալի նախկին ասնին էին: Անոնք նախընտրած էին իրենց գործին, անոնք խանդաղատանք մը ունէին իրենց alma materի նմուշէն և պատրաստ չընկրկելու ու եւ արգելիք և խոչընդոտի ստաջ: Հայրամանքի ու արձախրքի մէջ կրթական գործը կը քայլէր դարձեալ:

Ընկերութեան Կեդրոնական Մարմինը նուազ կասկածանքի տակ չէր: Թղթակցութիւնները նուազած էին, նախարարութիւնները ցանցատ, այլեւս տեղեկատուութիւններ և տեղեկագրեր չէին

**ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵՍԵՐԱՅՈՒՄԸ** հրատարակուէր: Սպասողական ու վարանոտ մտայնութիւն մը կը տիրէր: Վերջապէս վիբուսոր ու հայրամանակ Միացեալը գնաց Դարաթիոյ Ս. Լուսաորիչ Եկեղեցին ապառինի և անոր հովանիին ներքեւ շարունակելու փշոտ գործը:

Կասկածները նեղչեալ էր զօրանային Հայոց գէմ: Արտատանանի մէջ յեղափոխական հրատարակութիւնները բուն պաշար մը կը մղէին Հա.

**ՅԵՂԱՔՈՒՆԱԿԱՆ ԵՆՔՐՈՒՄԸ** միտական բէթիմին գէմ: 1890ին Գում-Գարուի ցոյցը տեղի կ'ունենար և հակահարուածը կը կրէր Միացեալ Ընկերութիւնը, որ կառավարութեան աչքին յեղափոխական մարմին մը նկատուած էր պարզապէս:

Ընկերութիւնը կը ստիպուէր փոխել իր կանոնադրութիւնը և յարմարցնել ժամանակի պահանջին ու պարագաներուն:

(\*) Սարգսն իր մահկանացուն կնքեց Խզմիթի հիւանդանոցին մէջ 1900 Յունվար 10ին: Խզմիթի պանդոխոս Մեզիմեր՝ ի յարգանս այս անձնուրաց կրակամ մեակին՝ համեստ սապանաբար մը դրին անոր շիւթին վրայ: Իսկ յետոյն ազգայինները, գոյսի հանգամանակութեամբ մը, նպաստեցին ողբացեալ Սարգսնի դժբաղ այրիին ու որբերուն:

Նոյն ասուն Մուշի մէջ երեւան կու գար յեղափոխական կազմակերպութիւն մը գլխաւորարար Միացեալի նախկին ասնին ու անոնց ընկերակիցներէն կազմուած: Անմիտ հայրամանքը մղած էր յուսահատ երիտասարդութիւնը բմբուստանայու բռնապետութեան դէմ: Շատերը կը ձերբակալուէին, կը բանտարկուէին ու կ'աքարուէին:

Մարդկային կեանքը այլ անկարելի դարձած էր Հայաստանի մէջ: Տեսնական վիճակը վտանգուած ու կրթական բոլոր ձեռնարկները խանգարուած: Հայոց Միացեալի գործն այ օրուան Ձոնն էր:

Այլեւս գաւառի նեւ հազարակցութիւնը խզուած էր: Վարժարաններու մեծ մասը փակուած, նախարարութիւնները նուազած: Ո՛վ կը համարձակէր այլեւս Միացեալին շուրջը բոլորուիլ, անոր օժանդակել նիւթապէս կամ բարոյապէս. ո՛վ կը համարձակէր այլեւս լքուած Տեսչութեանց պաշտօն ստանձնել: Ո՛չ ոք: Գերմարդկային արիւթիւն պէտք էր: Բայց անոնք այ, որ այդ արիւթիւնը կը ցուցադրէին, անոնց բաժին կը մնար բանտ, աքար, մահ:

Տեսչութեանց փոխարէն Տնօրէն մը<sup>(\*)</sup> կը նշանակուէր Կեդրոնի մէջ վարելու համար մէջ միայն կրթական գործը, այլ և Կեդրոնի ղեկավարումը, որովհետեւ Տնօրէն Ժողովը այլեւս չէր համարձակել նիւստ գումարել: Անոր անդամներէն ոմանք արդէն հրաժարած էին, իսկ Հիմնադիր Անդամոց հաւաքումը ներքի չէր մտքէ անգամ անցունել: Սակայն անոնք այ, որ դեռ կը յամաւէին մնալ, ուրիշ բան չունէին ընկիւր եթէ ոչ երբեմն երբեմն խորհրդակցել ու աջակցել Տնօրէնին՝ միշտ սպասողական դիրքի մը մէջ, միշտ այն յոյսով թէ փոփոխիկ օրերը պիտի անցնին ու Միացեալը վերստին ձեռք պիտի ստնէ իր խանգարուած մեքենան:

Սակայն օրը օրին աւելի ու աւելի վատթարացաւ Հայութեան վիճակը: 1895-96 զրրկայից կատարածներուն յաջորդեցին սնարին կատարածի օրերը: Կեանքն այ դադրած էր իր բնական քայլէն: Հայոց **ՄՐԱՅՆԱԿ** Միացեալն այ այդ մահառիթ խորհակէն կը քշուէր, կը **ԿՐԻՍՏԱՆՈՒՄԸ** տարուէր գէպի գերեզման...: Մահը կը մօտենար Միացեալին, բայց կամաց կամաց:

1896ին, Մարաքիա Արքեպ. Օրմանեանի Պատրիարքութեան ստաջին տարին, Ազգ. Վարչութեան մէկ որոշումով Միացեալ Ընկերութեան բոլոր գործառնութիւնները Պատրիարքարանը ինքն ստանձնեց քաղաքական վտանգէն զայն զերծ պահելու համար: «Խնամակալութիւն Միացեալ Վարժարանաց» անունով առանձին մարմին մը կազմուեցաւ և անոր փոխանցուեցան Ընկերութեան բոլոր գոյքերն ու բաց մնացած վարժարաններու կառավարումը:

(\*) Տնօրէն նշանակուեցաւ Տիար Լեւոն Հանեան որ այդ պատճառով վարեց մինչև Ընկերութեան կործանումը եւ արդի վերակազմութենէն յետոյ վերսին ստանձնեց այդ պատճառը:

Շուտով այս մարմինն այ անհետացաւ ու Միացեալի գործը՝ իր բոլոր գոյքերովը՝ յանձնուեցաւ պարագաներէ ծնունդ ստան նպաստից Յանձնատեղովին որ կը գործէր Պատրիարքարանի մէջ ուղղակի Պատրիարքին նախագահութեանը ներքեւ։ Այ վարժարանները փակուած էին։ Նպաստից Յանձնատեղովը կը բաւականանար միայն կոտորածի ու սովի առիթի իր ձեռքը՝ նստած նպաստներէն փաքը մաս մը հանել կրթութեան գործին՝ նպաստելով երբեմն այս երբեմն այն գաւառական վարժարանին, և կամ գրեթեական պիտոյք ու դասագրքեր հայկալիկով կարօտ վայժարու վարժարաններուն։

Որքան որ Հայոց Միացեալը կը մեռնէր, որքան որ ամէնքը կսկծանքով կը նայէին ազգային վերածնութեան այդ մեծ դերակատարին դազալին ետեւէն, սակայն մարդ սրտապնդում մը կը զգայ Հայ ցեղի նկարագրի ու առնականութեան վրայ՝ երբ կը տեսնէ որ Միացեալին գործը չի մտաւ, կանգ չառաւ մինչեւ անոր յարութիւնը։

Աւերի ու քանդումի օրերէն յետոյ կրկին կառուցինք մեր այրած եկեղեցիները ու կրկին կանգնեցուցինք մեր փրտակներուն վրայ նոր վարժարաններ և Միացեալի մասնաճիւղերը՝ անոր անձնուրաց պաշտօնեաներն ու ստաները՝ հուրի ու սուրի մէջէն տասը երկար տարիներ կրկին հաւաքելին հայ մանկան — քաղքենին ու շինականը միահամուռ — հայրենի կառուին սով, ու անոր սովեցուցին մեր մայրենի լեզուն, նախնեաց հաւատքը, նախահայրերու պատմութիւնը, ու այն ամէն գիտութիւնները զորս սովրած էին իրենց վարժարաններէն։ Ազգաս, սկար ու վախ էր գործը, բայց վսեմ, ստարքինի ու սարկոսական։ Ազգացոյց մըն էր թէ ապերսւ ընդունակ ենք։



Օտանեան Սահմանադրութեան վերահաստատութեան առաջին օրերուն, 1908 Յուլիան վերջերը, ընդհանուր խանդավառումի, խրախմանքի ու գինտօլութեան պահուն, ագնիւ հայ մը պարզ կոչով մը (\*) հրաւեր կարդաց Հայոց Միացեալ Ընկերութիւնը վերահաստատելու։

**ՄԻԱՅՆՈՒՄ**

**ՎՅՐԱՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այնքան թարմ էր այս կրթական հայակազ Հաստատութեան յիշատակը, այնքան բուռն գորով մը ու սէր մը կ'ապրէր զեռ Հայութեան մտքին ու սրտին մէջ անոր վերաբերմամբ, որ քանի մը օրուան մէջ Հայոց Միացեալը վերակենդանացած էր, վերակազմուած ու գործի ձեռնարկած։ Մայրաքաղաքէն դուրս ջնակոյ հեռաւոր հայերն ու այն մասն չէին մնացած այս եռ ու զեռ գործունէութենէն, ու շուտով իրենց համակրանքի ու նիւթական ու բարոյական աջակցութեան բաժինը կը բերէին միայնկու կեդրանի ջանքերուն։

(\*) Այս պատուական անձն էր Վահայի Հայ վանատկաններէն Պոլիս հաստատած Տիար Յովնանէս Իսազուլեան, որ կը խոստանար արեւան 20 օտ. ոսկուց նպաստ մը վճարել իր կողմանէ երբ Ընկերութեան վերակազմութեան զաղափար իրականանար։

Ազգային տենդոս գործունէութեան նորանշան, բայց ոչ անբաշտարիկ, երեւոյթ մըն էր այս։ Կարծես տանեւհինգ տարուան հայածանքի ու կապանքի շղթաներէն ձերբազատուած Հայը կ'ուզէր յետամնաց քայլը ասնել զէպի սուտ, զէպի քաղաքակրթութեան զէնիթը։

Շուտով Ընդհանուր ժողով կը գումարուէր Գալաթիոյ Ազգ. Խորհրդարանի սրահին մէջ, ուր ստամանակեայ մարմին մը կ'ընտրուէր ստանձնելու Միացեալի վարչութիւնը։



**Գ Բ Ի Կ Ը Բ Ա Ր Ծ Բ Ա Ի Ն Ը**

Հայիւ երկու ամիս անցած՝ 1908 Աւրետեղերի վերջերք՝ նորեւախը Հիմնադիր ժողովը իր անդրանիկ նիստը գումարելով կ'ընտրէր իր Գիւմար ու վերակազմութեան առաջին Տնօրէն ժողովը (\*), որ Հիմնական Կանոնադրի

(\*) Առաջին Գիւմար կազմուած էր նիսեակ սննետէ՛

Տնօրէն	Միքայիլ Չեռոյ	Ա. Ասեւապետ
	Բոմբ. Յակոբոս Ճեմիլեան	Բ. Ասեւապետ
	Թոսով Մամիկեան	Ա. Ասեւապետ
	Կոմիսար Կորոյեան	Բ. Ասեւապետ
Իսկ Տնօրէն ժողովը՝		
Տնօրէն	Գ. Յ. Յովակիմեան	Ասեւապետ
	Արամ Հալաբեան	Ասեւապետ
	Արսաւես Գնարկեան	Գանձապետ
	Արամ Գարակոչեան	
	Արսաւես Հիւրմիզ	
	Լեւոն Բանիկեան	
	Սիմոն Բայալեան	

արամազրութեանց համաձայն կոչուած էր Ընկերութեան գործերը վարելու: Այդ օրէն Միացեալի գործունէութիւնը կանոնաւոր ու պաշտօնական հանգամանք կը ստանար:

Վերակազմութեան առաջին Տնօրէն Ժողովը անմիջապէս Պատրիարքարան կը դիմէր վերստնապալու համար Միացեալի զոյգերն ու արժէքաւոր իրերը, որոնք Ընկերութեան կործանումէն յետոյ աւանդ կը մնային հին: Շատ բան չէր մնացած, շատ բան չը կար

**Ա.Ռ.Ա.ՋԻՆ  
ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՐ**

ձեռք բերելու: Ամենակարեւոր զոյգը «Մայրենի Լեզու»ներու հրատարակութեան պահպանումը եղած էր, զոր կատարած էր Նպաստից Յանձնաժողովը և որ ամբողջութեամբ Միացեալին կը յանձնուէր կրկին:

Մասնաւոր ու գնահատելի ճիգ մը կ'ըլլար բաժանորդագրութեանց կազմակերպութեան, և ասոր նպատակու համար թաղերու մէջ մասնաճիւղեր կը կազմակերպուէին: Բաժանորդական հասոյթը տարեկան 600—700 տկիի կը հասնէր: Մասնաճիւղեր կը կազմուէին նաև, միեւնոյն ասան, Կարին, Տրապիզոն, Սաման, Չարչանցա, Սերաստիա, Չմիււնիա, Պանարբաս, Ռատութօ, Աղբիւնուպոլիս, Նիկոմիդիա և Ատարազար:

Նշխարատի մէջ ալ քանի մը պատուական հայեր նախաձեռնութիւնը կ'ունենային Օմանդակ Մասնաճիւղ մը կազմելու ամէնէն արդիւնաւոր օժանդակութիւնը ընելով Ընկերութեան ինքնարեւոյրար:

Աւանդական արարանդէսը վերստին կը տուէր և Ընկերութիւնը 600 տկիի զուտ հասոյթ մը կ'ունենար: Ի գնահատութիւն իրենց մատուցած նիւթական ու բարոյական օժանդակութեան, ՊԱՏՈՒՌՅ ԱՆԴՍՄ կ'ընտրուին Տեառք Յովհաննէս Իսաղուխան, Արտաշէս Ֆընարդիան և Վսեմ Բարթոլ Բաչա: Դժբաղդարար զաղթային հոսանքը Հայկական զաւառներու մէջ, տիրող սովը և Ասանայի Աղէտքը կուգային սակայն Հայութեան ուշադրութիւնը իրենց վրայ դարձնել պահ մը և Միացեալի Վարչութիւնը չէր կարող այլ եւս պնդել հանրային նիւթական աջակցութեան վրայ: Այս փոխանցման շրջանին մէջ Նպաստի գործին կազմակերպումը որքան ալ նիւար ըլլար, պէտք է գնահատել առաջին Տնօրէն Ժողովին թաղման աշխատութիւնը, այս աննպաստ հանգամանքներուն մէջ իր ցուցուցած քաղաքացիական արուեստներն ու յարատեւութեանը համար:

Այս առաջին շրջանին—1908 Յուլիս—1909 օգոստոս—կը բացուէին Մշոյ «Ներսէսեան» վարժարանը և Ալաշկերտի երկսեռ վարժարանը՝ այս վերջինը տարեկան որոշ զուտարով մը նպաստուորումով ըլլալով Ս. Էջմիածնէն, որպէս և Սալուսի նախակրթարանն ու Չէլիքուանի 5 վարժարանները որոնց մասնակարարութեանը կը յատկացուէր Կիլիկիոյ Հրկիզելոց Յանձնաժողովին մնացած զուտարին տարեկան տոկոսը, բարեգաղանակ երկու պատուական ազգայիններու՝ Բէլէկեան Տիգրան Խանի ու Տօքթ. Արքրչեանի կողմանէ սահմանուած

եւամեայ նպաստ մը: Գրեհական օժանդակութիւններ կ'ըլլային նաև Մշոյ Ս. Կարապետի ժառանգուորաց Գիւերթիկ Վարժարանին և ուրիշ գպրոցներու:



**Հ. Ռ. Յ. Ա. Ա.**  
(ԱՐՓԻՒՐ ԱՐՓԻՒՐԵԱՆ)

1909 Օգոստոս 5/18ին Հիմնադիր Ժողովը կը զուտարուէր և առաջին Տնօրէն Ժողովը իր հրատարականը կուտար ներկայացնելով իր հայիւնները: Ասիկ կը տեսնուէր թէ Ընկերութիւնը տարեկան ծառայողապէս 550 օտմ. տկիի պիւտածէ մը ու-

**ՆԵՆԲՈՐԻ  
ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՐ**

նեցած էր և Դրամատան ու Մնասկին մէջ պատրաստ զբամ ունէր 1500 օտմ. տկիի զուտար մը: Հիմնադիր Ժողովը կը խնդրէր Տնօրէն Ժողովէն ժամանակ մը եւս շարունակել արանելով զայն պէտք եղած տեղերը վարժարաններ բանալ Հայաստանի ու Կիլիկիոյ մէջ: Այս արամութեան համեմատ բացուեցան Կարնոյ շրջանակի մէջ 5 վարժարան, Բզիի դաշտին մէջ 6 վարժարան, Բայուսի դաշտին մէջ 4 վարժարան, Տարձնի մէջ 5 վարժարան, Կիլիկիոյ շրջանակի մէջ 19 վարժարան, համազուտար 36 վարժարան:

1909 Գեղեցիկեր 15/28ին կ'ընտրուէր ներկայ Տնօրէն Ժողովը, որ հետեւեալ կազմակերպութիւնն առաւ վերջնականապէս.

<b>Տնօրէն</b>	
Երուանդ Խորասան	Աննապէս
Աբաղ Հալանեան	Աննադայիր
Մինրոն Մուրաեան	Գաննապէս
Յովն. Յակոբեան	
Յարութիւն Ներկարեան	
Լեւոն Բանիկեան (*)	
Վանան Սուրենեան	



**ՄԿՐՏԻՉ ՍՍՐԸՅԱՆ**  
(Ընդն. Տնօրէն Միացեալի Վարժարանաց)

Մեզի չիմար այս յառաջարկման մէջ գնահատել ներկայ Տնօրէն Ժողովոյ երկամեայ գործունէութիւնը: Այն Տեղեկագիրը կը յանձնենք Հայոց

(\*) Տիար Լեւոն Բանիկեանի նախնական շիջանդի Ժողովը Տնօրէն Ժողովի անդամ ընտրեց Տիար Ա. Հարէնց, 1911 Յուլիս 5ին:

Միացեալի բոլոր բարեկամներուն ու ամէն մէկ ճշմարիտ Հայու քննութեան ու գնահատման:

Երբ առաջին Տնօրէն Ժողովը իր հրատարակներ կը մատուցանէր, իր վերջին տեղեկագրով կ'ըսէր. «Ընկերութիւնը առնուազն 3000 սակեայ սկսածէի մը կը կարօտի հասնելու համար, զէթ փոքր չափով մը, գաւառաց անմիջական պէտքերուն, և զժրագլուխներն մը կ'ըլլայ ստուգիլ եթէ ազգին կրթական մեծագոյն հաստատութիւնը իր նպատակին գործադրութեանը համար



**ՏԻՆԻՆ ՏԻՆՍԱՐ ԲԱՇՍ**

ՊԱՏՈՒՅՑ ԱՆԳՆԱՎ ընտրած 1887 ին

Ընկերութեան մասուցած բարոյական օժանդակութեանը համար

այսչափ մը գունճ չի կարենայ ծախակ, մանուանց որ զժրագլուխը նորանոր պէտքեր կը ստեղծուին ամէն օր և այն քաղաքը՝ որ հազարաւոր յիրալի կրթական ծախք մը ունէր երկէ՛ ծաղկոյ մը սրահելու համար անգամ օգնութեան կը կարօտի»: Մըքան հակայ յառաջդիմութիւն մը կայ այսօր: Հազի մէկ երկու տարի յետոյ այս օրումն Միացեալի գործին ընդարձակումն ու ծաւալումը կը ցուցնէ թէ Հայ ցեղը կարանցուցած չէ իր կենսունակութիւնը, կրօնով ու անձուէր զոհարելու մը:

1909—1940 զպրոցական շրջանին Միացեալ Ընկերութիւնը ունէր 56 վարժարան 5097 երկես աշակերտներով: Տարեկան հասոյթը 4200 օտ. սակի և ծախքը 3375 օտ. սակի (\*): Պահեստի գումար

**ՆԵՐԿԱՅ  
ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐԸ**

մէջ կը պաշտանավարէին 195 ուսուցիչ, ուսուցչուհի և պաշտօնեաներ: Գպրոցները տարածուած էին զլիսաւորարար Տարօնի, Սաւաւնի, Աղբրղի, Կարնոյ, Տէրօթի և Կիլիկիոյ շրջանակներու մէջ երկու ընդհանուր տեսչութեանց հարգութեան ներքեւ:

Ներկայ 1940—1944 զպրոցական շրջանը աւելի փայլուն զարգացման, ծաւալումի ու յատաշխմութեան շրջան մը եղաւ Միացեալի համար: Ամէն կողմ տիրող ընդհանուր համակրութիւնը, ձեռնառութիւնն ու վստահութիւնը այնքան լայն համեմատութիւններ առնել պիտի, որ Տնօրէն Խորհուրդը յանդգնութիւնն առնեցաւ վարժարաններու թիւը 85ի բարձրացնել և 1940—1944 զպրոցական շրջանին համար ստրեկան 5974,25 օտ. սակի պիւստէ մը ներկայացուց շինարար Ժողովին և անոր վաւերացնել սուսա զայն:

Տեղեկագրին մէջ առանձին առանձին դրոշմներով ու վիճակացոյցներով ցոյց տրուած է Միացեալ Ընկերութեանց արդի կրթական ու նիւթական կայսութիւնը: Ներկայ զպրոցական շրջանին Ընկերութիւնը ունէր 85 վարժարաններ, 72 մանկերու և 13 աղջկանց, որոնց մէջ կը պաշտանավարէին 2 ընդհ. տեսուչներ, 1 օգն. տեսուչ, 192 ուսուցիչ և ուսուցչուհի, և 58 անուս, 253 պաշտօնեայ ընդամենը: Աշակերտ 5605, աշակերտուհի 1208, Գումար 6813 ուսանողներ: Միայն այդ վարժարաններու համար ստրեկան ծախք եղած է 4300 օտ. սակի, Կեդրոնի Վարչական ծախք 778 սակի և գրեհական օժանդակութիւնը 500 սակի, ամսանային երկու Վարժարանացոցներու ծախքը 118 սակի, որով ընդհանուր գումարը կ'ընէ 5696 օտ. սակի:

Այս երկու ատրուան շրջանին Տնօրէն Ժողովը իր զլիսաւոր ուշադրութիւնը կեդրոնացուց առաջ կարեւորութիւն աւնեցող հետեւեալ կէտերուն վրայ.

- Ա. Գիւտնի կազմակերպութիւնը:
- Բ. Բաժանորդագրութեան և ուրիշ նի թական հասոյթներու կանոնադրումն ու ընդարձակումը:
- Գ. Կրթական ուղղութեանց ուսունասիրութիւնը՝ վարժարանները արդի գործնական աշխարհի մանկավարժական պահանջներուն համապատասխան գործելու համար:

(\*): Ռոպինեսի դպրոցներէն մաս մը դպրոցական սարեցանքին սկսումէն ամիսներ յետոյ բացուած էին, Տնօրէն Ժողովը կարողացած էր 533 օտ. սակի լաւելում մը ունենալ, սակայն երէ դպրոցները նիւզ օրջանին սկիզբը սկսած ըլլալին սարեկան ծախքը պիտի ըլլար 4551 օտ. սակի:

- Դ. Կրթական ձեռնարկներու կեդրոնացումը:
- Ե. Ամսանային վարժարաններու բացումը:
- Զ. Վարժարանացոցի մը բացումը:
- Է. Համերայն գործակցութիւն Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան հետ:
- Ը. Անձեւութիւնի գումարի մը հաստատումը:

Այս բոլորի մասին թողով ոչ ոք խօսիլ, յատկապէս փակել տալ կ'արժէ քանի մը խօսքով պարզել Միացեալի ընդգրկած արդի կրթական ուղղութիւնն ու դրութիւնը: Եթէ Միացեալ Ընկերութիւնը իր ներկայ ընդարձակ կազմով և 6000 սակի պիւստէով նոր ու արդիական մանկավարժական ուղղութիւն մը չընդգրկեր, այն ատեն գործազարար նոր բան մը աւելցուցած չէինք ըլլար ազգային կրթական գործին, այն ատեն նոր ու կազմակերպուած ուժերու ու գրամի վստահութիւն պիտի ըլլար:

**ՆԵՐԿԱՅ  
ՈՒՂՎՈՒԹՅՈՒՆ**

Բայց Միացեալը նոր քայլ մը առնել սկսաւ իր վերակազմութեան օրէն, իր ծրագրին ու ուղղութիւնը յարմարեցնելով արդիական դաստիարակութեան հասկացողութեանց ու դրութեանց: Մեր մէջ դաստիարակութիւն ըսելով կը հասկնալ իր իմացական կրթութիւնը, այսինքն մանուկներուն կարելի եղածին չափ շատ ու բազմազան գիտական ծանօթութիւններ սոյ դասագրքերու ու դասատուներու միջոցաւ: Միջնադարեան կրթական ուղղութեան ժառանգութիւնն է այս, որ դեռ բոլորովին անհետացած չէ քաղաքակիրթ երկիրներէ սնգամ:

Միայն ամբարուած փորձառութեանց դասաւորուած ծանօթութիւններ սոյը մանուկի մը, կրթիկ ու զարգացնել անոր յիշողութիւնը և Ընկերութեան մէջ մտցնել զայն որպէս «զարգացած մարդ», զանց առնելով կրթիկ անոր հոգեկան ու բարոյական կարողութիւնները, անտեսելով ազգին մէջ զնկ Գեղեցիկն, Բարբին ու ճշմարտին իտէպը, զօրաւոր կամքի տիրացումը, և մէկ խօսքով անարարտ նկարագրի կազմաւորումը, կը նշանակէ պատրաստել մարդիկ որոնք արատազրութեամբ, գործունէութեամբ բեղուն կեանք մը ապրելու անընդունակ են, և իրենց ամբարած ծանօթութիւններու չնայելի դիւրութեամբ կարող են մակարոյծներ դասնայ հասարակութեան մը սրտին մէջ, ծծելով անոր արիւնը, կենսունակութիւնը, կեանքը, ու առաջնորդելով զայն դէպի բարոյական անկում ու նիւթական կործանում:

Դաստիարակչական դրութիւնը, ուղղութիւնը՝ զոր Հայոց Միացեալ Ընկերութիւնը իւրացուցած է՝ յեղաշրջում ու յեղափոխութիւն մը պիտի ըլլայ մեր ազգային կրթական գործին մէջ:

Միացեալը իր գպրոցներու նպատակ ընտրած է ազան պատրաստել կեանքի համար, սոյ անոր ֆիզիքական, իմացական ու հոգեկան դաստիարակութիւն մը՝ յարմար գործնելով զինքը արդի ճարտարարուեստական աշխարհի

բարդ գործառնութեանց պայքարին: Տղան ո՛չ միայն ծանօթութիւններու պաշարով մը պէտք է որ դուրս կէլ գործողէն, այլ և պէտք է որ ան ունենայ՝ առողջ ու զարգացած կազմուած մը, զորուսը միանունքներ, անյողզող կամք մը, անպարտելի բարոյական, գեղեցիկ հոգի մը և ազնիւ նկարագիր մը: Ա՛յ միայն մշակուած գլուխ մը՝ այլ և մշակուած սիրտ մը ու ճարտար ձեռքեր:



**ՅՈՒՂԱՆՆԷՍ ՍՊԱՐԹՍԵԱՆ**  
ՊԱՏՈՒՅՑ ԱՆՉԱՄ ԻՆՏՐՈՒՄ ԻՆՏՐՈՒՄ 1886 ին  
Ընկերութեան ինքաւս քրտ իսակին համար

Բարերազգայնաբ Միացեալի վարժարաններու գրեթէ ամբողջութիւնը կը գտնուի գիւղերու մէջ: Հոն, գիւղին ազատ ու արձակ միջնորդութիւն մէջ, ազան միջավայրն ունի գոհացնելու իր բոլոր բնագոյական պահանջները և թող ստալու որ բնութեան հպարտական օրէնքով աճին ու զարգանան իր բոլոր միանունքները՝ որոնք ազգակներն են կամքի կազմաւորման:

Գարտչական ազատ խաղին ու մարնամարզին հետ ձեռակամ մարզանքի (Manuel training) դասերը առաջին տարիէն սկսեալ պարտաւարի են Միացեալի վարժարաններու մէջ:

Այն առարկաները՝ զոր աշակերտները կը շինեն գպրոցին մէջ՝ նիւթական արվէք մը չունին, բայց ձեռական այն մարզանքը՝ զոր մանուկը օրը օրին առարկանաբար կը ստանայ՝ կը պատրաստէ զինք ճարտարարուեստի, կեանքի ու բնկերութեան մէջ ապրելու յարմարութիւն:

Մեր հայրենիքը ճարտարարուեստի երկիր մը չէ, այլ ուղղութեամբ դեռ չստ ետ մնացած ենք քաղաքակիրթ երկիրներէն, սակայն Մայր Բնութիւնը հարուստ հոյ մը պարգևած է մեզ, առատ **ԳԻՒՂԱՏՆՏԵԱՍԿԱՆ**, չուրով ու բազմազան բուսականութեամբ: Երկրագործութեան ու գիւղատնտեսութեան սքանչելի պատեհութիւններ կան այս երկրին մէջ: Ժողովուրդը, գէթ մարտարդի հոծ զանգուածը, մարդավայել սպորտաօր միակ ապաւէն մ'ունի, այն է երկրագործութիւնը:

Այսօր ճարտար մը մեր երկրին մէկ ծայրէն միւսը պիտի տեսնէ որ Հայ գիւղացին կը գործածէ նոյն խոփն ու արդը, գութանն ու մածը, զոր մեր նախնիքները կը գործածէին ասկէ հարիւրասը տարիներ առաջ: Եւրոպայի ու Ամերիկայի մէջ երկրագործութիւնն ու գիւղատնտեսութիւնը հսկայաբայ յոտաջգիտած են. գիւղացին վիճակը անհամեմատ բարձր ու նախանձելի է քան իր գտնակարգին պատկանող այն անհասը, որ ճարտարարուեստի կեդրոններուն մէջ գործուսը դարձած է:

Պիտի առարկուի թէ փոխազգութեան միջոցները այնքան ազգաս են մեր երկրին մէջ որ գիւղատնտեսական զարգացման չնորհիւ երկրագործական սրտատրտութեանց յաւելումը չստ նուազ չարիտ մը պիտի կարենայ բարձրացնել գիւղացին անտեսական վիճակը:

Բայց բնութեանք թէ կը բարձրացնէ: Եւ Միացեալ Ընկերութիւնը, կըր կը պնդէ թէ պէտք է տարածել մեր երկրին մէջ գիւղատնտեսութիւնը. ըսել չուղեր մէկ օրէն միւսը մեր դաշտերը Քաղիֆորնիայի և Եգիպտոսի վերածել, երկրագործական բարձրագոյն մեթոտներ մտցնել նոն, մեքենաներ զրկել: Ա՛յ, Աւ ո՛չ այ երկրագործական բարձրագոյն վարժարաններ հաստատելով՝ զարգացած երկրագործներ պատրաստել: Եւ արդէն երկրագործական համապարսններէ չբժանաւարաններ չեն որ կը կազմեն ս՛ և է բարձրագոյն քաղաքակիրթութեան անգամ հասած երկրի մը գիւղացիները, այլ սրբը մարդիկ, նախակիրթութիւն կամ նուազ կրթութիւն ստացած մարդիկ:

Միացեալի վարժարաններու աշակերտները՝ գրեթէ ամբողջութեամբ՝ գիւղացիներ են, և անոնք վաղը գործ պիտի ունենան հոյի հետ, արտի

հետ, դաշտի հետ, բոցի հետ: Ուրեմն առաջին օրէն որ ազան վարժարան կը մանէ, այդ օրէն պէտք է ստանայ այն ծանօթութիւնները, այն գիտելիքները, որոնց վաղը անհրաժեշտօրէն պէտք պիտի ունենայ: Պէտք է որ ան իր հօրմէն որոշ աստիճանով մը աւելի բարձր հասկացողութիւն ունենայ հողա-մշակութեան մասին: Եթէ իր հայրը սասը կը շահէր, ինքը պէտք է քսան շահի, որպէս զի յաջող սերունդը կարողանայ պատրաստ գանուել, երբ երկաթուղիները սկսին շարժել մեր երկրին մէկ ծայրէն միւսը: Եթէ այն օրը անպատրաստ գանուինք, քաղաքակրթութեան հասանքը պիտի գայ մեզ գլխի մասին:

Պէտք է որ գիւղացի ազան սիրէ իր հայրենի հողը, փարի անօր և միանգամ ընդ միշտ քմայնէ թէ ինքը նոյնքան բարձր անհասականութիւն մըն է և նոյնքան վե՛՛շ ու կորուստ ծառայութիւն մը կը մատուցանէ ընկերութեան, որքան քարղիչը, խմբակը, փաստարանը, բժիշկը, ուսուցիչը, դատարարը, վաճառականը և ուրիշ ամէն օգտակար սք:

Միացեալի նախակրթական գիւղատնտեսական դասընթացքներն ու պարտիստներն կրց մշակութեան պարտէզները փոքր բաներ են, պարզ բաներ են, սակայն այդ նախնական պարզ ու փոքր բաներն են որ պիտի զարգանան, պիտի մեծանան և իրենց հետ զարգացնեն, մեծցնեն ու կատարելագործեն ժողովուրդը:

Միացեալը իր վարժարաններով քաղաքակրթութեան սահմիրան կը հանդիսանայ դաւաճի մէջ: Ամառնային վարժարաններ, գիշերային դասեր և ընդհանուր դասախօսութիւններ թէ ազգային **ԳԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ** և թէ պետական յեզուներով կոչուած են բարերար ու փրկարար դեր մը կատարել երկրին մէջ: Այս ձեւերովները այսօր փախ են, վաղը կրնան զարգանայ ու տարածուիլ: Յուսեալս ըլլալու տեղի չի կայ:

Երկրի գանազան ցեղերը, գանազան տարրեր իրարու ծանօթացնել, իրարու մտակցնել ամենաազնիւ պարտականութիւնն է զոր Միացեալ Ընկերութիւնը ստանձնած է: Ո՛չ միայն վարժարաններու մէջ մեծ ուժ կը արուի պետական լեզուին՝ այլ և պարտիստներն գումարներ յայտնուած են ամենուրեք: Գիւղատնտեսական ու է ձեւերով՝ որ կը նպաստէ երկրին բարգաւաճմանը՝ միայն մէկ ցեղի համար չէ, ամէնքը անխտիր կ'օգտուին անկից: Այս փոխադարձ օգտակարութեան ու օգնութեան ոգին զօրաւոր կերպով կը միացնէ կղզայութեան, համերաշխութեան ու զրացիութեան նուիրական կապերը:

Ամէն անոնք որ երկրի քաղաքակրթութեան ու զարգացման նուիրուած

են՝ պէտք չէ որ անտես ընեն համերաշխութեան պայմանը: Երբ մէկը ետ կը մնայ միւսէն, զժրաշղթութեան նոր դուռ մը կը բացուի ամբողջութեան համար: Քիչ մ'աւելի զոնողութիւն ու անձնակրթութիւն ստանձնենք հիմա, ու պարզային վտառ՝ ըլլանք թէ ետ պիտի ստանանք մեր աշխատութեանց վարձքը, ու նոր ցուեր ու դուեր չպիտի գան խանդարելու մեր խաղաղ կեանքը:



Սակայն ո՛վ պիտի իրագործէ այս կրթական նորագոյն բայց բարդ ու նուրբ գրութիւնը: Ո՛վ: Ուսուցիչ չի կայ մեր մէջ կամ եղածը շատ քիչ է ընդհանուր տամար: Ո՛վ որ կեանքի ուրիշ գործերու մէջ յոգնած է, ո՛վ որ ապկար եղած է ուրիշ ծառայութիւններ մատուցանելու իր անպարզ գին մէջ, վազած եկած զպարտիստ գանէն ներս աշխուժ է: Մեր ժողովուրդը զեռ անկարող է դատել ու գնահատել իրական ուժը զպարտիստ մէջ, և ինամիական բարեգործական և կամ կուսակցական նկատուիներ պահած ու պահպանած են ամէն տեսակի ապրկարութիւնները:

Միացեալը այս ահագին դժուարութեանը յարկեցաւ առաջին օրէն իսկ և թէև բարերազրութիւն մըն էր որ Միացեալը իր հին ամերիկացիներ իր արամազրութեան ներքեւ որոնք բաւական սաստար մ'եղան իրեն այս դժուարութեան գէ՛մ կուսկուտ, բայց անոնք այ չէին կրնար զոնացնել զինք այս նոր ուղիւնքութեան մէջ:

Տնօրէն ժողովը այս պակասը մատամբ դարձնելու համար հաստատեց ամառնային դասընթացքներ իր ուսուցիչներուն գիւլութիւն մը ընծայելու:

համար որ անոնք մանկավարժական և գիւղատնտեսական զարգացում մը ձեռք բերեն: Առաջին Ամառնային Վարժարանները հային Վարժարանները բացուեցաւ Կարին քաղաքի մէջ, 1910ի ամբան: Ներկայ տարուան ընթացքին աւելի լայն ծրագրով մը երկու միայն ամառնային դասընթացքներ հաստատուեցան մին Քղիի և միւսը Մէրսինի մէջ, երեք տարուան շրջանով մը: Ուսուցիչ-ուսանողներուն հայթայթուեցաւ Ընկերութեան հաշուէն անոնց ապրուստը և ձանապարհածախար: Ամառնային դասընթացքներու արդիւնքը շուտփելի աչքի կ'իջնայ, և այս ուղիւնք պիտի շարունակուի ապագային:

Սակայն միայն Վարժարանները մը պահանջը միշտ մտաւեւեւում մը եղած էր Ընկերութեան:

Ուսկից կրնար գանել կարող ու ձեռներեց ուսուցիչներ վարժարանները իր ծրագրին համաձայն վարելու համար: Արտասահմանէն բերուած քանի մը համարանամականներ, որոնք գաւառ գրկուած են, վարժարանները վարելու համար շատ քիչ են համեմատաբար պահանջին:

Զարմանալի չէ ուրեմն որ ամենախանդավառ ուղեւորութիւն մը ստեղծուեցաւ ամէն կողմ, երբ Հայոց Միացեալ Ընկերութիւնը համերաշխութեան

ու գործակցութեան ձևաք երկնացուց ուրիշ պատուական քայր Ընկերութեան մը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեանը: Աւ այդ համերաշխութեան ամենաուղջ դասակը եղաւ Վանի վարժապետանոցը:

1911 Յունվար ամսին Տնօրէն Ժողովի անդամներէն Տիար Յովհաննէս Յակոբեան իր Ընկերութեան յապոր պատուիրակ եղիպատս այցելելով հին Հ. Բ. Ընդհ. Միութեան Վարիշ Մարմնոյն ներկայացուց Վանի մէջ վարժապետանոցի մը հաստատութեան ծրագիր մը, որ նոյնութեամբ ընդունուեցաւ: Այս զեղեցիկ ընդունելութիւնը նոր արդարացի մըն էր այդ պատուական ընկերութեան աշխարհը կրթութեան հանդէպ սասձած անձնուէր ու անկեղծ փայտքներուն:

Միեւնոյն ատեն Հ. Բ. Ընդհ. Միութիւնը Չոր-Մարդուանի Քէլէկեան Որբանոց-Արհեստանոցի մասակարարութիւնն ու վարչութիւնը յանձնեց Ընկերութեանս: Այս հաստատութիւնը, որ կոչուած է կարեւոր պահես մը լրացնել կիրիկիոց ազգային շրջանակին մէջ, հիմնուած է բարիգարեակ Տիար Տիգրան իսն Քէլէկեանի նուիրատուութեամբ: Տնօրէն Ժողովս արդէն տեղւոյն մրայ ուսումնարարութիւններ կատարած է իր տեսչին միջոցաւ և ձեռնարկած ծրագրի պատրաստութեան: Որբանոց-Արհեստանոցը պիտի բացուի յասօջիկայ զպրտցական շրջանին 1100 օտմ. սակի պիւտձէով մը և պիտի ընդունուին միայն հարիւր 10—13 տարեկան որբեր:

**ՔԵԼԷԿԵԱՆ  
ՈՐԲԱՆՈՑ-ԱՐՀԵՍՏԱՆՈՑ**

Երկու քայր Ընկերութեանց համերաշխ գործակցութեան հետեւանքն եղաւ նաև յանուամէկ դիւղական նախակրթարաններու բացումը այնպիսի վայրերու մէջ, ուր ամէնէն սակի պահանջ կար:

**Հ. Բ. ՄԻՌՈՒԹԵԱՆ, Հ. Բ. Ընդհ. Միութիւնը իր կազմութեանէն ի վեր  
ԳԻՒՂԱՆՈՎ, կը ստասրէր կրթական ձեռնարկներու՝ միանուազ  
ՆԱՍԱՆԿՐԹԱՐԿԱՆՆԵՐԸ** նպաստներ յատկացնելով զանազան վայրերու, ստանց իրական հակակշիւի: Տնօրէն Ժողովս գրաւար և բերանացի դիտումներով առաջարկեց այդ պատուական Միութեան Վարիշ Մարմնոյն կրթական ձեռնարկները կեդրանացնելու Ընկերութեանս ձևաք, և ոչս առթիւ ծրագիր մը ներկայացուց ապագայ գործակցութեան:

Հ. Բ. Ընդհ. Միութեան Վարիշ Մարմնը համաձայնեցաւ վերջնականապէս որ այսուհետեւ իր կրթական բոլոր ձեռնարկները յանձնուին Միացեալ Ընկերութեանց: Յատկացուած գումարները պիտի զործածուին յանուն և ի հաշիւ Հ. Բ. Ընդհ. Միութեան բացումը կամ բացուելիք վարժարաններուն որոնք պիտի գտնուին Ընկերութեանս մասակարարութեան ու վարչութեան ներքեւ: 1910-1911 զպրտցական շրջանին բացուեցան 21 վարժարանները որոնցմէ 16ը Ազգրդի, Ալիւանի ու Պէլերիկի շրջանակներուն և 5ը կիրիկիոց

մէջ: Ասոնց համար վճարուեցաւ տարեկան 320 սնդդ. սակի (\*): Տնօրէն Ժողովս կը յուսայ որ այս վարժարաններու թիւը սակի պիտի ընդարձակուի ու տարածուի այլ շրջանակներու մէջ, ինչպէս որ արդէն նոր բանակցութիւններն ու համաձայնութիւնները այդ յայտը կը ներշնչեն:



Յ. Ա. ՊԵՏԻ. ՅԵ. ՅԵ. ԵՒ. ՅԵ. ԶԷ. ԵՒ. ՅԵ.  
(Մին Ընկերութեան Հիմնադիր Ժողովի անդամներէն)

Միացեալ Ընկերութեան կեանական վիճակի որբ որին զարդացումը շատ քաջայերիշ եղած է: Տեղեկագրիս մէջ հրատարակուած հաշուեկէտը կը ցուցնէ որ առաջին տարուան 550 օտմ. սակի պիւտձէն կը բրբրդ տարին մասուտրապէս 6000 օտմ. սակի բարձրացած է: Ամերիկայի մէջ կազմուած կարգ մը «Ուսումնասիրաց» Ընկերութիւնները Ընկերութեանս հետ կապուեցան, և անոնց ընձեռած տարեկան կրթական նպաստները Ընկերութեանս միջոցաւ յատկացուեցան իրենց նպատակներուն: Նոր Աշխարհի մէջ ցրուած

(\*) Այս տեղեկագիրը մամուլին յանձնուելու պահուն Հ. Բ. Ընդհ. Միութիւնը Տնօրէն Ժողովիս ուղղուած նամակով մը այս գումարը կը բարձրացնէ 420 սակի:

մեր հեռավոր հայրենակիցներուն իրենց ընդառաժի հանդէպ ցուցուցած կրթական եռանդը ամէն գովեստի ու քաջակերութեան արժանի է :

Մասնաճիւղերու կազմութեան գործը կարելի չեղաւ մեր փառաքանաց համաձայն ընդգայնել: Տնօրէն ժողովը կարելիութիւն չունեցաւ իր ներկայացուցիչները գրկելու հայտնակ վարչերը, ծանօթացնելու Ընկերութեանս գործը և հաւաքելու հեռարձակ հայրենակիցները կրթական աւագ կարեւորութիւն ունեցող գործին չուրջը: 1911 Յունուարին Տնօրէն ժողովի անդամներէն Տիար Յովհաննէս Յակոբեան իր Եղիպատս այցելութեան ատիւ Գահիրէի Հ. Բ. Ընդհ. Միութեան Տեղական Մասնաժողովի հետ համաձայնութեան կեաւ որ անոնք ներկայացնեն Միացեալ Ընկերութիւնը իրենց քաղաքին մէջ, իսկ Ալեքսանդրիոյ մէջ Վսեմ. Բարխիտ ըաշայեի նախագահութեամբ վերակազմեց Միացեալի Մասնաճիւղը: Եռօնպէս Տնօրէն ժողովի անունաբեա Տիար Երուանդ Խորասան Զմբիւնիւս այցելելով միեւնոյն ասան վերակազմեց նոյն տեղի Մասնաճիւղը: Ասոյն Մասնաճիւղերը իրենց վերակազմութենէն ի վեր գնահատելի արդիւնք մը առած են և Տնօրէն ժողովս մեծ հաւատք ունի անոնց ապագայ գործունէութեան ծառայման վրայ:

Հայկ Տիրացուեան, <i>Գ. Մաղկոց</i>	<b>ՔԷՊՈՒՍԻԷ</b>
Ասատուր Տեհեան, <i>Գ. Մաղկոց</i>	Ն. Ն. Նալբանդեան
Եղեկիկ Ա. Մովսէսեան	<b>ՄԻԽԱԼ</b>
<b>ԿԱՊԱՆ</b>	Կարապետ Ասանեան
Վարդավառ Փրանկիլիւսեան, <i>Ա. Ուսուց.</i>	
Ղազար Սերոբեան	
<b>ՃԻՆՈՒՉ</b>	
Սեպիան Տ. Ղեւոնդեան, <i>Ա. Ուսուցիչ</i>	
Մարտիրոս Զինիկեօղեան	
<b>ՏԱՇ-ՕԼՈՒԳ</b>	
Կարապետ Պսակեան	



## ՈՒՍՄԱՆՑ ԾՐԱԳԻՐ

### ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Սոյն ծրագիրը պատաստուած է 1909 թուոյ սկիզբները Գիւղասնեստութեան ու Մանկավարժութեան մասնագէտներէ կազմուած յասուկ Յանձնախմբէ մը որուն կ'անդամակցէր Տնօրէն Ժողովոյ կողմանէ Տեառ Լեւոն Բանիկեան: Յանձնախմբին անդամներն էին .

<b>Տեառք</b>	
ԳԱԼՈՒՍՏ ՄԱԼԱԹԵԱՆ	ՀԱՅԿԱԶՆ ՊԷԿԵԱՆ
ԳԷՈՐԳ ԹՈՐԳՈՍԵԱՆ	ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՆԳԻԼԵԱՆ
ՀԱՅԿ ԽԾՃԱՍԱՐԵԱՆ	ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՌԱԻԵԱՆ
	ՎԱՀԱՆ ՍՈՒՐԷՆԵԱՆ



Գ Ի Ի Վ Ա Կ Ա Ն    Ն Ա Խ Ա Կ Ի Թ Ա Ր Ա Ն  
(7-13 տարեկան տղայոց համար)

Վեց տարեջրջանով . Ա . Բ . Գ . Դ . չրջանները հաշուուած են Յական ամիս , իսկ Ե . և Զ . չրջանները 7ական ամիս :  
Տղան 7 տարեկան կը մտնէ դպրոց և 13 տարեկանին կ'աւարտէ չրջանը :

### Ա . Մ Ա Ր Մ Ն Ա Մ Ա Ր Չ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՇՐՋԱՆ

Ծանօթ . — Կատարելի ամէն կարգի մարզանքներուն մէջ նկատի ունենալ տղոց տարիքը , ֆիզիքական ուժը , և ըստ այնմ կանոնաւորել մարզանքներուն տեսողութիւնը , որպէս զի չափէն աւելի չի յոգնին տղաքը :

1. Երգախառն քայուածք , չրջապար և խաղ .
2. Կարգ ըլլալ և քալիլ ոտից մասններուն վրայ .
3. Յատկրտել .

- 4. Թևեքումուզլիսով պարզ մարզանքներ՝ կեցած տեղը և քաղաածքի մէջ .
- 5. Նմանութիւնը ընել այլեւայլ աշխատութեանց (չոր օրինակ՝ սղոցել, փորել, անիւ դարձունել, փայտ կտրել, գամ գամել, երկաթ ձեծել, ևն) .
- 6. Զանազան մարմնակրթական խաղեր՝ ընտրութիւն ընելով տեղա- կաններէն :

ԵՐԿՐՈՐԿ ՏԱՐԵՇՐԶԱՆ

- 1. Կարգ կազմել և ցրուել .
- 2. Մէկէ աւելի կարգերու վրայ շարուիլ .
- 3. Համաչափ քայլափոխով ընթացք .
- 4. Մրցելով քայլի՝ չըջանակածև, պարուբաձև և ոլորապտոյտ .
- 5. Կեցած տեղը վազելու շարժումներ կատարել, նոյն շարժումները կա- տարել փոքրաթիւ խումբերով .
- 6. Յատկրտել և ցատկել .
- 7. Անդամներու և իրանի պարզ մարզանքներ .
- 8. Զանազան աշխատութեանց նմանութիւնը ընել, մասնաւորաբար տե- ղական աշխատութիւններէն .
- 9. Հաստատուն ձողէ մը կամ ճիւղէ մը կախուելու մարզանքներ՝ ոտքը գետինը դպչելու պայմանաւ .
- 10. Զանազան խաղեր :

ԵՐԿՐՈՐԿ ՏԱՐԵՇՐԶԱՆ

- 1. Կարգ կազմել և ցրուել .
- 2. Կարգին մէջ նշանակել զոյգերն ու անզոյգները .
- 3. Զոյգ կազմել և քայլի՝ միաչար գծով .
- 4. Դէպի աջ կամ դէպի ձախ, դէպ առաջ կամ դէպ ետև քայլափոխ՝ քայլելու կամ վազելու մէջ . համաչափ վազք .
- 5. Յատկրտել և ցատկել .
- 6. Կրկնութիւն կախման նախընթաց մարզանքներուն և ազատ մար- ղանքներ կախման .
- 7. Զանազան խաղեր ըստ օրին մէջ կամ յարկածածուկ տեղույ մէջ :

ԶՈՐԻՈՐԿ ՏԱՐԵՇՐԶԱՆ

- 1. Կարգ ըլլալ և ցրուիլ .
- 2. Կարգին մէջ նշանակել զոյգերն ու անզոյգները .
- 3. Մէկ գծի վրայ կարգ կենալու վարժութիւն .
- 4. Զոյգ կազմել ու քայլի՝ միաչար գծով .

- 5. Հեռաւորութիւն աննել .
- 6. Կարգի մէջ տեղափոխութիւններ կատարելու վարժութիւն .
- 7. Արագ քայլընթացք .
- 8. Սրունքներու, թեւերու և իրանի մարզանք .
- 9. Նախապարաստական մարզանք ոտուամբ, ոտուամ .
- 10. Զանազան խաղեր ըստ օրին մէջ կամ յարկածածուկ տեղույ մէջ .
- 11. Մազցելու վարժութիւն :

ՀԻՆԳԵՐՈՐԿ ՏԱՐԵՇՐԶԱՆ

- 1. Կրկնութիւն նախորդ տարույ մարզանքներուն .
- 2. Զուգորդութիւն՝ թեւերով, սրունքներով և իրանով կատարելի մար- ղանքներու .
- 3. Տեղական պարերու վարժութիւնք :

ՎԵՑԵՐՈՐԿ ՏԱՐԵՇՐԶԱՆ

- 1. Կրկնութիւն նախորդ տարույ մարզանքներուն .
- 2. Ոտուամբ ըստ երկայնութեան . ըստ բարձրութեան՝ ոտքերը քովէ քով, և չափաւոր ոտուամբ ըստ խորութեան .
- 3. Տեղական պարերու վարժութիւնք :

Բ. Ձ Ե Ռ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ո Ի Ի Ի Ն

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՇՐԶԱՆ

- 1. Ուլունք շարել .
- 2. Հաստ թուղթը ծակիկի և թիւով բանիլ վրան .
- 3. Ոտայնանիկելու վարժութիւնք ծառի ոտերով, ծղօաներով և փայտի շերտերով (լրբ նախապարաստական վարժութիւն կողովապորժութեան) .
- 4. Մալլում թուղթերով .
- 5. Պարտիզամշակութիւն :

Բ. ՏԱՐԵՇՐԶԱՆ

- 1. Ուլունք շարել .
- 2. Հաստ թուղթի և խոչորահիւս կտաւի վրայ ասեղով բանիլ .

- 3. Ոստայնանկելու վարժութիւն .
- 4. Ծալում և կտրատում թղթերով .
- 5. Կազակարում կաւով կամ մնղրամամով :

Գ. ՏԱՐԵՐՁԱՆ

- 1. Երկրաչափական մակերևոյթներ շինել արամադրելի յարմար նիւթե-րով (քառակուսի, ուղղանկիւն, եռանկիւն, տրապէզ, բոլորակ) .
- 2. Վերոյիշեալ ձևերը կիրարկել կեանքի սովորական պէտքերուն (գիրքի և տարակի կողք շինել, սեղանի երեսներ, ակոսակի նստարաններ, անուի ձե-ւեր, և չն) .
- 3. Թուղթի երիզներով աշխատութիւնք. երկայնութիւն մը բաժնել 2, 4, 8 հաւասար մասերու, իրարու հետ բազլատել կողմերուն, առանցքներուն և անկիւնագիծերուն երկայնութիւնները քառակուսի և ուղղանկիւն ձևերու մէջ :
- 4. Ոստայնանկում :

Դ. ՏԱՐԵՐՁԱՆ

- 1. Ծալումի, կտրատումի և սորնձումի վարժութիւններ .
- 2. Նամակի պահարան, պիտակ, քսակ շինել .
- 3. Բազմանկիւնային մակերևոյթներ շինել, ձևել և չափել .
- 4. Տնկարանի գործիքներուն և տունկերուն վրայ ծանօթութիւն .
- 5. Բազմացումի եղանակներ .— Աղբրի, չաչ և տեղափոխում .
- 6. Գեղանկ մաքուր պահել, մղի խոտերը քաղել, հողը փոցիկել :

Ե. ՏԱՐԵՐՁԱՆ

- 1. Պաւաքարտով կամ թուղթով շինել ծաղկի թերթերու և տերևի զա-նազան ձևեր, ձուածեւ, թերատածեւ, պարուբածեւ .
- 2. Կաւով կամ գածով ձևակերպում գործածական առարկաներու (պտուկ, կճիճ, բլուկ, սափոր, սինակ, սկուտեղ, աշտանակ, կանթիկ, և չն) .
- 3. Կաւով կամ գածով շինել երկրաչափական հաստատուններ՝ տուեալ չափերով (խորանարդ, զուգահեռան, պրիմակ, զլան, բուրգ, կոն և գունա) .
- 4. Կուտերու և կորիզների խաւ ի խաւ անկում, խորահերկ, ցան, հող և պարարտութիւնք .— Արմատանիլ ընել և անկել .— Պատուաստ, պատուաստելէ և տք խնամք .— Պտուկները կտրել, ճիւղերը պատին կապել .— Գոտել, հականկխում :

Զ. ՏԱՐԵՐՁԱՆ

Կրկնութիւն նախընթաց տարւոյ նիւթերուն :

Գ. Գ Ծ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. ՏԱՐԵՐՁԱՆ

- 1. Նախապատրաստութիւն զաւազանիկներու, կաւարներու և օղակնե-րու միջոցաւ .
- 2. Քառանկիւնագիծ կամ կէտանիլ թղթի վրայ, գրատախտակի, քարե-տախտակի վրայ՝ առանց գծագրական գործիքի գծադրութիւն .
- 3. Գործածական շատ պարզ առարկաներու գծադրութիւն՝ ուսուցչին ձեռքով գրատախտակին վրայ շինուած ուրուագծին հետևողութեամբ .
- 4. Ծալումէ առաջ եկած ձևերու գծադրութիւն .
- 5. Յիշողութեամբ գծադրութիւն .
- 6. Ազատ հնարողութեամբ գծադրութիւն :

Բ. ՏԱՐԵՐՁԱՆ

- 1. Առանց գծագրական գործիքի, գրատախտակին վրայ և կէտանիլ կամ քառանկիւնագիծ թղթի վրայ գծադրութիւն .
- 2. Կինդանիկներու, տերևներու, պտուղներու և գործածական առար-կաներու ուրուագիծ .
- 3. Ծալումէ և կտրատումէ յառաջ եկած ձևերու գծադրում .
- 4. Ուղիղ գծերու իրարու հետ զուգորդութեամբ ձևերու յորինում . կոր գծերու իրարու հետ զուգորդութեամբ ձևերու յորինում .
- Ուղիղ և կոր գծերու իրարու հետ զուգորդութեամբ ձևերու յորինում .
- 5. Յիշողութեամբ գծադրութիւն :

Գ. ՏԱՐԵՐՁԱՆ

- 1. Իրագիտութեան և տեղական աշխարհագրութեան ընծայած նիւթոց գծադրութիւն՝ շատ պարզ ուրուագծի մը հետևողութեամբ .
- 2. Ուղղաձիգ, հորիզոնական և շեղ գիծեր քաշել .
- 3. Գիծ մը բաժնել 2, 4, 8 հաւասար մասերու .
- 4. Տարրական զարգանկարի վարժութիւններ .
- 5. Իրազնական ծանօթութիւնք քառակուսիի և ուղղանկիւնի վրայ .
- 6. Առանց առանցքներուն և անկիւնագիծերուն միջոցաւ առաջ եկած բա-ժանումներուն իրարու հետ բազլատութիւնը .
- 7. Իրազնական ծանօթութիւնք եռանկիւնի (իր տեսակներով) և զու-գաչափ արապէզի վրայ .

- 8. Գործածական առարկաներու գծագրութիւնն՝ ուղղածից հասածի համեմատ միայն, իրր կիրարկութիւնն ստացուած ծանօթութեանց .
- 9. Մէղրէն աւելի պղտիկ, և որոշ թուով աչսիմէզը պարունակող երկայնութիւններ հաշուելու վարժութիւնք .
- 10. Յիշողութեամբ գծագրութիւն :

Գ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

- 1. Ուղիղ անկիւն, սուր անկիւն և բութ անկիւն .
- 2. Ուղղահայեացներ և զուգահեռականներ .
- 3. Դիժերը բաժնել 2, 4, 8, 16. — 3, 6, 12. — 5, 10 հաւասար մասերու .
- 4. Հաւասարակողմ եռանկիւն .
- 5. Զուգահեռագիծ . Տարանկիւն .
- 6. Քառակուսի ներքակ ութանկիւն . — Երջանակի ներքակ կանոնաւոր բազմանկիւններ .
- 7. Տղուն ծանօթ ձևերուն կիրառումը՝ այլեւայլ առարկաներու յատակադիր և ուղղածից հասածը միայն գծելու համար .
- 8. Աստղակերպ բազմանկիւններ, վարդաձևեր և ծաղիկներ .
- 9. Զարդանկարի տարրական վարժութիւնք .
- 10. Յիշողութեամբ գծագրութիւն :

Ե. ՏԱՐԵՆՐՁԱՆ

- 1. Տերեւներու և ծաղիկներու ձևի ուսում .
- 2. Երջանակէ զատ կանոնաւոր կոր գծերու գծում՝ առանց գործիքի . — Զուսձև, թիրատաձև, պարուքաձև .
- 3. Ստացուած գիտելիքներու կիրառումը՝ գծելու համար ամաններ, կողղարարական առարկաներ, երկրագործական զործիններ (Մանչետու քաժին) . — Նոյն գիտելեաց կիրառումը՝ գծելու համար ասեղնագործութեան վերաբերեալ աշխատութիւններ (Աղջկանց քաժին) .
- 4. Տարրական հետապատկերի գննութիւն՝ երկրաչափական պարզ մարմիններու կամ անոնցմէ անսնցուած առարկաներու գծմանը կիրարկուած . — Ուրանարդ, սրխամակ, դլան, բուրդ, կոն, գունտ .
- 5. Գործածութիւն քանակի, ուղղաչափի և կարկինի՝ գծելու համար երկրաչափական ձևեր .
- 6. Պարզ առարկաներու չափանշուած ուրուագիծ .
- 7. Վերածման աստիճանի ծանօթութիւն .
- 8. Կայուածի մը յատակադիր հանելու համար կարեւոր եղող տարրական գիտելիք .

- 9. Որոշ աստիճանի մը և չափանշուած ուրուագծի մը համեմատ յատակագծի մը մաքուրը առնել .
- 10. Լոյսի ազդեցութեան վրայ մէկ քանի գիտելիք .
- 11. Յիշողութեամբ գծագրութիւն :

Զ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Կրկնութիւն նախընթաց տարւոյ, ըստ կարելւոյն գործնական կերպով :

Դ. Գ Ր Ա Վ Ա Ր Ժ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. Ե Ի Բ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Ուղիղ գիրը գրատախտակի վրայ կաւիճով և թղթի վրայ մատիտով . բաներու կազմութիւն :

Գ. Ե Ի Գ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Ուղիղ կամ հակեալ պարզ գիր . նախադասութեանց կազմութիւն . պարզ գլխադրի ուսում :

Ե. Ե Ի Զ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Ուղիղ և հակեալ պարզ գիր, նըրագիր, գլխագիր . — Մասնաւոր աշխատութիւնք (Յուցակի, Հաշուեցուցակի, Ազդի, և ին . պատրաստութիւն) :

Ե. Ե Ր Գ

Ա. Ե Ի Բ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Պարզ երգերու վարժութիւն ունկնդրութեամբ . առանձին և խմբովին երգել :

Գ. Ե Ի Գ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Աշխարհիկ և եկեղեցական երգերու վարժութիւն ունկնդրութեամբ . առանձին և խմբովին երգել :

Ե. Ե Ի Զ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

- 1. Երկձայն երգերու վարժութիւն՝ ունկնդրութեամբ :
- 2. Եկեղեցական երգերու վարժութիւն, ըստ աւուր պատշաճի :

Չ. Ի Ր Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. ՏԱՐԵՇՐՁԱՆ

Դպրոցը և ևայրենի տունը. — Դպրոցական առարկաներ, կարասիներ, գործիքներ, ընտանի կենդանիներ, բանջարեղէններ, ծաղիկներ, պողատու ծառեր. — Մարդկային մարմինը:

Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Մարզագետիկ. — Մաղիկները և կենդանիները:
2. Այգի և Պարսեղ. — Որթատունկ, պողատու և ուրիշ ծառեր, անոնց արտադրութիւնները, Ֆլասակար կենդանիներ այգիի և պարտէզի մէջ:
3. Շինուքիւնի. — տեղական քարեր և հողեր:

Գ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Դաշ. — Մշակեալ տունկեր (ցորեն, գարի, գետնախնձոր, եղիպ-տացորեն, և ին):
2. Անտառ. — Մտերը, բոյսերը և կենդանիները:
3. Շինուքիւնի. — Աւազ, կիր, կաւ, գածաքար:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Դ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

Բնական գիտութիւն. — Զուրեւ. — 1. Հեղեղ. — 2. Գետակ. կենդանի-ներ. — 3. Գետ. կենդանիներ. — 4. Լիճ. կենդանիներ. — 5. Մով. կենդանի-ներ: Ճանիւն. — Բոյսեր և կենդանիներ:

Շինուքիւնի — Գործածական մետաղներ: Երկրագործական ծանօթութիւն. — Հող. — Մշակելի հող կազմող մասերը — ամուլ հողերը բարեկաւելու միջոցներ. — Բոյսերու անողան պէտքի վրայ յենլով՝ արտերը պարարտացնելու անհրաժեշտ պէտքը և աղբերու գործածու-թիւնը — աղբերու տեսակները (կենդանական, բուսական և հանքային) — ասոնց պահպանման ու գործածութեան լաւագոյն եղանակները:

Հերկում և նորա յարակից գործողութիւնք — Հին և նոր գրութեամբ հերկման տարբերութիւնները և վերջնոյն առաւելութիւնները. — Եւրոպական

արօրը և իւր մասերը, սորա գործածման եղանակը. — Հողի կոյտերը փշրելու գործիք (herse), սերմնացու հունտերը զտելու ու մաքրելու անհրաժեշտ պէտքը և այս մասին գործածուելիք մեքենաներ. — Հունձքի և կալի մեքենաներ:

Ե. ՏԱՐԵՇՐՁԱՆ

Բնական գիտութիւն. — Փայտի և ֆարի աշխատքիւնի. — Կահագործ, ստաղձագործ, քարակոփ, և ին:

Տախտիւն. — Զերմաչափ, մարմիններու ընդլայնումը: Զուր. — Բաղադրութիւնը և զանազան վիճակները, խտացում, մշուշ, ամպ, անձրեւ, և ին. — Զուրը լրբու շարժիչ գորութիւն. շոգեչափ մեքենայ: Օդ. — Յատկութիւնները և բաղադրութիւնները, և ին. — Հով, միջնոյր-տական ճնշում, ծանրաչափ, ջրհան:

Երկրագործական ծանօթութիւն. — Գլխաւոր բոյսերու մշակութիւն և ասոնց իրարու յաջորդելու պէտքն ու կարեւորութիւնը. — Հացահատիկներ (ցորեն, գարի, վարսակ, հաճար, եղիպտացորեն, թնձակեր, կորեկ, բրինձ, և ին):

Ճարտարարուեստական բոյսեր (ծխախոտ, բամբակ, շուշմայ, սիսամ, խաչիսաշ, կանեփ, վուշ, ճակնդեղ, բամբ, և ին):

Մարդագետիւնք և գլխաւոր ճարակարոյսք (առւոյտ, երեմեակ, իղիսար և ին), մարդագետիւններ ուսուցիչ և պահպանելու կերպերը — բնական և արուես-տական մարդագետիւնք:

Պողատու ծառեր (խնձորենի, տանձենի, սերկեւիլի, արմաւենի, ձիթենի, թղենի, նոնենի, որթատունկ, թթենի և այլք, և անոնց մշակութեան կերպերը: Բանջարեղէնք, սոցա թոււում և կարեւորութիւնը:

Անտառներու պահպանման կարեւորութիւնը. — Գլխաւոր բուսոց, ծառոց և հացահատիկներու՝ ըլլան անկային, ըլլան միջատային՝ հիւանդութիւնները և սոցա դարմանները:

Զ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

Բնական գիտութիւն. — Երկաթի վրայ աշխատքիւնի. — Դարբին, երկաթ-թագործ, սալագործ, պայտատ, և ին:

Կողմնացոյց. — Մագնիս, փոթորիկ, կիկարակաճութիւն:

Ջայն: Լծակներ, անախարակներ:

Ջեռուցում և շուսաւորում. — Զեռուցման զանազան տեսակ փայտեր. Ածուխ, կիզահող. — Ալյում, Մոս, Բարիւղ, Լուսաւորութեան կազ, Երեք-արական լոյս:

Հեռագիր և հեռաձայն (պրասաւար):

Տեղական յասուլ անարտքիւնի:

Մարդկային մարմին. — Ծանօթութիւնք Բնախօսութեան, Մարդակազմութեան և Առողջագանութեան վրայ (կերակուրք, ըմպելիք և հագուստք, մաքրութիւն, տարախօսիկ հիւանդութիւնք):

Երկրագործական ծանօթութիւնք. — Ընտանի կենդանիք. հաւ, մեղու, շերամ, ոչխար, այծ, կով, եղ, գոմէշ, էշ, ձի, շուն, հապաստակ, և շն. — Աստնց անունդր և բազմացնելու կերպերը. — Հիւանդութիւնները:

Հաւկիթ պահելու կերպը:

Մեղու պահելու և մեղր հացնելու եղանակը:

Շերամ անուցանելու եղանակը և խոզակի գործածութիւնը:

Քացախ և դինի, բէքմէջ և պուլամայ շինելու կերպերը:

Մածուն, պանիր և կարագ շինելու կերպերը:

Բանջարեղէնի պահածոներ:

Է. Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Դպրոցը. — Շէնքը. Ուսուցիչը. Աշակերտները:
2. Հայրենի տունը. — Բնակարան. Ընտանիք. Առանձին զբաղումներ. — Պարտէզ. — Գաւիթ. — Ամբարանոց. — Ախտ:
3. Մրգասաւ. — Պտղատու ծառեր, ընտանի կենդանիներ:

Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Երկրաչափ. — Շէնքեր. — Փողոցներ. — Հրատարակներ. — Աղբուրներ. — Երկրի չորս կողմերը. — Յատակազիծը ներկայացնել և բացատրել:
2. Հողին ելուէջները. — Զրոյ ընթացքներ. — Հաղորդակցութեան ճամբաներ. — Մշակութիւններ. — Կենդանիներ (Երկրաչափային մեջ):
3. Բնակիչներ. — Բարքեր. — Զբաղումներ. — Արհեստներ. — Արտաքին յարաբերութիւններ (ձևնդալայրի մեջ):

Երկիւն. — Շատ պարզ դիտողութիւններ արեւուն, լուսնին և մի քանի աստղերու ընթացքին վրայ. — Երկրագունտ, Գիշեր և ցերեկ. — Եղանակները և ամիսները. — Անձրև, ձիւն, հովեր:

1. Տեղական աշխարհագրութիւնը ընդլայնել նկարագրելով գետակը, լիճը, լեռները, դաւառը, և շն. որոնք կրնան տեսնուիլ ծննդավայրէն կամ անոր շրջականերէն.
2. Տղուն պատկանած նահանգին բնական աշխարհագրութիւնը. — Քարտէզ ներկայացնել, բացատրել և գծել տալ:
3. Նահանգին վարչային բաժանումները. — Գլխաւոր քաղաքները:

Դ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Տղուն պատկանած նահանգին շրջակայ կամ կցորդ միւս նահանգներուն բնական աշխարհագրութիւնը.

Աստնց բնակիչները. — Բարք, տարազ, լեզու, զբաղում, արհեստ, առեւտուր, երկրագործութիւն, և շն.

Կարեւոր քաղաքները, անոնց յարաբերութիւնները. — Հաղորդակցութեան միջոցները.

2. Ծանօթ նահանգներուն հետզհետէ կցորդել միւս նահանգներուն ուսումը ըստ վերնոյն՝ մինչև որ ուսուցուի ամբողջ Ասիական Թուրքիան քարտիսագծութեամբ:

Ե. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Ասիական Թուրքիոյ շրջակայ երկրները. — Բնակիչները, կենդանիները, բոյսերը. — Հաղորդակցութեան միջոցները, արհեստները և առեւտուրները.

2. Եւրոպական Թուրքիա.

3. Համառօտ գաղափար երկրի հինգ մասերուն վրայ՝ Երկրագունտին միջոցաւ.

4. Ասիական և Եւրոպական Թուրքիոյ կարեւոր նահանգներուն վրայ լրացուցիչ տեղեկութիւններ:

Զ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Աշխարհի զանազան մասերուն մէջ գործադրութեան լուսազոյն կերպերը այն ճարտարագործութեանց որոնք յատուկ են մասնաւորապէս տղուն բնակած նահանգին և ընդհանրապէս ամբողջ Թուրքիոյ.

2. Մտաւոր ճամբորդութիւններ աշխարհի զանազան մասերուն մէջ՝ ցամաքէն և ծովէն:

Ը. ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Փոքրիկ աղօթք բացատրուած և ի բերան ուսուցուած.
2. Զննական շատ պարզ դասեր դիւզի եկեղեցիին և անոր պաշտօնէկց վրայ (եկեղեցիին մասերը, կազմածքը և սպասները. — Քահանային, սարկաւազին, դպիրներուն, լուսարարին և ծամակոչին տարազը, պաշտօնը):

Բ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Վերատեսութիւն նախորդ տարւոյ դասերուն.
2. Ստեղծագործութիւն (հանառոտ). — Դրախտ. — Ազամ ու Եւա կը խարտին. — Կայն և Արէլ. — Ջրհեղեղ.
3. Նահապետք. — Արքանամ, Իսահակ.
4. Յիսուսի ծնունդը. — Յիսուս տասներկու տարեկան. — Յովհաննէս Մկրտիչ. — Յիսուսի մկրտութիւնը. — Առաջին աշակերտները. — Կանայի հարսանիքը. — Յիսուս և Սամարացի կինը. — Յիսուս Նազարէթի Տաճարին մէջ. — Անդամալոյցին և Բեթհեղզայի հիւանդին բժշկութիւնը. — Հարիւրապետին ծառան Կափառնայումի մէջ. — Նային քաղաքի պատանիին և Յայրոսի աղջկան յարութիւնը:

Պատարագի երգեր. — 1. Տէր Ողորմեա, 2. Յիշեա Տէր և ողորմեա, 3. Կեցո Տէր և ողորմեա, 4. Եւ ընդ հոգւոյդ Քում, 5. Աստուծոյ երկրպագեցուք, 6. Առաջի քո Տէր, 7. Պոսիտումէ, 8. Ամէն, Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ, 9. Միայն սուրբ, Միայն Տէր... , 10. Սուրբ Աստուած, սուրբ և հզօր... , 11. Փառաւորեալ և օրհնեալ... :

Գ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Նահապետք (չար.). — Եսաւ և Յակոբ. — Յակոբի փախուստը. — Յակոբ Լարանի քով. — Յակոբի վերադարձը. — Յովսէփ և իր եղբայրները. — Յովսէփի եղբայրները եղբայրտանի մէջ. — Յակոբի եղբայրտան կուգայ.

2. Յիսուսի խօսած առակները. Սերմնացանին, Յօրենին և Որմին առակները. — Լիբան քարոզը (կարգալ). — Տէրունական աղօթք. — Յիսուս կը հանդարտեցնէ փոթորիկը. — Հինգ հացին և երկու ձուկին հրաշքը. — Բարի Սամարացիին, Մեծատունին, Աղքատ Ղազարոսին, Անտակ Որդիին, Փարիսեցիին և Մաքսաւորին առակները ու Ղազարոս յարութիւնը.

3. Յիսուս և Արդար. — Արդար և Թաղէոս. — Սանդուխտ կոյս. — Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ. — Հովիտիման կուսանք.

4. Եկեղեցւոյ հայրերու աղօթքներէն ընտրութեամբ զոց սորվեցնել հանդերձ բացատրութեամբ:

Պատարագի երգեր. — 1. Փառք քեզ, Տէր Աստուած մեր, 2. Եղիցի անուն Տեան օրհնեալ... , 3. Բարեխօսութեամբ վերին Քո զօրաց... , 4. Արի Աստուած հարցն մերոց... , 5. Աստուած մեր և Տէր մեր երեւեցաւ... , 6. Բրիստոս ի մէջ մեր յայնանցաւ... , 7. Ողջոյն սուք միմեանց... , 8. Խուճկ մատուցանեմք... , 9. Մի ոք յերեկայից... :

Գ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Մովսէս և զասաւորները. — Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսի մէջ. — Մովսէս. ծնունդը, երիտասարդութիւնը, փախուստը. — Մովսէս Փարաւոնի առջեւ. — Եգիպտոսէն ելքը. — Իսրայէլացիները անապատին մէջ. — Տաննաբանայ Պատուիրան. — Ոսկիէ հորթը. — Լրտեսները. — Մովսէսի մահը. — Յեսու, Քանանի երկրին նուաճումը. — Գէղէոն, Սամսոն, Հուսի. — Հեղի և Սամուէլ.

2. Յիւսու ի Բերսեղիս. — Յիսուսի մուտքն յԵրուսաղէմ. — Մշակներուն, Տաւր Կուսանաց և Տաղանդներուն առակները. — Յուզայի մասնութիւնը. — Հարկ աւ կեսար. — Այրիւն լուման. — Յիսուսի չարչարանքը. — Յարութիւնը և Համբարձումը.

3. Բրիստոնէութեան Հայոց մէջ հաստատութեան պատմութիւնը. — Հայաստանեայց Եկեղեցին և իր Սուրբերը.

4. Եկեղեցւոյ Հայրերուն աղօթքներէն ընտրութեամբ սորվեցնել հանդերձ բացատրութեամբ:

Պատարագի երգեր. — 1. Սուրբ, Սուրբ... , 2. Յամենայնի... , 3. Որդի Աստուծոյ... , 4. Հոգի Աստուծոյ... , 5. Գոհանամք զքէն... , 6. Լցաք ի բարութեանց... , 7. Մարմին Տէրունական... , 8. Թագաւոր երկնաւոր... , 9. Խորհուրդ խորին... :

Ե. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Թագաւոր. — Սաւուղ. — Դաւիթ. — Սողոմոն. — Թագաւորութեան բաժանումը. — Մարգարէներ. — Գերութիւն.

2. Առաքեալ. — Բրիստոնէական Եկեղեցւոյ հիմնարկութիւնը. — Սուրբ Հօգին կ'իջնէ Առաքելոց վրայ. — Առաքեալներու հալածանքը. — Պօղոս Առաքեալին զլիսաւոր ճամբորդութիւնները.

3. Հայ Եկեղեցւոյ մեծանուն Հայրապետք և Թարգմանիչք.

4. Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն (Հաւատալիք Եկեղեցւոյ, Խորհուրդք Եկեղեցւոյ, Բրիստոնէական առաքելութիւնք և Եօթն Մահացու Մեղքեր):

Նարականներ. — Ս. Էջմիածնի ա) Էջմիածինն ի Հօրէ... , բ) Տեսեալ զոյս... , գ) Եկայք շինեցուք... : Վարդանանց. Նորահրաշ պակաւոր... , առաջին երկու տունները: Ղևոնդեանց. «Որք չուեալ, գնացեալ լինէին»... , երեք տուն:

Զ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Բրիստոնէութեան զլիսաւոր բաժանումները.
2. Հայ Եկեղեցւոյ Պատրիարքական և Կաթողիկոսական Աթոռները.

3. Եկեղեցւոյ Հայրերու ազօթքներէն ընտրութեամբ զոց սորվեցնել՝ հանդերձ բացատրութեամբ։  
Շարականներ. — Հոյսիսիւսեանց. «Անճինք նուիրեալք» և Հ. Փ. տուները։ Յարութեան. «Այսօր յարեալ...», երեք տուն։ Ինննդեան. «Խորհուրդ մեծ և սքանչելի...», երեք տուն։ Լուսաւորչի. «Այսօր զուարճացեալ...», մէկ տուն։

Ծանօթ. — Կրօնագիտութեան ուսուցիչը կամ Հայերէնի ուսուցիչը կը բացատրէ աշակերտաց, յետոյ զոց կը սորվեցնէ ընազիրը, անկէ ետք երաժշտութեան ուսուցիչը կը սորվեցունէ եղանակը։

**Թ. Թ Ո Ւ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն, Ե Ր Կ Ր Ա Չ Ա Փ Ո Ւ Թ Ի Ի Ն**  
**Ե Ի Տ Ո Մ Ա Ր Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն**

**Ա. ՏԱՐԵՇՐՁԱՆ**

- Թուարանութիւն. — 1. Ծանօթութիւն միութեան և բազմաթուութեան վրայ.  
2. Իրազնական միջոցներով հաշուելու վարժութիւն 1—10 թուոց մտաւոր ու գրաւոր չորս գործողութիւն ստաջիմ տասը թուոց վրայ՝ գործածութեամբ +, —, = նշաններու.  
3.  $\frac{1}{2}$ ի,  $\frac{1}{4}$ ի,  $\frac{1}{8}$ ի ծանօթութիւն մտաւոր։  
Երկրաչափութիւն. — 1. Ծանօթութիւնք հաստատանոց, մակերեսայիններու, գիծերու և կէտի վրայ.  
2. Պարզ ձևերու վերլուծում և բազդատութիւն։

**Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆ**

- Թուարանութիւն. — 1. Իրազնական ծանօթութիւն 1—10 և 1—20 թիւերու վրայ. — Մոյն թիւերը կազմել և վերլուծել.  
2. 1—10 և 10—20 թուոց վրայ Յաւելման և Բարձման բերանացի վարժութիւններ թանձրացեալ և վերացեալ կերպով.  
3. 1—20 թուոց վրայ Յաւելման և Բարձման գրաւոր վարժութիւնք թուարանական նշաններու միջոցաւ.  
4. Մտաւոր վարժութիւնք Բազմապատկութեան և Բաժանման վրայ և ծանօթութիւն  $\times$ ,  $:$ ,  $\div$  նշաններու.

5. Վարժութիւն  $\frac{1}{2}$ ի,  $\frac{1}{4}$ ի,  $\frac{1}{8}$ ի և  $\frac{1}{16}$ ի՝ մտաւոր։  
Երկրաչափութիւն. — 1. Կէտերու և գիծերու միջոցաւ մակերեսայիններ կազմել.  
2. Ծայլումով և կտրատումով մակերեսայիններ կազմել.  
3. Կաւով կամ ուրիշ յարմար նիւթով մը պարզ ձև ունեցող հաստատուններ կազմել (զուտ, խորանարդ, պրիսմակ, և ըն)։  
(Տես Ձեռնական աշխատութեան և Գծագրութեան դասերը Բ. տարեշրջաններուն մէջ)։

**Գ. ՏԱՐԵՇՐՁԱՆ**

- Թուարանութիւն. — 1. 1—100 թիւեր. Իւրաքանչիւր տասնեակի վրայ իրազնական ուսում. — Թանձրացեալ և վերացեալ վարժութիւններ Յաւելման և Բարձման՝ իւրաքանչիւր յաջորդական տասնեակի վրայ.  
2. Որոշ թուով միութիւններ կամ ամբողջական տասնեակներ բազմապատկել և բաժնել 2, 4, 8, 10, 5, 3, 6, 9, 7 թիւերով.  
3. Իրազնական դաս տեղւոյն մէջ գործածուած երկայնութեանց և արժէքի չափերուն վրայ. սովորեցնել անոնց միութեան հետ գլխաւոր բազմապատկներն ու ստորաբաժանումները.  
4. Վարժութիւններ դասարանին մէջ գտնուած առարկաներն ու կարասիները չափելու՝ տեղական չափերով. խնդիրներու միջոցաւ վարժութիւնք արժէքի չափերու վրայ։  
Երկրաչափութիւն. — Քառակուսի ձևի մը մակերեսային բազդատելու եռանկիւն, ուղղանկիւն և տրպէզ մակերեսայիններու հետ որոնք անկէ մեծ ըլլան (Տես Գծագրութեան դասերուն Գ. տարին)։

**Գ. ՏԱՐԵՇՐՁԱՆ**

- Թուարանութիւն. — 1. 1—1000 թիւեր. Իւրաքանչիւր հարիւրեակի կազմութիւնը սորվեցնել յաջորդական կարգով.  
2. Տղուն ծանօթ հարիւրեակներուն վրայ թանձրացեալ և վերացեալ ստիճանաւոր վարժութիւնք Յաւելման և Բարձման.  
3. Բազմապատկութեան և Բաժանման աղիւսակները սորվեցնել մինչև  $10 \times 10$ .  
4. Տասնաւոր և հարիւրաւոր թիւեր բազմապատկել միաւոր թիւերով։ Տասնաւոր և հարիւրաւոր թիւեր բաժնել այնպիսի միաւոր թիւերով որոնք բաժանելիներուն հիշող բազմապատկիւններն ըլլան.  
5. 1—100 թիւերէն ու եւէ բաժանական թուոց մը  $\frac{1}{2}$ ը,  $\frac{1}{3}$ ը,  $\frac{1}{4}$ ը,  $\frac{1}{5}$ ը,  $\frac{1}{6}$ ը,  $\frac{1}{8}$ ը,  $\frac{1}{10}$ ը գտնել.  
6. Երկայնութեան, պարունակութեան և կշռոյ տեղական չափերը ծա-

նօթացնել տղուն՝ իրենց գլխաւոր բազմապատիկներով ու ստորաբաժանումներով : — Վարժութեան համար գործնական խնդիրք որոնց մէջ մտնեն մէկ կամ երկու գործողութիւններ :

7. Տանտրդական Կոտորակ . — Մէղրին միջոցաւ սորվեցունել երկու թուանշանով տանտրդական թիւեր գրել ու կարգալ . — Յաւելում և Բարձում տանտրդականաց :

Երկրաչափութիւն . — 1. Շրջանակ և աղեղ , ատիճան , շառաւիղ , արամագիծ , և ին .

2. Անկիւններ . Ուղիղ անկիւն , սուր անկիւն , բութ անկիւն . — Ուղիղ անկիւնին հետ բաղդատել միւսները :

Ե. ՏԱՐԵՐՁԱՆ

Թուաբանութիւն . — 1. 1—10000 թիւեր . Սոյն թիւերուն մշակութիւնը ըստ նախընթաց տարիներուն՝ ամբողջական թուոց Չորս Գործողութեամբ .

2. Տանտրդական թիւեր գրել ու կարգալ մինչև երեք թուանշանով . — Չորս Գործողութիւնք տանտրդական թիւերով .

3. Հասարակ Կոտորակաց վրայ վարժութիւնք Յաւելման և Բարձման : Երկրաչափութիւն . — 1. Կանոնաւոր և անկանոն բազմանկիւններու մակերևոյթները չափել . — Բոլորակի մը մակերևոյթը չափել :

2. Գիտիներու , պատերու մակերևոյթները չափել : Տոմարակալութիւն . — Ստացուած հաշուական ծանօթութեանց կիրառմամբ կազմել առանձին և զիւղատնտեսական հաշուետեսարներ :

Զ. ՏԱՐԵՐՁԱՆ

Թուաբանութիւն . — 1. Ամբողջական թիւերով գործնական խնդիրք .

2. Տանտրդական Կոտորակով Չորս Գործողութեանց վրայ գործնական խնդիրք՝ երեք թուանշանէ աւելի պարունակող թիւերով .

3. Հասարակ Կոտորակով Չորս Գործողութեանց վրայ գործնական խնդիրք .

4. Միութեան Կանոնով լուծելի խնդիրք ատկոսի և զեղչի վրայ :

Երկրաչափութիւն . — Մաւաշները չափելու միութիւն . — Խորանարդի , պրիսմակի , գլանի ծաւալները չափել . — Անոնց կիրառումը զիւղատնտեսական կեանքի մէջ :

Տոմարակալութիւն . — Գիւղատնտեսի հաշուական գործաւնութիւնները արձանագրել առարներու մէջ . — Հաշուական ցուցակներ պատրաստել :

Ժ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ա. ՏԱՐԵՐՁԱՆ

Ամէն դասի առթիւ պիտի կատարուին լեզուի վարժութիւնք որոնց նպատակը պիտի ըլլայ կարելի եղածին չափ ուղիղ խօսիչ սորվեցնել տղուն :

1. Վայելախօսութիւն . — Խօսակցութիւններ մանուկին և ուսուցչին միջև :

Մանուկը շատ պարզ տեղեկութիւններ պիտի տայ պատմուած գրոյցի մը , կատարուած պտոյտի մը և աւանդուած դասի մը վրայ :

2. Լեզուի վարժութիւնք . — Ասոնց նպատակը պիտի ըլլայ տղուն ծանօթացնել այն բառերը որոնք ցոյց կուտան անձերու , կենդանիներու և իրերու անուններ , անոնց կատարած գործողութիւնները և անոնց յատկութիւնները :

3. Ընթերցման նախապատրաստութիւն . — Վանկերը վերլուծել ձայներու և յօդաւորմանց . — Չայնաւորք :

4. Արտասանութիւն . — Գիրաւհասկնալի բանաստեղծութիւններ , յետաքարտեան , գոց սորվեցունել :

Բ. ՏԱՐԵՐՁԱՆ

Վայելախօսութիւն . — Կարճ խօսակցութիւններ կամ տեղեկատուութիւնք Իրագիտութեան և Տեղական Աշխարհագրութեան դասուց վրայ :

Իրագիտութեան դասերուն հետ անշուքիւն ունեցող ստոյգ կամ շինծու դիպաց պատմութիւն :

Այս դասերէն քաղուած առածներու ի բերան ուսում :

Ընթերցանութիւն . — Նախապատրաստական ուսում լեզուի ձայնական տարերաց . — Չայն և յօդաւորում . — Խօսքեր , բառեր , վանկեր վերլուծել ձայնական տարերքներու :

Չայնական մեթոտով շինուած քերականի մը վրայէն ընթերցման վարժութիւն . — Կարգացուած բառերը գրել . — Տպագրական տառերու ուսում . — Կարճ և զիւրիկ բանաստեղծութեանց արտասանութիւն :

Բառագիտութիւն և Ուղղագրութիւն . — Գրատախտակին վրայ և քերականին մէջ կարգացուած բառերու գրուցագրութիւն . — Իրագիտութեան և Ընթերցանութեան դասերէն քաղուած բառեր դասաւորուած՝ նիւթի կարգով , իրենց տեսակին համեմատ :

Գլխագրի և ուղղագրական նշաններու գործածութիւն :

Անուններու եղակին ու յօդանակին որոշել իրենց վերջաւորութիւնէն :

Անձերու , կենդանիներու և իրերու անուններ . — Յատկութիւն և գործողութիւն ցուցնող բառեր :

Գ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Վայելչախօսութիւն . — Բնական Պատմութեան և Տեղական Աշխարհագրութեան ծրագրին պարունակած առարկաներուն վրայ խօսակցութեան շարունակութիւն :

Հատրնտիր բարոյավէպեր . — Աշակերտաց հասողութեան յարմար կենսագրութիւններ :

Ընթերցանութիւն . — Ընթերցում և տեղեկատուութիւն . — Գլխաւոր գաղափարներու ցուցում . — Խորհրդածութիւն և բարոյական եղբակացութիւն . — Նոր եղբերու ուսում՝ նշանակութեան և ուղղագրութեան տեսակէտով :

Դիւբին հատուածներու արտասանութիւն :

Բառագիտութիւն և Ուղղագրութիւն . — Գասերէ քաղուած և իրենց նշանակութեան կամ իրենց տեսակին համեմատ խմբուած բառեր :

Ընթերցանութեան և Իրագիտութեան դասերէն առնուած պարզ և կարճ գրուցագրութիւնք :

Նախադասութեան մէջ որոշիկ անունք, անականք, բայք, դերանունք՝ ստանց մանրամասնութեան :

Բային՝ իր ենթակային նեա համաձայնութիւնը թիւով և գէմքով :

Դ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Վայելչախօսութիւն և Ծարադրութիւն . — Բերանացի և գրաւոր տեղեկատուութիւն կարգացուած կամ սորվուած նիւթոց վրայ . — Ուրուագծին արտագրութիւն և պատրաստութիւնք շարադրական և ուղղագրական կրկին տեսակէտով :

Բերանացի դիպախօսութիւնք (narration) և նկարագրութիւնք որոնք համապատասխան ըլլան ծրագրին նիւթոց :

Ընթերցանութիւն . — Միւս դասերուն նեա ազնշակից հատուածներու բնարութիւն . — Համառօտ կերպով սորվեցնել անոնց խմաստն ու բացատրութեան ձևերը . — Նիւթին բնական բաժանումներուն համեմատ տեղեկատուութիւն . — Քիչ ծանօթ եղող եղբերու բացատրութիւն . — Հատուածին յատակազիծք :

Բառագիտութիւն և Ուղղագրութիւն . — Ընթերցանութեան և Իրագիտութեան դասերէն քաղուած և նիւթերուն կարգովը խմբուած բառեր :

Նախապէս կարդացուած և վերլուծուած բնագիրներէն քաղուած գրուցագրութիւնք :

Քերականութիւն . — Պարզ նախադասութիւն . — Իր էական մասերը . — Նախադասութեան մէջ որոշիկ յատուկ և հասարակ անունները, որակական, ստացական, ցուցական, թուական անականները . — Էական բայ, միւս բայերուն տարբերութիւնք և նմանութիւնք հակառակ բային բարդաստմամբ . — Հոլովում ա-

նունի և դերանունի . — Խոնարհում էական բայի և առաջին լծորդութեան բայերու, Սահմանական, Հրամայական և Ստորագասական եղանակներուն գլխաւոր ժամանակներովը :

Նիւթակայ և ինչիր եղող անունի տեղ գործածել դերանուն :

Գրաւոր և բերանացի քերականական նշաններ իրր կիրառութիւն ուսուցուած նիւթոց :

Ե. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Վայելչախօսութիւն և Ծարադրութիւն . — Նախընթաց նրահանգները շարունակել . — Կարճ շարագրութիւններ բերանացի, միանարար պատրաստուած . — Ընդլայնում նիւթի մը՝ նեոտեղութեամբ ուրուագծին զոր առաջուց պատրաստած են աշակերտք . — Պատմական, կենսագրական, աշխարհագրական և բնապատմական նիւթեր :

Ընթերցանութիւն . — Միւս դասերուն անշակից նիւթեր . — Վերլուծում խմաստին, բացատրութիւն գլխաւոր կէտերուն, բարդաստութիւն . — Բարոյական խրատներ և գործնական կիրառումներ :

Հատրնտիր հատուածոց արտասանութիւն :

Բառագիտութիւն և Ուղղագրութիւն . — Նախընթաց նրահանգներու շարունակութիւն :

Բառերն ու ասացուածքները գասուրել իրենց քերականական տեսակին, իրենց նշանակութեան և իրենց գործածութեան նայելով :

Ածանցումներու վրայ պարզ նրահանգներ :

Կիրառիկ գրուցագրութիւնք :

Քերականութիւն . — Նախադասութեան ուսման շարունակութիւնք . — Այլեայ տեսակ խնդիրները որոշիկ տայ (Սեռի խնդիր, Բնութեան խնդիր, Տեղի և ժամանակի սրաւայ ցուցնող խնդիրներ) . — Ներգործական, Չկոչք, Կրաւորական բայերու զանազանում . — Նախադասութեան զրական, միասական, հարցական ձևեր . — Ծրջում :

Նախադասութեան մէջ որոշիկ Յետագրութիւնք և Մակրայք, Դերանուններուն տեսակները :

Խոնարհում կանոնաւոր բայերու . — Նախադասութեան մէջ ստորակէտի գործածութիւն :

Զ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

Վայելչախօսութիւն և Ծարադրութիւն . — Ծարունակութիւն շարադրական նրահանգաց՝ բերանացի և գրաւոր . — Ընտանեկան համակներ :

Բարոյական նիւթեր՝ մանրակէտով մը կամ բարոյակէտով մը լուսաբանուած : Ընթերցանութիւն . — Հատուած մը կամ գլուխ մը բաժնել մասերու որոնց

ամէն մէկը համապատասխանէ պիտաւոր գաղափարի մը: Մասնաւոր բացատրութեանց ուսում:

Հատընտիր հատուածոց արտասանութիւն: Բառագիտութիւն եւ Ուղղագրութիւն.— Ընթերցանութեան, Բնական Պատմութեան, Աշխարհագրութեան կամ Պատմութեան դասերէն քաղուած բառեր: Կազմութիւն և վերլուծում բառերու: Արմատ բառեր և ամէնէն գործածական մասնիկներ:

Կիրառական դրուցագրութիւնք: Քերականութիւն.— Պարզ նախադասութեան ուսումը ամբողջացնել.— Նախագատութիւն մը որուն ամէն մէկ էական մասերը ունենան լրացուցիչ բառեր: Շաղկապ և Ձմբարկութիւն: Յերանուէն. կէտադրութիւն: Բերանացի և գրաւոր խոնարհում Կանոնաւոր և Անկանոն Բայերու: Բերանացի և գրաւոր հոլովում Անուններու և Գերանուններու:

ԺԱ. ՕՍՄ. ԼԵԶՈՒ

Գ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. — Խօսակցութիւն եւ Արտասանութիւն.— Առարկաներու վրայ խօսակցութիւն ուսուցչին և աշակերտին միջև:

Ուսուցիչը մանրավէպեր կամ դիպագրութիւններ կը պատմէ աշակերտին ի լուր և աշակերտը կը կրկնէ:

Կարճ առածներ, հատուածներ գոց կը սորվի տղան ունկնդրութեամբ միայն:

2. Գրել եւ Կարդալ.— Քերական մը որ պատրաստուած ըլլայ ձեռագիր և սպաղիւր տատերով:

3. — Ուղղագրել.— Կարդացուած դասէն 4—6—8—10 բառերու ուղղագրութիւնը սորվիլ:

Ե. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Խօսակցութիւն եւ Արտասանութիւն.— Շարունակութիւն նախընթաց տարիին համաձայն:

2. Գիր եւ Ընթերցում.— Զեռագիր և սպաղիւր տատերով պատրաստուած դասագիրք մը.— Թարգմանութիւն:

3. Ուղղագրութիւն.— Ընթերցման հատուածէն 2—4—8 տող սորվիլ դրուցագրութեամբ գրելու համար:

4. Պաշտօնական գրութիւնք.— Պարզ մուրհակներ, անպարտագիրներ, կէն, գոց սորվիլ և գրել:

Զ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Խօսակցութիւն եւ Արտասանութիւն.— Շարունակութիւն ըստ նախընթաց տարիներու:

2. Գիր եւ Ընթերցում.

3. Ուղղագրութիւն եւ Շարագրութիւն.— Մանր պատմուածքներ շարագրել, նիւթը նախախրաբար ընթերցանութեան դասագիրքէն առնուած.— Ընթերցման հատուածէն 6—8—10 տող սորվիլ և դրուցագրել:

4. Պաշտօնական գրութիւնք.— Շարունակութիւն նախընթաց տարւոյ դասագիրքին՝ ամէն մէկ գրութեան առիթը բացատրելով այդ գրութեան հանգամանքը:

ԺԲ. ԱԶԳ. ԵՒ ՕՍՄ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

1. Ընտանիքին պատմութիւնը.
2. Գիւղին պատմութիւնը. օգուտ քաղել յիշատակարաններէն, եթէ կան.
3. Նահանգին պատմական անցքերը, ջանալով օգտուիլ յիշատակարաններէն, եթէ կան:

Ե. ՏԱՐԵՇՐՁԱՆ

ԱԶԳ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

- |                         |  |
|-------------------------|--|
| 1. Հայկ և Բէլ,          | 8. Աշոտ Գ. Ողորմած,                          |
| 2. Արամ,                | 9. Գագիկ Ա.— Անի քաղաք,                      |
| 3. Արայ Գեղեցիկ,        | 10. Ռուբէն Ա. հիմնադիր Հայկական Իշխանութեան, |
| 4. Վաղարշակ,            |  |
| 5. Տրդատ և Գրիգոր Լուս. | 11. Լեւոն Զ.                                 |
| 6. Սահակ և Մեսրոպ,      | 12. Լէնկիթիմուր և Շահարաս:                   |
| 7. Աշոտ Բ. Երկաթ,       |  |

Զ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

Ազգ. Պատմութիւն

1. Հայաստանի ներքին կեանքի պայմանները՝ հին դարերուն.
2. Ներքին կեանքի պայմանները՝ հիմնադրուած Արշակունեաց ժամանակ.

- 3. Քրիստոնէական գրականութեան սկիզբը և բարգաւաճումը .
- 4. Արարական ազդեցութիւնը մեր գրականութեան վրայ .
- 5. Կիրիլիա . — Ներքին պայմանները և գրականութիւնը՝ Ռուսիոյ հանց օրով .
- 6. Հայոց գաղթականութիւնները (բունի և կամաւոր) .
- 7. Օսմանցոց և Պարսից պատերազմները Հայաստանի տիրապետութեան համար .
- 8. Հայոց յարաբերութիւնները Ռուսաց հետ . — Ռուսաստանի Հայք (Էջմիածին, Կաթողիկոսութիւն) .
- 9. Թուրքիոյ Հայք . — Պատրիարքութիւն Կ. Պոլսոյ . — Թանգիւմաթ . — Ազգ. Սահմանադրութիւն . — Յեղափոխական շարժում . — Օսմ. Սահմանադրութիւն :

Օ Ս Մ . Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

- 1. Օսմանցոց ծագումը .
- 2. Անատոլի մէջ իրենց ծաւալումը (Պրուսա) .
- 3. Բումէլի մէջ իրենց մուտքն ու ծաւալումը (Էտիքնէ) .
- 4. Կ. Պոլսոյ առումը .
- 5. Ենիշէրքիներու գունդին կազմութիւնը և ջնջումը .
- 6. Թուրքիոյ վիճակը Սուլթան Մահմուտի, Մէհմուտի, Աղիբի, Մուբաթի և Համիտի օրով . — 1876ի Օսմ. Սահմանադրութիւնը և 1908ի Սահմանադրութիւնը :

Ժ Գ . Ա Ռ Տ Ն Ի Ն Տ Ն Տ Ե Ս Ո Ի Թ Ի Ի Ն

Դ . Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն

Հագուստ եւ ներմաշիկէն . — Հագուստներու արուելիք խնամք ամբան և ձմրան մէջ . — Լուացքի համար ամենակարեւոր եղած գործիքներ, անօթներ . — Լուացման նիւթեր (ածառ, սոսա, կաւ, և չն) . — Օսլայում և արդուկում :

Ե . Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն

Քննախրան . — Ընտրութիւն և պահպանութիւն ընկերանի . — Կարասիներու արուելիք խնամք . — Խոհանոց . պղնձեղէնք և կազմածք . — Տնական պաշարներ . անոնց պատրաստութեան և պահպանութեան դիւրագնի և ստույգապահական միջոցներն ու եղանակները :

Զ . Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն

Հիւանդապահութիւն . — Հիւանդին սննեակը, անոր օղակոխութիւնը, ջնուցումը . — Հիւանդին հազուստն ու անկողինը . — Կերակուրը, ըմպելիքը, դեղաջուրերը, և չն . — Առանին դեղարան . — Պատահարաց միջոցին նախնական խնամք :

Ժ Դ . Բ Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ա Կ Ա Ն Կ Ր Թ Ո Ի Թ Ի Ի Ն

Ե Ի

Տ Ն Տ Ե Ս Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ն Բ

Ե . Ե Ի Զ . Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն

- 1. Գիւղայախուր . Ոստիկան, ապահովութիւն . — Հարկահաւաք, Ծերոց ժողով, աուրք, նպատակը : — Գիւղապետ, հսկողութիւն, բարեգործութիւն, վէճեր կամ դատեր, ձերբակալութիւն, բանտ :  
Եկեղեցի, Թաղական Խորհուրդ, ընտրութիւն :
  - 2. Գաւառակ . — Կազմակերպութիւնը ըստ վերնոյն . Գալմազամ :
  - 3. Գաւառ . — » » » Միւթէտարքի :
  - 4. Նանակ . — » » » Վալի :
- Առաջնորդական փոխանորդ :  
Առաջնորդ . — Գաւառական Վարչութիւն :  
Պատրիարք . — Կեդրոնական Վարչութիւն :
5. Տնտեսագիտական պարզ խօսակցութիւնի կամ ընթերցումով . — Եկամուտ, սոկոս, թոչակ, դրամ, վարկ, Գրամատուէն, Խնայողական սնուկ, Ապահովագրական և Գործակցական ընկերութիւնք :

Ժ Ե . Ա Ս Ե Ղ Ն Ա Գ Ո Ր Ծ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա . Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն

Օղանիւս (Դրիդոյ) . — 1. Շինել 30—40 օղակով երկը մը վարժութեան համար . այդ երկուն վրայ գործել տալ հետզհետէ, 8—10 սնդմ . երկայնքով, հետեւեալ ասեղները . Ա . Հիւսել առանց թել առնելու . — Բ . Հիւսել շիտակէն . — Գ . Հիւսել հակառակ կողմէն . — Դ . Հիւսել մէկ մը շիտակէն, մէկ մը հակառակէն . — Ե . Հիւսել պակսեցնելով :

ԵԱՆՕԹ. — Վարժուհին կ'սկսի երիզները որոնց համար կը գործածուի անյուայ բամբակ:

2. Կար. — Քանավայի վրայ զարդասեղներ. — Հաստ կտաւի կամ էզամի մին վրայ կարի պարզ և դիւրին վարժութիւն գունաւոր թելով (Շուլլալ, թեւակար (իլինդի), երկու կտորի վրայ շուլլալ):

3. Ձեւ. — Ուղիղ դիժեր քաշելու վարժութիւն առանց քանակի, այլևայլ երկարութեամբ:

Բ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Օղանիւս. — Գուրպայի երկու սրունք՝ կրունկի երկդով. վարժուհին կը սկսի գուրպանները:

2. Կար. — Հաստ կտաւի վրայ շարունակութիւն կարի վարժութեանց. — Յետակար (մանրադա). — Քանավայի վրայ թելզիր:

3. Ձեւ. — Բեկեալ և կոր դիժեր քաշելու վարժութիւնք:

4. Յօրինում. — Թաշկինակ, դպրոցականի պարզ թեւնոց. կտաւէ քանակուսի կտոր մը պատրաստել, որ յարմար ըլլայ գործածուելու իբր գոգնոց և կամ իբր անձեռոց:

Գ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Օղանիւս. — Զոյգ մը գուրպայ. պարզ շղթայիկ զոր կը շարունակէ աշակերտուհին և կ'ամբողջացնէ:

2. Կար. — Խժիպ (շայն), թելզակ (թեյեղ)՝ հաստ կտաւի վրայ:

3. Ձեւ. — Կաղապարներու վրայէն ընդօրինակել ձեւազօմներ որոնց մէջ գանուին կոր դիժեր:

4. Յօրինում. — Քանավայի վրայ թելզիր. — Ձեռագործի գրպանիկ՝ 80 մնդմ. երկայնքով և 40 մնդմ. լայնքով:

Կ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Օղանիւս. — Զոյգ մը գուրպայ (կրկին շորայիկ) բոլորովին աշակերտուհին ձեռքով շինուած՝ վարժուհին ցուցումներուն հետևողութեամբ:

2. Կար. — Վարժութիւնք հասարակ կտաւի վրայ. կէտակար (մեկնայի կար), եզերակար (սալաջօրիկ), զոյգ շուլլալ (պարկի համար գործածելի), ծակար (սժիպ շուղլալ):

3. Ձեւ. — Վարտիք, չապիկ՝ 2—5 տարեկան տղոց համար:

4. Յօրինում. — Մէկ կտորով չապիկ՝ 2—5 տարեկան տղոց համար, օձիքը խժիպով:

5. Կարկսուք. — Հաստ կտաւի վրայ մաշած տեղը լեցնելու պարզ վարժութիւն (խանութքանի զոգնոց):

Ե. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Օղանիւս. — Զոյգ մը գուրպայ՝ ամբողջովին աշակերտուհին ձեռքով շինուած:

2. Կար. — Նախորդ վարժութեանց կրկնութիւն. փոթ քաշել, ժայռաւէն փակցնել, կերպաս մը ժայռաւէնով եզերել, կոճակ փակցնել, լամբակ և օղակ շինել, ճերմակեղէնի նշանագիր:

3. Ձեւ. — Մանկիկի չապիկ ու սովորական չապիկ աշակերտուհին համար:

4. Յօրինում. — Սովորական չապիկ աշակերտուհին համար. — Օձիքը զարդարել:

5. Կարկսուք. — Հաստ կտաւի վրայ մաշած տեղը լեցնել ու պատուած տեղը կտոր դնել. — Մաշած եզերքի նորոգում:

Զ. ՏԱՐԵՆՐՁԱՆ

1. Օղանիւս. — Զարդասեղով զոյգ մը գուրպայ:

2. Կար. — Փոթ քաշել, փոթը կտորի վրայ առնել, անցէնք (կասպի, շարի մարթայ), չապիկի վրայ նշանագիր դնելու յատուկ զարդասեղներ (փշախար, խաչխար, շորայախար):

3. Ձեւ. — Պզտիկ տղու իրանազգեստ, կրծկալ ու պզտիկ աղջկան չապկընկեր (վարսիլ):

4. Յօրինում. — Աղջկան չապկընկեր (շիտակ գօտիով):

5. Կարկսուք. — Ձանէլա նազուստներու վրայ մաշած տեղերը լեցնել, կտոր դնել. — Գուրպայի նորոգութիւն:

## ՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

Միացեալ Ընկերութիւնը այս եռամեայ շրջանին իր Գիւլասնեստ-Տեսուչ-Ներէն, ինչպէս նաեւ շրջանակներու Տնօրէններէն եւ Ա. Գասասուներէն շատ մը տեղեկագիրներ ստացած է վարժարանաց մասին ուսումնական, գիւլասնեստական, վիճակագրական շահեկան ծանօթութիւններ պարունակող: Անոնց ամբողջութեամբ հրատարակութիւնը շատ երկար ըլլալուն, կը բաւականանանք ներկայ տեղեկագրին մէջ հրատարակել միայն քաղուածներ ամենէն կարեւորներէն:

### ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ԿԱՐՆՈՑ ՇՐՋԱՆԱԿ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ 1909—1910

21 Հոկա. 1909ին պաշտօնատեղիս Կարին հասայ, երբ արդէն իսկ տեղաւոյս Միացեալ Ընկերութեան Օժանդակ Մասնաճիւղին միջոցաւ բացուած էին ուկր մատակարարուէին հետեւեալ տեղերու գպրոցները. Պայտղիտ, Թոփրագ-Գալէ (Երկսեռ), Գարա-Քիլիսէ, Մաչու, Մաստուր, Խնուս-Բերդ, Չիլիտղ եւ Օձնի: Տարւոյ ընթացքին այս գպրոցներուն վրայ աւելցան հետեւեալ գպրոցները որոնց ուսուցիչը պաշտօնի վրայ էին արդէն ու պայմանաւորուած տեղական թաղ. Խորհուրդներու կամ Հոգարարժութեանց հետ, բացի երկու վտարագոյն գիւղերու ուսուցիչներէն. — Վէլի-Պապա, Սարը-Գայա, Քղի-Գասապայի երկսեռ վարժարաններն ու մանկապարտէզը, Խուրճ նոյնպէս երկսեռ ու մանկապարտէզով, Խօշմաթ եւ Հէրաթի:

Այսպէս, տեսչութեանս տակ ունիմ այժմ 14 մանչերու գպրոց, 3 աղջկանց գպրոց եւ 2 մանկապարտէզ՝ ընդամենը 39 ուսուցիչներով, 16 վարժուհիներով եւ մօտաւորապէս 2000 երկսեռ աշակերտութեամբ: Բալուի, Թէմրանի, Ասազերդի եւ Ճըպըր-Գիւղի ազգային երկսեռ վարժարաններն այլ յառաջիկայ տարիչըմանէն սկսեալ Միացեալ Ընկերութեանց հոգատարութեանը յանձնուած ըլլալով, նմիարկուած են տեսչութեանս, որով Կարնոյ չըջանակի մեր ընդհանուր աշակերտութեան թիւը մօտաւորապէս 2500ի պիտի բարձրանայ:

Միացեալ Ընկերութեանց գործակաճն ծրագիրը գործադրութեան գնելու ջանքերուս մէջ հետեւեալ դժուարութեանց հանդիպած եմ, որոնք անկարելի գործուցած են անկարելուած ծրագրին լիակատար գործադրութիւնը:

Ծրագրին տրամադրած նորամուտ դասերն աւանդելու պատրաստուած ուսուցիչներու չգոյութիւնը. — Ձեռական աշխատութեան, դժագրութեան, Մարմնամարզի, Գիւլասնեստութեան դասերն մասնաւորապէս տուժեցին նպատակայարմար ուսուցիչներու պակասին պատճառաւ: Գրեթէ ոչ մէկ տեղ յաջողեցայ Ձեռական Աշխատութեան դասը աւանդել տալ: Միայն երեք նախակրթարաններու մէջ գժագրութեան դասին առաջնորդելու կարող ուսուցիչներ կրցի գտնել, միւս բոլոր նախակրթարանները գրկուեցան: Մարմնամարզի վարժութիւնները իւրացուցած ոչ մէկ ուսուցիչ գտայ, հետեւաբար այս դասն այլ ոչ գոհացուցիչ աստիճանաւ աւանդուեցաւ քանի մը նախակրթարաններու մէջ միայն: Գիւլասնեստութեան գործնական վարժութիւնները թէև կատարուեցան արմատաւոր յարմար տեղ ունեցող բոլոր նախակրթարաններու մէջ, բայց այս արհեստին գիտական սկզբանց ու քաղաքակիրթ երկիրներու մէջ կիրարկուած մեթոտներու եւ գործիքներու մասին գրեթէ բոլորովին անտեղեկ ըլլալով ուսուցիչներն առհասարակ, մշակութեան տեղական կերպերուն կրկնութիւններն էին լոկ կատարուած վարժութիւնները:



ԱՍՏՂԲԵՐԴԻ ՎԱՐՃԱՐԱՆԻՆ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ  
ԳՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ 1910—1911

Միացեալ Ընկերութեանց որդեգրած նախակրթարանական ծրագիրն , ուրեմն , մեծ մասամբ անգործագրելի է ու պիտի մնայ ցորչափ չունենանք զայն գործագրելու կարող ուսուցչական պաշտօնէութիւն մը :

Գիւղական նախակրթարաններու առակերտաց ցրուումը գտնան ամիսներէն սկսեալ .— Այս պարագան մասնաւորապէս կը դժուարացնէ զիւղատնտեսական դասերու կանոնաւոր աւանդումը , կը խանգարէ աշակերտաց յաջորդ տարեան կարգերը , աններդաշնակութիւն յառաջ բերելով անոնց ստացած ուսման աստիճաններուն միջև ու տեղ տեղ անկարելի խկ կը դարձնէ ամաւերջի քննութիւնները : Ներկայ տարեշրջանի ամաւերջի քննութեանց ատեն զիւղերու մէջ բարձրագոյն կարգերը տեղ տեղ կէս առ կէս մնացած չէին , աշակերտաց ամբողջական թիւը գարոցին շարունակութիւնը անօգուտ ձգելու աստիճան նուազած էր ու մէկ երկու տեղ աւելորդ համարուեցաւ քննութիւն ատենալ հազիւ թէ ամբողջութեան մէկ քառորդը կամ աւելի պակաս թիւ մը ներկայացնող մնացորդ աշակերտներէն :

Մինչև որ այս չարիքին առջեւ առնելու յաջող հնար մը չի գտնուի՝ անկարելի պիտի ըլլայ զիւղական նախակրթարանները բարեկարգ վիճակի մը մէջ դնել ու գիւղատնտեսական դասերու գործնական վարժութիւնները յառաջ տանիլ :

Այս դժուարութիւնները բաւանալու նպատակաւ եղած կարգադրութիւններու ու Տնօրէն Ժողովոյ նկատառութեանը ներկայացնելիք մէկ քանի թեկադրութիւններս հոս նշանակելէ առաջ , կարեւոր է տեղեկագրել ձեռք բերուած յաջողութիւններն ալ :

Գիւղատնտեսական վարժութիւններ , մասնաւորապէս բանջարամշակութեան փորձեր կատարուեցան բոլոր դպրոցներու մէջ՝ բացի Պայաղտէ , Խուսաբերդէ , Խուբէ և Խօշմաթէ : Պայաղտ լեռան մը կողերուն վրայ կառուցուած քաղաք մը ըլլալով՝ դպրոցին մօտերը մշակութեան յարմար գետններ չի կան ու տեղին բնակչութիւնն ալ երկրագործութեամբ չի պարապիր , այլ առևտուրով ու արհեստով : Խուբի մէջ թէև խոտաւած եղաւ փոքրիկ գետին մը զնկ դպրոցի արամադրութեան տակ , բայց չիրականացաւ եղած խոտաւածը :

Քղի-Պատապալի աղբայինները եկեղեցւոյն պատկանող երկու պարտէզներէն մին մանչերու և միւսը աղջկանց դպրոցին յատկացուցին զիւղատնտեսութեան համար : Տեղեր յատկացուեցան իւրաքանչիւր աշակերտի ու բանջարեղէններ մշակուեցան , ամբողջ աշխատութիւնները կատարուեցան աշակերտաց կողմէն՝ ուսուցչաց հակողութեան տակ և անոնց հրահանգներուն համաձայն : Թէ՛ աղջկանց և թէ՛ մանչերու այս բանջարանոցները բաւ վիճակի մէջ են , միայն վերջի նեղելները քանդեցին անոնց մէկ մասը : Ուսուցչի մը հակողութեան տակ աշակերտք կը շարունակեն իրենց զիւղատնտեսական աշխատութիւնները ամբան այս օրերուն ալ :

Ուղեցի փորձել Քղի գաւառին մէջ շերամարուծութեան կարելիութիւնները , ու չերամբ տուի մը հունաւ բերել տալով՝ շերամարուծութեան տեղեակ ուսուցչի մը առաջնորդութեամբ՝ դպրոցի դասարաններէն մէկուն մէջ սուղեցանել

տուի : Կատարեալ յաջողութեամբ պատկուեցաւ այս փորձը : Քղի ամբողջ գաւառին մէջ շերամարուծութիւնը գոյութիւնն չունի և ոչ մէկ տեղ , ուստի այս յաջող փորձէն քաջաբերուելով կի՞նէ կարենանք ընդհանրացնել թիւսատաններու մշակութիւնը գաւառին մէջ՝ քանի մը տարիէն ապրուստի և շահու կարեւոր աղբիւր մը պիտի տեղեկուի բազմաթիւ բնասնիքներու և տնտեսական զարգացման կարեւոր աղբիւր մըն ալ ամբողջ գաւառին :

Օձնի մէջ ընդարձակ արտ մը յատկացուեցաւ բանջարամշակութեան , թէև վերջի ցրտերը մեղեցուցին փափուկ տունկերէն շատերը , սակայն վերստին սերմանուելով արդիւնաբերութեան մէջ են այս պահուս : Ամբողջ զիւղին մէջ մեր նախակրթարանի այս բանջարանոցէն զատ միայն մէկ բանջարանոց կայ : Գիւղերու մէջ տիպար բանջարանոցներու մշակութիւնը մեր նախակրթարաններու կողմէն , որ աւելի մեթոտաւոր կերպով ու արդիւնաւորապէս կրնայ յառաջ տարուիլ յառաջիկային , օրինակ ու գրգիտ պիտի հանդիսանայ զիւղացիներու :

Գարա-Քիլիսէի , Ալաշկերտի և Զիլիսոյ մէջ փոքրիկ տեղեր միայն յատկացուեցան բանջարամշակութեան : յուսալի է թէ յառաջիկայ տարի այս տեղերն ալ ընդարձակագոյն հողեր պիտի ունենանք մեր արամադրութեան տակ :

Ամէն տեղ Ժողովուրդը ջերմ համակրութեամբ կը վերաբերուի զիւղատնտեսական այս ձեռնարկներուն հանդէպ , ինչ որ կը զիւրացնէ մեր գործը ու կապահովէ վերջնական յաջողութիւնը : Յետաջիկայ տարեշրջանի համար նոր պայմանադրուած զիւղերը՝ ինչպէս Թէմբան , Աստղերդ , Ծրպլու-գիւղ , խոտացած են բաւականաչափ տարածութեամբ արտեր զնկ մեր նախակրթարաններու արամադրութեան տակ :

Մեր ծրագրի գործադրութիւնը թէև վերջ նշանակուած պատճառներով շատ հեռի է առկալին գոհացուցիչ ըլլալէ , բայց կարելիութեան սահմաններուն մէջ նշանակելի յաջողութիւններ ձեռք բերուած են : Իրադիտութեան , աշխարհագրութեան և նման ուսմանց դասեր՝ որ դասադրքի մէջ գրուածները թուրապէս ի բերան ուսանելու մեթոտով կ'աւանդուէին ցարդ՝ աւելի գործնական մեթոտներով աւանդուեցան , աշակերտք առաջնորդուեցան բուն իսկ իրադիտական առարկաները զննել ու ծանօթանալ անոնց յատկութեանց և հասկնալ անոնց զիրքն ու յարաբերութիւնները շրջակայից հետ : Հայերէնի ուսուցման մէջ շատ աւելի ոյժ արուեցաւ արտապայտիչ վարժութեանց քան թէ լոկ յտղական , այսինքն պղծութիւններ վաղեւախօսութեան , մեծերու ալ շարագրութեան գատերուն շատ աւելի կարեւորութիւն արուեցաւ քան թէ քերականական կանոններու ի բերան ուսուցման և լոկ ուսուցչին կողմէն եղած բացատրութեանց : Աշակերտը ինքնաշարժութեամբ միայն կրնայ ու և է լեզու իսկապէս սովորի , այսինքն խօսելով ու գրելով : Մանկավարժական այս հիմնական սկզբունքին կիրարկմանը մասին չեղտուեցաւ միշտ : Մարմնամարզի դասերու կարեւորութիւնը չեղտուեցաւ ու մարմնամարզական վարժութիւններ կատարուեցան ամէն ուր որ քիչ շատ յարմար դասատու մը կրցի գտնել : Զանքեր եղան նախակրթարաններու թարրական միջնուրրոր մաքուր պահուլու , ուսուցչաց աշակերտաց հետ ունեցած յարաբերութիւն-

ները փոխադարձ սիրոյ և վստահութեան վրայ հիմնելու յաւէտ քան թէ պատժոյ և վախի, ինչպէս նաև հրահանգելու ուսուցիչները որ իրենց օրինակելի նկարագրին ուժովը յաւէտ ազնիւ նկարագրի մը շինութեանը աշակերտներու կենաց մէջ քան թէ բարոյախօսութիւններով լոկ, որոնք ապարդիւն մնալու դատարարուած են:

Ամէն պարագայ նկատի ունենալով կրնամ վստահաբար յայտարարել թէ Մխացեայ Ընկերութեանց Կարնոյ շրջանակի նախակրթարանները, մէկ երկու բացառութեամբ, իրենց բոլոր անբաւականութեամբն ու թերութիւններովն հանգերձ շատ աւելի բարեկարգ ու արդիւնաւէտ շրջան մը բոլորեցին, քան նախընթաց տարիներու մէջ ու է ստան:



ՄԵՈՅ ՆԵՐՄԱՆԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ ՈՐԲ ԱԵԱԿԵՐՏԵՐ  
ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԱՆ 1909-1910

ԿԱՐԻՆ, 20 Դեկտ. 1909

Թուրք Ազակերտներ. — Վէլի-Պասպայի մեր դպրոցին մէջ 7-8 Թուրք աշակերտներ սկսած են յաճախել, որոնք բնականաբար մեր ծրագրին համաձայն կրթութիւն պիտի ստանան ու Հայերէն լեզուն ալ պիտի սորվին՝ դասախօսութիւններն հասկնալու համար: Այդ կողմերու Թուրքերէն ոմանք արդէն քիչ շատ Հայերէն կը հասկնան: Գարա-Քիլիսէի մեր Ա. դասատուն ալ կը գրէ մեզ թէ Քիլիստոնէից զինուորապետութեան հանդէսին առթիւ ուսուցիչներէն մէկուն և դպրոցի մէկ աշակերտին արտասանած ճառերն ընդհանուր գնահատութեան արժանացած են և թէ տեղացի պատուաւոր Թուրքերէն ոմանք փափաք յայտնած են մեր դպրոցը զրկել իրենց մանջ զաւակները. քանի մը հաս արդէն իսկ սկսած են յաճախել: Այս մասին հրահանգ ուզուած ըլլալով ինձմէ, պատասխանեցի թէ ուրախութեամբ կ'ընդունինք Թուրք աշակերտներ, պայմանաւ սակայն որ չի խանգարուի մեր ծրագրը և դասախօսութիւնք Հայերէն լեզուով ըլլան Թուրք աշակերտաց նաև, որոնք խառն պիտի դաս առնեն հայ աշակերտներու հետ:

Գիւղացեացիներ. — Խարբերգի գաւառը իր մեղմագոյն կլիմայով, բայց մանաւանդ Հայ գիւղերու պատրաստականութեանը կողմանէ գերազանցապէս յարմար դաշտ մը կ'ընծայէ Մխացեայի՝ գիւղատնտեսական կրթութեան մը բարբերները տարածելու: Հայերու մէջ զօրաւոր միտում մը կայ հող գնելու. երիտասարդաց մեծագոյն մասը Ամերիկա է և խանդով կ'աշխատի ու կը զօճէ դաստիարակութեան համար: Ամերիկա գաղթելու շարիքը աստիճանաբար նուազեցնելու ամենպայժոյ միջոցներէն մին կը համարիմ գիւղատնտեսական կրթութիւն մը տալ նոր սերունդին:

Այս նկատումներով ջերմապէս կը յանձնարարեմ Տնօրէն Ժողովոյդ որ լրջօրէն քննութեան առնէք Խարբերգիներու առաջարկը և ստանձնէք գիւղատնտեսական գիչորթիկ վարժարանի մը հողը, որով կրթական ամէնէն թանկագին օրնութիւնը պիտի շնորհէք այս Հայաշատ գաւառին՝ առանց նոյնարկուելու դրամական մեծ զոհողութեանց: Քաջապէս եմ թէ երկու տարիէն ինքնապահ պիտի կրնայ ըլլալ այս դպրոցը, պայմանաւ որ լաւ մատակարարուին վանքերը:

ԿԱՐԻՆ, 7 Օգոս. 1910

Շեքամարուծուրիւն. — Քղի-Գասպայի շերամարուծութեան փորձէն 20 օրնա խողակ արտադրուեցաւ, զոր Խարբերգ զրկել տուի վաճառուելու: Աւելի արդիւնք պիտի ունենայինք եթէ յարմար տեղ ունենայինք: Ամբողջ Գասպայի թիթեղներն ալ հաղիւ թէ այսպիսի շերամի մտուդ կրնային հայթայթել:

Փորձն պիւս յաջողած ըլլալով, անհրաժեշտ է Քղիի գաւառին մէջ թիթա-

սասններու մշակման ձեռնարկել: Շերամարուծութիւնը պիտի կրնայ ազդել ամբողջ գաւառին տնտեսական վիճակին վրայ: Ուստի, հաճեցէք Պրուսուէն կառավարական ազնուազոյն թիկնիններու սերմեր ապահովել: Կառավարութիւնը ձրի կը բաշխէ եզեր թիկնի մատաղ տունկեր, բայց չեմ կրածեր թէ փոխադրութեան ծախքն ալ կը վճարէ: Թերեւս շատ աւելի ազանով և խնայողական պիտի ըլլայ սերմերու միջոցաւ թիկաստաններ հասցնել քան թէ տունկերու փոխադրմամբ: Հաճեցէք առաջին պատեհութեամբ կառավարութիւնէն խնդրել Քոլիի գաւառին համար բաւականաչափ թիկնի սերմ և զրիկ ինձ: Հանրային Պարտուց Շերամարուծութեան բաժնէն կը ստացուին սերմերը:

Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ Շ Բ Ջ Ա Ն Ա Կ Ի Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Ը

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Շ Բ Ջ Ա Ն 1909 — 1910

Ստանձնելով Միացեալի Կիլիկիան Վարժարանաց Ընդհ. Տեսչութիւնը, ներկայ տարուոյ Մայիս 13/26ին ժամանեցի Մերսին ուր գտայ Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսը, որուն ուղղուած Ամեն. Ս. Պատրիարք Հօրմէն յանձնարարական մ'եւս ունէի: Տանն Կիլիկիոյ հրաժարած և վշտարկ Հայրապետ եռանդապին ընդունելութիւն մը ցուցուց մեզ, զոր իբր միջանկեալ պէտք է լսեմ թէ ցարդ եւս կը շարունակէ:

Ընկճուած գտայ զինք, անհուն վիշտ ու ցաւերէն՝ որ տարիէ մ'ի վեր իր հայրական գիտոս և կարեկից սիրտը կը տանջէին: Համակերպած սակայն իրական կեանքի պահանջներուն, եւ զայն գտայ այն ուղղութեան վրայ՝ որ ամէնէն բանակներ կը մտար ներկայ հանդամանքներու մէջ: Այն է՝ ազգին կրթական և տնտեսական զարգացման և լաւացումին նուիրուիլ, լո՛իկ մեջիկ, ջանալով այդու Կիլիկիոյ տարաբողջ Հայութեան սասանուած կացութիւնը դարմանելու:

Միացեալը իր փափաքներէն միտն, յարենք և մեծագոյնին, գործադրութիւնը ընդգրկած էր արդէն սիրով. այսինքն կրքախմբը, և այն ալ ամէնէն տղէտ, անկար և անտեսուած, բայց համակրելի յիսական դասակարգին մէջ: Ուստի ընական էր որ ծերունազարդ Կաթողիկոսը զնահատելով Ընկերութեան ստանձնած գործին մեծութիւնը և օգտակարութիւնը, ուղէր ըլլայ և մնայ՝ իրեն ներթափաչ շրջանակին մէջ՝ մին բարոյական նեցուկներէն, որուն ան պէտք կրնար ունենայ:

Մերսինէն, զեւ զպրոցաց այցելական սրտոյտիս չի մեկնած՝ Ատանա գացի ն. Վսեմութեան Կուսակալ ձէմալ պէլին եւս ներկայանալու, որուն նոյնպէս ներքին Գործոց նախարարութիւնէն յանձնարարական մը բերած էի:

Ուրախ եմ հաստատելու որ աւերուած Կիլիկիան վերաշինելու զրկուած կառավարական այդ բարձր պաշտօնատարը ջերմ ընդունելութիւն մը բրաւ Միացեալի ներկայացուցչին, նկատելով Ընկերութեան ձգտումն մէջ իր փափաքներուն համանման զանգ մը, երկրին մտաւորական զարգացման տեսակէտով, որուն անտեսուած վիճակը և առհասարակ տիրող սգիտութիւնը մեր Հայրենիքին յետամնացութեան ամէնէն ցայտուն պատճառներէն եղած էր: Կուսակալը խոստանալով կառավարական աջակցութիւնը նահանգին Միացեալի վարժարանաց համար, սիրով հաճեցաւ սոյլ մեզ բաց հրամանադիր մը, ուղղուած Ատանայի Կուսակալութեան քաղաքային պաշտօնէութեան, որով բազատելով Ընկերութեան ձգտումն էութիւնը կը հրամայէր հարկ եղած ատեն սոյլ խնդրուած ամէն աջակցութիւն:



ՂԱՐՍ - ՊԱԶԱՐԻ Ա. ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ  
Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Շ Բ Ջ Ա Ն 1910 — 1911

Հանրն. — Ուղեգծիս վրայ ամենէն մօտիկ վարժարանը եղող Ղարս-Պազարը այդ թուականներուն զոյց ըլլալով և Հայութիւնն ևս եայլան երած ըլլալուն, ուղղակի Միս գացի և անկէ Հաճըն մեկնեցայ:

Հաճըն մնացի շարքի մը, 22—29 Մայիս: Պատիւ ունեցայ վայելի հոն հիւրասիրութիւնը և թանկագին բարեկամութիւնը Առաջնորդ Հայր Ներսէս Դանիէլեանի, որ տեղւոյն մէջ Միացեալի ամենէն ջերմեռանդ աշխատաւորներէն եղած էր և ժողովրդեան՝ յաճախ անցիտակ՝ ու մեր Տնօրինութեան միջև արժանաւոր միջնորդը:

Հաստատ կարելի է ըսել թէ Հաճընի մեր Ուսուցչական մարմինն յաջողութիւնը ամենամեծ մասով՝ զէթ յարաբերական և վարչական տեսակէտով՝ պարտաւոր ենք Նորին Արժանապատուութեան անձուէր և անշահանդիր ջանքերուն:

Հաճընի Հայ ժողովուրդի վերաբերութիւնն ևս հանդէպ Ընկերութեան աղէկ գտայ: Հայութիւնը հոն աւելի բարեկիրթ, ուսումնասէր և յառաջդիմելու փախաբող է: Յամենայն զէպս Կիլիկեան կարեւոր կեդրոններէն եղող այս գիւղաքաղաքին ազգայնութիւնը, թէև ճշուած, ինկած և հիւժուած գծազգութիւններու, թշուառութեանց և հիւանդութեանց ճիրաններէն, բոլորն ալ արդիւնք իրենց խճողուած և աննպաստ դիրքին—բոլորովին աննպաստ ասլուտաբի հարկաւոր դիրութիւններու չգոյութեամբ, կը խոստանայ ըլլալ լեռնային Կիլիկիոյ ամենազարգացած կեդրոններէն մէկը:

Միացեալը կրնայ վտաս՛ ըլլալ որ հոն աւաղի և կամ տեղւոյն նման անբերրի և ապերախտ քարածայրերու մէջ չէ որ կը ցանէ կրթական և զաղափարական իր սերմերը:

Ձերբու. — Հարկ է խոստովանիլ թէ վերջին ծայր խանդավառ ընդունելութիւն մ'եղաւ ինձ և առողջութիւնս խանդարելու աստիճան հիւրասիրութիւն մը՝ սկսեալ Գայմագամ Պէյէն որ տեւեց մինչև և մեկնումի օրս: Ձէյթունցիք ասով կուզէին արտայայտել Միացեալի շուրջ տեսողուած խանդավառութիւնը:

Չորս թաղերու բաժնուած և 6000 անձէ բաղկացած (մօտ 1500 տուն) Ձէյթունի բոլոր մասնոց կրթութիւնը Միացեալին ձեռքն է:

Կայ Կեդրոնական վարժարան մը մէկ նախապարաստականէ և հինգ կարգերէ բաղկացած—136 աշակերտով, և 4 Մաղկոց 318 աշակերտով:

Կարգապահական և ուսումնական վիճակը ըստ բաւականին գոհացուցիչ գտայ և ուրախութեամբ տեսայ որ նախորդ տարուան ըմբոստ տղաք ամենէն հյուսիսները եղած էին:

Ձէյթունի մէջ թաղային բաժանումները, իրենց յոխորտ բնաւորութիւնն ու մասամբ մ'ալ կուսակցական ազդեցութիւններ ազդին այդ լեռնական քաջարի գաւառները նուազ գոհացուցիչ գոյնով մը կը ներկայացնեն այցելուին աչքին: Ժամանակ է աշխատիլ այս ժողովրդին մէջ ներշնչելու իր քաջութեան համապատասխան բարոյական կրթութեան ու քաղաքացիական աւաքիտութեան սկզբունքներ ևս մտաւորականին հետ զուգընթացաբար, կարենալ զիրենք իրապէս բարձրացնելու իրենց հոչակուած անունին ճշգիւ արժանի քաղաքացիութեան աստիճանին:



ՁէթՈՒՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԵՐԸ  
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՐԱՆ 1910—1911

Քիսապի վարժարան. — Միացեալի Ազգ. երկսեռ վարժարանը կը յաճախեն մօտ 240 աշակերտ, որու 130ը մասն է 110ը աղջիկ: Մանկապարտէզի չէնքը անցարժար է: Փոքրիկներ ևս կան, որ մեծերուն հետ միասին կը յաճախեն, և որոնց անջատումն աւելի օգտակար պիտի ըլլար: Եթէ տեղացիները, աղջկանց վարժարանի չէնքը արամադրեկէն ետք, քիչ մըն ալ դրամ կարենան հայթայթել ուրոյն Մանկապարտէզի մը համար, կարելի է դատէն ուսուցչուհի մը ևս բռնել:

Շերմաի գործին պատճառաւ, Ապրիլ և Մայիս ամիսները, զպրոցը ամենամեծ մասամբ կը զատարկուի: Այնպէս որ կը խորհիմ զպրոցական արձակուրդը այդ ամիսներուն ընել ինչպէս Սուէյտի մէկ երկու զպրոցաց մէջ կ'ընեն, որով աղայք չեն զրկուիր դասաւանդութիւններէ: Ամառուան ամիսներուն մէջ անտանի ըլլալու չափ օդերը տաք չեն հոն:

Աշակերտաց յառաջդիմութիւնը շատ փայլուն չէ: Անոնք հաւասարապէս սկար են թէ՛ Հայերէնի և թէ՛ Թուրքերէնի մէջ: Պատճառը լեղունին է: Հայերէնի

ուսուցումը օտար լեզուի մը դժուարութիւններն ունի իրենց համար և ասով աւանդուած միւս առարկաները եւս դժուար կ'ըմբռնեն :

Հարկ եղած հրահանգը առի ուժ տայու լեզուներուն , մանաւանդ Հայերէնին : Աստնց լաւ բմբռնումէն կախուած է միւս առարկաներու մէջ ունենալիք յատկաբնութիւններն :

Հոս ալ ժողովուրդը լաւ վերաբերում մէջ գտայ զէպի Միացեալք : Ժողովուրդը՝ շատ թարեկիրթ և ուսումնասէր— ինչ որ մասամբ մը Ամերիկեան Միօննարութեան և Հայ Բողոքականաց ազգեցութեան հետեւանքն էր՝ յաջողած էր անցեալ տարուայ զէպի միջոցին աւերուած տուները , գրեթէ ամբողջութեամբ , նորոգել կառավարական նպաստով :

Անցեալ տարի ի նորոյ շինուած էր նաև տեղւոյն մանչոց վարժարանը , երկու յարկի վրայ և քարաշէն , եկեղեցւոյ չրջափակին մէջ : Միևնոյն եռանդով այս տարի ձեռնարկուեցաւ աղջկանց վարժարանի շէնքի մը շինութեան , տեղւոյն Տէր Պօղոս քահանայ Աթիկեանի նուիրած սեփական ընդարձակ հողին վրայ : Ենչքը եթէ նիւթական , որպէս և Լատինաց կողմէ յարուցուած դժուարութեանց պատճառաւ կարելի չեղաւ աւարտել , յուսալի է սակայն որ ի մօտոյ ան ալ կրնայ զլուխ ելլել :

Լուսուորչական և Բողոքական հայութեանց յարաբերութիւնները անօրինակ կերպով մտերմայից են , ուստի և ինձ նաք եղաւ անգամ մը մեր դպրոցին մէջ , անգամ մ'եւս Բողոքականաց օրահին մէջ , խուռն բազմութեան մը ներկայութեան խօսիլ կրթական և գիւղատնտեսական խնդրոց վրայ :

Տեղացի իգական սեւր բաւական շարժումն նշաններ ցոյց կուտայ նոյնպէս : Միացեալին իրենց բերած գործօն ավակցութիւնը յայտնի է : Աղջկանց կրթութիւնը այս տեսակէտով կը խոստանայ բլլալ հոն բեղմնաւոր և օգտաշատ : Ինչպէս յայտնի է , Միացեալը ստանձնած է տեղւոյն երկուսու դպրոցներուն մատակարարութիւնը :

Այս վայրերու , ընդ որս և Քէսապի , ապրուստի գլխաւոր աղբիւրը կը կազմէ մետաքսի բերքը : Հաճի-Հապիպլի մէջ շատ յատաջացած է նաև մետաքսագործութիւնը : Երկրագործութիւնը յեռնոտ և քարուտ գիրքին պատճառաւ՝ շատ յաջող չէ , սակայն կը հասնի լաւ ձիթապտուղ և դափնի : Այս ծառերուն բազմացումը հասոյթի կարեւոր աղբիւր մը պիտի բլլար իրենց , ինչպէս նաև նարինջը :

Ղարս-Պազար . — Միսէն մօտ վեց ժամ հարաւ-արեւելք , Առանայի դաշտին ծայրը , Տորոսի սկզբնաւորութեանց վրայ , Սիւի կոտավարչութեան (Գողան) ներքեւ Գայմազամութիւնը մը : Ժողովուրդը ամառը լեռանց մէջ կը ցրուի , և ոչ ոք կը մնայ—բացի պահպաններէ—Գասապային մէջ : Գպրոցին չէնքը երկարիկ և նորաշէն է , բաւարար մանչոց և աղջկանց , որոնց երկուքին մատակարարութիւնն եւս Միացեալին վրայ է : Արձակուրդը չորս ամիսէ աւելի կը տևէ :

Ժողովուրդը թէև աղճատ Հայերէն մը գիտէ , բայց չի գործածեր : Սովորական լեզուն Թուրքերէնն է : Աշակերտաց թիւն է 180 , որոնցմէ 120ը մանչ (մէկ Յոյն և մէկ Թուրք) և 60ը աղջիկ :

Հայերէն լեզուն . — Կիլիկեան վարժարանաց մէջ Հայերէն լեզուի խնդիրը մասնաւոր ուշադրութեան առարկայ կը դառնայ , ի նկատի առնուելով որ տեղական սովորական լեզուն ընդհանրապէս Թուրքերէնն է և այն տեղերն իսկ ուր Հայերէն կը խօսին— Հաճըն , Չէլիուս և Քէսապ—բոլորովին աղճատուած բլլալով , տարբեր լեզուի մը չափ , ահագին դժուարութիւններ կը պատճառէ : Աշակերտութիւնը դժուար կ'ըմբռնէ դասագրքերուն պարունակութիւնը և մանաւանդ դժուար կը բացատրէ : Ընտանիքը , ի սպաս աննպաստ այս վիճակին դարմանումին , ընդհակառակը յաճախ կը քանդէ դպրոցին գործը : Մինչեւ որ նաք չբլլայ լեզուի այս դժուարութիւնը արմատապէս դարմանել , ուսուցման գործը բաւական դժուարութեանց պիտի հանդիպի . իսկ դարմանումը , սխաթեմաղիք աշխատութեամբ մը , քանի մը տարիներու կը կարօտի :



ՀԱՃԻՑ ԿԵՂԵՆԱՎԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԻ Գ. ԵՒ Գ. ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԵՐԸ

Հայերէն խօսակցութիւնը պարտաւորիչ դարձուցած ենք բոլոր մեր դպրոցաց մէջ , զի այդ միայն կրնայ դիւրացնել գրքերու պարունակութեանց բմբռնումը : Այս պատճառաւ ալ աշակերտութիւնը առ հասարակ շատ աւելի դիւրութեամբ կը սորվի Թուրքերէնը քան Հայերէնը :

Ուսուցչաց պակասը եւ վարժապետացի պէտքը . — Կանոնաւոր ու իրենց

պաշտօնին զիտակից ուսուցիչներ չունինք բառին բովանդակ առումովը: Անոնցմէ շատերը ոչ իսկ նախակրթարանական կանոնաւոր ուսում մը ստացած են և իրենց ուսումնական կարողութիւնը հաստատող վկայականներ չունին ի ձեռին, այնպէս որ դանուած միջակ կարողութեան տէր ուսուցիչները ստիպուած ենք պահել և ի հարկին նոյն իսկ փնտել զիրենք առ ի չզոյէ լաւագուհի:

Սահմանադրութեան վերահաստատումը եկաւ այլ աւելի զգացնել այս պէտքը, որովհետեւ նորանոր ասպարէզներու բացումովը կարող ուսուցիչներէն շատերը կառավարական պաշտօններու հետամուտ եղան և կամ նախընտրեցին կառավարական դպրոցական հաստատութեանց մէջ պաշտօնավարել:

Ասոր դարմանը պէտք է փնտել միմիայն իւրաքանչիւր չրջանակի մէջ կեդրոնական մէկ մէկ վարժապետներու հաստատումն մէջ ուր կարելի պիտի ըլլայ մասնաւոր ու բնորուած ուսուցչական կազմերու կողմէ և յատկապէս պատրաստուած ծրագրի մը համաձայն հասցնել Միացեալի գիւղական վարժարանաց մէջ դասփօսելու կոչուելիք ուսուցիչները: Այսպէսով պիտի կարենանք Միացեալ Ընկերութեան ասպարէզի իր կրթական ծրագրին հարազատ ողիկն կիրառութիւնը որուն կը ձգտի, և այս կերպով միայն պիտի կարենանք աջատիլ մեր դէմը ելող ուսուցիչներէն՝ որոնց ասիկայութիւնն ու տղիտութիւնը յաճախ դպրոցէն ներս մտնելէն և աւելը գործելէն ետքն է որ կը տեսնենք գծազգաբար, և հիւր զնկ կանոնաւոր ու վերակազմեալ աշխատութեան մը:

Փիւղասնտեսական. — Նպատակը և ցանկութիւնը այսպէս կարեւոր ծրագիր մը իրականացնելու բաւական չըլլալով, ես քանիցս առիթ ունեցայ ծանրանալ թէ գիւղատնտեսական սկզբունքներու ներշնչման համար անհրաժեշտ էր որ Ընկերութիւնն ի ձեռին ունենար գիւղատնտեսական զիտակից տարերքները զորո կարելի ըլլայ աշակերտաց տալ և կանոնաւոր դասաւանդութեան մը ստաբիլայ ընել: Տեսական Փիւղատնտեսութիւնը արդիւնաւոր ընելու համար անհրաժեշտ է և անոր միացնել գործնականը:

Մեր գիւղացիք—մեծ թէ փոքր—հողագործներ են, բայց եթէ մէկը գործնական չա՞մը արտադրող խորհուրդ մը տայ, դժուար թէ անոնք անոր հետեւին: Ասոր պաշտօնաբար չունին և հետեւաբար մնացածը զուտ խօսքեր կ'ըլլան: Ուրիշ է երբ աչքովն տեսնեն և չօգտփելի կերպով անոր օգուտը հաստատեն: Սակայն սկսելով զայն դպրոցէն, ուսանողական զբասեղաններէն, զիտութեան և կրթութեան միւս ճիւղերու նման, մենք մանուկ աշակերտութիւնը կը պարտադրենք գիւղատնտեսական ծանօթութեանց ևս նոյն սկզբունքներովը, ինչպէս են միւս առարկաները, և ատով մենք կ'ասպարովենք անոր մէջ զիտութեան նոր պաշար մը, որուն կիրառումն ան անշուշտ պիտի աշխատի, ինչպէս պիտի աշխատի իրագործել իր ուսած միւս բաները — գրելը, կարգալը ևն. — բնականաբար իրեն տեղին և հանգամանքներուն չափով:

Շատ աւելի զիւրին և արմատական պիտի ըլլայ այս կերպով սկսել գիւղատնտեսական ծանօթութեանց տարածումն, որուն ևս անմիջապէս կարելի է կցել ևս գործնականը—ինչ որ դասին մէկ ճիւղը դասնալով աւելի պարտաւորել

և սուպերիւր կ'ըլլայ աշակերտաց համար—յան նիւակունիմա զոս ևս մասնաւոր գիւղասնտեսական հաստատութիւն մը որմէ սակաւթիւր պիտի օգտուին և համայնական օգտակարութիւն մը պիտի չունենայ:

Միացեալի գիւղատնտեսական ծրագրին առաւելութիւնը պէտք է ըլլայ ոչ թէ քանի մը գիւղատնտես-մասնագէտ հասցնել որքան՝ շատ աւելի կարեւոր և օգտակար՝ անոր ճաշակը, պէտք և անհրաժեշտութիւնը ճանչցնել իր դպրոցաց միջոցաւ ժողովրդեան, և այդու ուսուցման միւս նիւթերու կարգին դայն ևս ընդհանրացնել:

Իրաւ է որ գիւղատնտեսական դասերու ամէն հետեւող երկրագործ չըլլար, ինչպէս բժիշկ, գիտնական և գրագէտ չեն ըլլար անպատճառ զիտութեանց և զբաղիտութեան հետեւողները, սակայն անժիտելիօրէն նոր ստաբիլայի մը, զիտութեան մը ճաշակը կ'արթնցնեն մեր ժողովրդեան մէջ, որ մեծամասնութեամբ հողագործ ըլլալով հանդերձ՝ անոր զիտութենէն զուրկ մնացած, անոր գործնականը զօրացնող տեսականին գաղափարը չունի:

Ուստի ատոր համար, ինչպէս առաջ ալ կրկնած եմ, ուրիշ ամէն բանէ առաջ անհրաժեշտ է անյետաձգելիօրէն պատրաստել տալ գիւղատնտեսական նախնական զիտութեանց դասագրքեր, քանի մը աստիճաններով, և զանոնք անմիջական կերպով արամադրելի ընել մեզ կիրառութեան համար:

Մէկզի թողլով ուսուցիչի բացատրութիւններ և մեծ մեծ բէքլամներ, որ թիրեւս իրենց օգուտը ունենան ժողովուրդին արամադրութեան տեսակէտէն — բարբովին անօգուտ գործնականին մէջ — մեզ կը մնայ ամեն ինչ սկսել նիւակն, փոխիկն ևս փոխիկներէն, կանոնաւոր և զբական արդիւնքի մը համեմու համար:

Այն ինչ որ պիտի կրնանք մեր դպրոցաց միջոցաւ գիւրաւ և տեսական կերպով ընել, եթէ թողունք որ մեր աշակերտներն ալ մեծնան և չօգտուինք անոնց մանկատի և սպաւորող ուղեղներէն՝ ուսուցչաց և ուսանողաց համար միանգամայն զիւրաճակնալի և մատչելի գիւղատնտեսական դասագրքերով հողագործական զիտութիւնները սիրելի դարձնել անոնց — վաղուայ գործնականին առաջին և զժուար քայլը, վաղը անոնք ևս նոյն պիտի ըլլան և ընեն, ինչ որ իրենց հայրերը այսօր: Այսինքն ոչինչ գրեթէ:

Դ Պ Ր Յ Ա Կ Ա Ն Շ Ր Զ Ա Ն 1910 — 1911

Ընդհանուր տեսութիւն. — Այն ամէն տեղեր, ուր Միացեալ Ընկերութիւնը վարժարաններ ունին, հակառակ մեծ մասամբ տղիտութենէ բղխած խայնաբաններու, ժողովուրդը տակաւ բմբունել կ'սկսի Միացեալին կրթական և բուսաբուսութեան ջանքերուն փրկաբար դերը: Եւ ինչ որ ի սկզբան բաւական խորթ կը թուէր իրենց—թէ տեղացիք ու է միջամտութիւն չպիտի ունենային դպրոցին վերաբերող գործոց, այժմ փորձով կը տեսնեն ատոր օգտակարութիւնը: Շատ տեղեր

խակ պատահած է որ ինձմէ խնդրած են ստանձնել իրենց վարժարանին վարչութիւնը, լոկ որպէս զի վարժարանին ազատի խաղալիք ըլլալէ իրենց ներքին երկպառակութեանց և անպատեհ միջամտութեանց:

Անշուշտ ասիկա չի նշանակեր որ մեր գործին դէմ դժուարութիւնք չեն մնացած այլ եւս: Դեռ երկար հարկ կ'ըլլայ աշխատիլ Գաւառական կրթական գործը անկախ և կանոնաւոր հիման մը վրայ դնելու համար, ու նոր սերունդն է, այսինքն մեր դպրոցներէն ելլող սերունդը. որ պիտի դիւրացնէ այդ դժուար և ապերախտ գործը:

Եթէ առհասարակ միշտ զիւրին պիտի չըլլայ, ամէն գործոց վրայ, լիակատար հասկացողութեան մը գալ տեղական մարմնոց հետ, երբ մանաւանդ իրենց տգիտութեան խառնուին նաև տեղական և քաղաքական կուսակցութեանց կիրքն ու էնթրիքները՝ ինչպէս այս տարի Հաճըն Սրբանոցին ծանօթ խնդրովը, այսուամենայնիւ եթէ գտնուին տեղեր բանխաց, լուրջ և կրթատէր Առաջնորդներ կամ Առաջնորդական Փոխանորդներ, մեր գործը աւելի թեթեւ կ'ըլլայ: Յաճախ կամ երբէք, հնար չէ տեղական կիրքերը լիովին հաշտեցնել մեր կրթական պահանջներուն հետ, ինչպէս որ դժուար է միշտ զիրենք միաբանեցնել զպրօֆէսը շուրջը, բայց երբ դէմերնիս կ'ունենանք ոչ թէ բանէ գործէ չի հասկցող և իրարու ընդդիմամարտ ուժեր՝ այլ տեղական ազգայնութիւնը ներկայացնող միակ անձնաւորութիւն մը, որպիսին է Առաջնորդը, անոր հետ հասկացողութիւն դիւրին է:

Շատ տեղեր, ուր չկան ազգային հեղինակաւոր ներկայացուցիչներ, և կամ գոնտուածներ իրենց արժանի բարձրութեանը վրայ չեն, ոչ միայն մենք չենք կրնար մեր ուզածը գլուխ բերել ի շահ իրենց կրթական գործին, այլ և ինչ որ պէտք է ընել սկսուածը չի բանդելու համար՝ հարկ կ'ըլլայ որ մենք ընենք: Եւ կը վստահացնեմ որ ասիկա զիւրին աշխատութիւն մը չէ: Ամէնքը առանձնապէս համաձայն են մեզի հետ, բայց կարելի չըլլար այդ առանձինները ի մի բերել:

Եթէ Առաջնորդներու անձնաւորութիւնը մեր վարժարանաց յարաբերական, տեղացեաց հետ խնդրոց և ի մի բան արտաքին կանոնաւորութեան կարեւոր ազդակը կը համարինք, վարժարանական ներքին կարգապահութիւնը, զաստիարական և կրթական ջանքերուն արդիւնաւորութիւնը եւս անտարակուս յօրէն կապուած կը մնան Տնօրէն-Դասատուներուն, անոնց նկարագրին, վարչական կարողութեան և ջանասիրութեան:

Տնօրէն-Դասատուք իրենց չրջանակին մէջ ըլլալով Ընկերութեան վարչական ներկայացուցիչը և զլիակար ուսուցիչը, իրենց ազդեցութիւնը շատ մեծ է վարժարանաց ներքին կանոնաւորութեան տեսակէտէն: Իրենց պաշտօնը—պարտաւորութիւնքն ու իրաւասութիւնքը—մանրամասնօրէն գծուած են Վարժարանական առժամայն ներքին կանոնագրին մէջ:

Իրենց զիրքն ու կարեւորութիւնը՝ յայտ տեղացեաց, պաշտօնակիցներու և աշակերտութեան՝ մենք կարելի եղածին չափ բարձրացնելով, իրենց հեղինակութիւնը յարգելի ընծայելով, միանգամայն մենք ամէն խտութեամբ պատասխանատու կացուցած ենք զիրենք իրենց պաշտօնին վերաբերող գործունէութեան

հետեւանքներուն, բնականաբար չի զազրելով ամենամօտիկ հակողութիւն մը կատարելէ և ուշադիր քննիքով մը ենթարկելէ իրենց ամէն գործողութիւնքը:

Վարժարանք. — 1. Ղարս Պագարի Վարժարանը. Աշակերտաց Հայերէնը շատ երեսի վրայ մնացած էր, ինչ որ բնական է թէ դասագիրքերու գործածութիւնը անօգուտ դարձնէր: Մասնաւոր ջանք տարուեցաւ ազգային լեզուի զարգացումին թէ՛ տեսական և թէ՛ գործնական, և արդիւնքը որքան հնարաւոր կրնար ըլլալ տարւոյ մը մէջ և այսպիսի պայմանաց ներքեւ, գոհացուցիչ կրնայ համարուիլ:

Ազգկանց մասը անցեալ չրջանին կազն ի կազը ընթացաւ: Տեղացիներու անիրաւ միջամտութեամբ նախկին վարժուչին հեռացուցուած էր. զիւրին չեղաւ անմիջապէս փոխարինել զինք: Տեղական վարժուչի մը հազիւ քսանի մը ամիս պաշտօնավարած, ամուսնացաւ և զպրօքը երեսի վրայ թողուց: Ի վերջոյ, զպրօքը չի ցրուելու համար միայն, ուրիշ տեղացի վարժուչիով մը շարունակուեցաւ մինչև տարեվերջը:

Աշակերտուչիքը փոքր էին, ուսուցումը տկար. որով և ներկայ չրջանին պիտի կարենանք միայն ճիշդ եղրակացութեան մը յանդիլ:



ՔԵՍԱՊԻ ՎԱՐՎԱՐԱՆԻՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՇԻՆԵՐԸ

Փորձեր ըրինք տեղւոյն փոքրաթիւ Բողոքականաց նետ՝ որ անուանական ազգկանց դպրոց մ'ունէին՝ դպրոցական միութիւն մը հաստատելու, այսինքն մասնաւոր նպատակ մը փոխարէն ընդունել իրենց աշակերտութիւնը, բայց խնդիրը՝ հակառակ Պատուելիին համամտութեան՝ որքան խմացայ, նետեանք մը չունեցաւ Բողոքականաց Մարաշ գումարած տարեկան միութեան մէջ տրուած որոշումին նետեանքովն որով կը գատուարտուէր և վնասակար կը համարուէին Մայր-Համայնքին նա կրթական համերաշխութեան փորձերը:

Ի վերջոյ Պատուելիէն նամակ մ'աւոխ, որով միութեան անցաջողութիւնը պարզելով՝ կը խնդրէր այնուամենայնիւ երեսէ չի ձգել իրենց աշակերտութիւնը, զի այլ եւս դպրոց պիտի չունենային... Աւելի լաւ համարուած էր անվարժարան թողուլ զիրենք, քան համաձայնել համերաշխութեան:

Բնական է որ մեր կողմէն որ և է արգելք մ'եղած չըլլալով, անխորթէն անոնցմէ և տեղւոյն Լատինաց վարժարանը դնացող աշակերտ ու աշակերտութիւնը եւս մեզի կուգան, մեծապէս ստուարացնելով ուսանողութեան թիւը:

2. Բիւսապի վարժարան. — Հոն ժողովուրդը չի միջամտեր դպրոցի գործերուն, բայց ասիկա անտարբերութեան հասնելու աստիճան, այնպէս որ զվնասուոր դժուարութիւնը պէտք եղած ատեն զիրենք գործի մղելն է: Կ'ուզին որ ամէն բան կատարուի և զուրի գայ առանց իրենց միջամտութեան և առանց իրենցմէ ամենափոքր գոհողութեան:

Բարձրագոյն կարգերու մէջ Հայերէնն ու Թուրքերէնը բաւական յառաջացած են: Տեղական հնչումին նետեանքով թէև ընդհանուր թոթովութիւն մը կը նըշմարտուի, այսու ամենայնիւ յուսալի է որ ժամանակին նետ կարելի ըլլայ տեղական աղաւաղեալ Հայերէնն՝ ի սպաս անհասկնալի՝ փոխել աշխարհաբար Հայերէնի:

Աշակերտները շատ ընդունակ են: 1911—12 շրջանին վերջը ընթացաւարտից կարգ մը պիտի ունենանք, որ մեր գործին մէջ մեզի մեծապէս օգտակար պիտի ըլլայ: Դպրոցը իր կանոնաւորութեամբը՝ Այեքսանտրէթիէն սկսեալ, մեծ համբաւ մը ստացած է և շրջակայքիններու՝ ընդհանրապէս ազէս, անխնամ և երեսի վրայ ձգուած՝ նախանձը կը չարժէ:

Ասիկա պէտք չէ ննջազրէ մեր Բէսապի վարժարանաց կատարելութիւնը — օ՛հ ասիկէ դեռ նետու ենք, այլ Լ'նկերութեան բրած վանքերուն շօշափելի արդիւնքը:

Բէսապի դպրոցական կանոնաւորութիւնը շատ օգտակար պիտի ըլլայ շրջակայ ցիրուցան և մտցուած նայութեան վերածնութեան տեսակէտով: Ամէն կիրառով զանց առնուած այդ ափ մը Հայութիւնը, շատ տեղ լեղուն իսկ կորսնցուցած և արարախօս, և Լատին այլասերիչներու ձեռքին տակ օտարանալու և կորուսելու վտանգին տակ, Բէսապէն հասնելիք նոր սերունդին շունչին տակ մասամբ մը պիտի կրնայ ուշաբերել:

Մեր դպրոցները հետզհետէ կանոնաւորուելուն նետ, տեղւոյն Բողոքական վարժարանները յաճախող աշակերտները մեզի կուգան երկուս: Եւ եթէ այսպէս կրթայ՝ յառաջիկային մենք տեղի նեղութիւն պիտի ունենանք:



ՄԱՐՏԻՆԻ ՎԱՐՄԱՐՆԻ ՌԻՍՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

3. Ուլնիոյ Տեօրհնութիւնը. — Կիլիկիան շրջանակին ամէնէն շատ գիւղային վարժարաններ ունեցող Տեօրէնութիւնն է:

1910—11 վերջացող շրջանին Չէլիժուտի Կեղրնականի Բարձրագոյն կարգը ընթացաւարտ եղաւ: Հետզհետէ հասնող ընթացաւարտները իրարմէ ազէկ պիտի ըլլան, ըստ որում արդի վերին կարգերու բովանդակ կրթութիւնը Մրացեալին գործը չէ: Այս առաջին արդիւնքը որքան ալ դեռ անզոհացուցիչ՝ այնուամենայնիւ արդող ուսուցչական սովին մէջ օգտակար եղաւ:

4. Հանքն. — Վերջացող շրջանին բարձրագոյն կարգն ընթացաւարտ չկաւ ըստ որում Երզ կարգը կը պակսէր արդէն և աշակերտութիւնը ձերմ փափաք ունէր տարի մ'եւս շարունակել ներկայ շրջանին վերջը միայն անոնք ընթացաւարտ պիտի ըլլան, համեմատաբար շատ աւելի գոհացուցիչ պայմաններու ներքեւ բաղդատմամբ Կիլիկիոյ ազգային վարժարանաց, և իրապէս օրհանման ուժ մը և անվակիցներ պիտի ունենանք, անհամեմատ աւելի ազէկ եւ կրթուած, քան անոնք, զորս ստիպուած ենք պահել իբր ուսուցիչ և որոնք իրենց զարգացմամբ և նկարագրովը նախանձելի օչինչ ունին:

Դպրոցական գործը լաւ հիման մը վրայ կը գտնուի: Տեօրէնութիւնը խանդալատ նուիրում մ'ունի գործին, բայց ինչ որ ուրախատիթ է, ժողովուրդն ալ

սկսած է գնահատել Ընկերութեան ջանքերն և իր անակցութիւնը չի խնայեր ի հարկին: Այս ամառ հոն գտնուած ատենս, երբ առիթ ունեցայ տեղւոյն ընդ-գիտմարտ կողմերուն հետ տեսնուիլ, նկատեցի որ հասարակէս գո՛ւ էին մեր գպրոցներէն, ուստի սիրով զիջան գպրոցը հանդիստ թողլու խնդրանքիս:

Վերջացող շրջանին մէջ, Հաճոնի շրջանակին ննթակայ երկու նոր վարժարաններ ևւս ունեցանք—Ճէքէ՛ վարժուհիով մը կառավարուած և Շար-Տէրէ՛ վարժուհիով մ'և ուսուցիչով մը, երկու վարժարաններն ալ մատակարարուած Հ. Բ. Ը. Միութեան նպաստով:



ՀԱՃՆԻ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԻ Ա. ԵՒ Բ. ԿԱՐԳԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Վիճակագրական. — 1910—11 գպրոցական շրջանին Ընկերութիւնը այս չորս շրջանակներուն մէջ— Ռւնիա, Հաճոն, Ղարս-Պաղար և Քէսապ — ունէր 23 վարժարան, 2ը աղջկանց (Ղարս և Քէսապ), 56 պաշտօնեաներով որոնցմէ վեցը վարժուհի, և 2060 աշակերտներով, 199ը աղջիկ և 15ը օտարազգի — Թուրք, Քիւրտ և Յոյն:

Ասոնցմէ դուրս է Ամառնային Վարժապետանոցը, որուն հետեւեցան Միաց-կայի ուսուցիչներէն 16ը:

Տարեկան ծախքը եղած է, թոյալը՝ 107331<sup>1</sup>/<sub>4</sub> դր.՝ Չանազանք՝ 10166<sup>1</sup>/<sub>4</sub> և Ամառնային Վարժապետանոցներ՝ 8620<sup>1</sup>/<sub>2</sub> դր.: Ընդամէնը 126118 դր.:



ՇԱՐ-ՏԵՐԵԻ ՎԱՐՇԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Գիւղանոցական Գաղթնագի. — Անցեալ շրջանին մէջ զժրագրար կա-րեւոր քայլ մը չի կրցինք առնել և յատաճիկային ըլլալիքներն ևւս համեմատա-բար գո՛հացուցիչ պիտի ըլլան միայն, ցորչափ այդ կարեւոր գասընթացքը աւան-դող կանոնաւոր ուժեր չունենանք:

Ամառ. Վարժապետանոցը այս տեսակէտով բաւական ծառայութիւն մը պիտի կրնայ մատուցանել, բայց ոչ լիակատար: Այնուամենայնիւ սկզբնաւորու-թիւնը, որ ներկայ շրջանին մէջ կ'ըլլայ, ապագային տեսակէտով նշանակալից և յուսատու է: Աստով Ընկերութիւնը սկիզբը կը գնէ գպրոցներուն մէջ նոր ուսուց-ման մը, նոր նիւթի մը, որ թէև ամէն սկզբնաւորութեանց պէս սնկատար և թերի պիտի ըլլայ, բայց հեղհեղէ ու համող նոր ուժերու և աշակերտաց ըմ-բռնումին ու զարգացման հետ պիտի կրնայ կատարելագործուիլ և զբաւան ար-դիւնքներ ընծայել:

Գործին յուսահատական կողմը Գիւղատնտես անակիցներ չունենալիս և կամ աւելի ճիշդ չգտնելիս է: Գիւղատնտեսութեան մասնագէտներ չեն զիջա-նիր գաւառական հետաւոր անկիւններ այդ գիտութիւնը տարածելու և ընդհան-րացնելու այնքան ասպեպիտ որքան օգտալատ գործին նուիրուելու: Գործին մէջ

հրատարակելու կը պահանջուի, թէ շահ կամ անձնուիրութիւն, չգիտեմ, սակայն իրողութիւնն այն է որ այդ մասին մեր արամազրեղի ուժերը շատ աղքատիկ են:

Պաւստոսյ անուպահով վիճակը և յարատեւ անստուգութիւնը նմանապէս, ուղեւորութեանց և գիւղական-դաշտային կեանքին հետ կապ ունեցող այս պարսպմունքը շատ հաճելի չեն կացուցաներ արդարեւ: Միւս կողմէն, բռնապետութեան ժամանակներէն արտասահման հայաձական երիտասարդներէն այն փոքրաթիւ մասն եւս, որ հետամուտ եղած է գիւղատնտեսական գիտութեանց, բացի վերոյիշեալ պատճառներէն՝ ղրնուորագրութեան պատճառաւ ալ չուզեր երկիր վերադառնալ, երբ անդին այդ արհեստով կրնայ խաղաղ և շահաւէտ պայմաններու տակ աշխատիլ միշտ:

Փախաքելի է որ յար և նման Վանայ Վարժապետանոցին, որ ընդ՝ ուսուցիչ-դաստիարակներ պիտի հասցնէ, հնար ըլլար և Կիլիկիոյ մէջ—որ երկրագործութեան տեսակէտէն Փոքր-Ասիոյ ամէնէն կարեւոր տեղերէն մէկն է—հաստատուել Պիւղատնտեսական վարժարան մը—“Ecole Pratique d'Agriculture” ներուծրագրով—ուրիշ կարենալին ելլել և՛ վարժ հողագործներ և՛ գիւղատնտեսութեան դասախօսներ:

Դպրոցական շէնքերը. — Ոչ նուազ կարեւոր խնդիր մ'ալ մեր վարժարանաց շէնքերուն խնդիրն է: Տեղեր կան ուր ոչ միայն շէնքերը կանոնաւոր, առողջապահիկ և յարմար չեն՝ այլ և անբաւական հետադիմ շտապող աշակերտութեան համար:

Ձի տեսած կարելի չէ դադար մը կազմել այն խեղճուկ, մուժ և խոնար խորշերուն վրայ որոնք գիւղերու մէջ կոչուած են ծառայելու դպրոցական շինութեանց տեղ:

Շարունակել այդ պայմանաց մէջ դպրոցը, պիտի ըլլար դատապարտել ազատ օդին և լոյսին վարժուած գիւղական մանկութիւնը անօգուտ չարարանքի մը: Մէկ քանին այդ դպրոցներէն ցերեկին խիկ ճրագ չի վստած հնար չէ տեսնել: Յատակը հող է, խոնար և աղտոտ:

Ստիպուեցանք դպրոցներն գոցելու, սպառնալիքի երկիւղով պարտաւորցնելու համար տեղացիները նոր շէնքերու շինութեան, երկու յարկի վրայ, տախտակամածով, պատահանով և նստարաններով:

Անցեալ շրջանին, հուսկ ուրեմն, դպրոցական շէնքերու շինութեանց ձեռնարկեցին՝ գիւղերէն Փոնուզ, Կապան և Շիվիլի: Գիրէճ նորէն իրարու մէջ անմիաբան՝ բան չըրին, որով ներկայ շրջանին դպրոցը չի բացուեցաւ, մինչև որ քիչ շատ յարմար շէնք մը չի տրամադրեցին:

Հաճոյն Կեղրնականը՝ քառապարկ, որուն Ա. Բ. և Գ. յարկերը միայն գործածելի, վերջապէս լրացաւ: Բայց դժբաղդարար օրընտօրէ շտապող աշակերտաց համեմատութեամբ ան ալ դեռ չի սկսած՝ կը սկսի փոքր դալ: Այս շինութեան երեսէն Հաճոյն Աղզ. իշխանութիւնը մօտ 200 ոսկի պարտքի տակ մնացած է:

Քէսապի մէջ Աղջկանց վարժարանին շէնքը գրեթէ լրացած է: Կը մնայ միայն արտաքին ծփը, ինչպէս և մանչոց բաժնին: Բարեգործական Միութեանէն

ստացուած նպատովը պիտի ձեռնարկուի գրասեղաններուն շինութեան, բակին շրջապատ քաշելու և մնացած պահանջներուն: Այս դպրոցը սեպտեմբերին պիտի գործուի Ընդ՝. Միութեան անունին: Ինչպէս գիտէք բացի Ընդ՝. Բարեգործականէն, Միս Չէմպլըս ևս 140 ոսկի օգնութիւն մ'ըրաւ ատոր:

Քէսապի մէջ ալ, որպէս Ղարս և Զէթուն, դպրոցական շէնքերը երթալով անբաւական կը դառնան շտապող աշակերտաց համեմատութեամբ:



Քէսապի ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ՄԱՐԾԻՆ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ

Օտար վարժարանները՝ որոնք ցարդ Կիլիկիոյ մէջ կրթութեան մենաչնորդ պահած էին՝ ի վնաս տոհմային զարգացման, ամէնէն շատ աշակերտ ունէին, բայց մեր վարժարանաց կանոնաւոր յատաճգիմութիւնը պատճառ կ'ըլլայ որ նոն յաճախողները հետզհետէ մեր դպրոցները գան: Մեր դպրոցները ներկայ վիճակին մէջ խիկ, անոնցմէ շատ աղէկ են և կրթութիւնը աւելի դրական է և գործնական:

Ատիկա նուազ մտահոգութիւն մը չէ: Ի՞նչ ընել ղիմող աշակերտաց համար, երբ շէնքերը բաւական պիտի չի գան, ենթադրելով որ կարողանանք նոյն խիկ բաւականաչափ ուսուցիչներ հասցնելու:

Աշակերտաց այս յաւելումը աւելի պիտի շեշտուէր, եթէ կարգ մը տեղեր տեղական նպատատալու համար մուշի գրամ չի գանձէին: Որովհետեւ շատ ծնողք-

ներ նախամեծար կը համարին դեռ—ըլլալով նոյն խակ ունեւոր, տղաքնին զպրոց չլրկել տարեկան քանի մը զըջ. մուտքի կամ գիրքի գրամ չտալու համար:

Այսու ամենայնիւ, եթէ թողունք չէնքերու անբաւականութիւնը, աշակերտաց յարածուն վիճակը պատճառ պիտի ըլլայ որ յառաջիկային մէջ Ընկերութեան պիտոճէն՝ ուսուցչաց յաւելումով՝ նոր անձում մ'ունենայ, որմէ բոլորովին խոյս ապ հնար պիտի չըլլայ: Ինչպէս մերժել եկող արժանաւորները:

Ուսուցչական խնդիրները. — Ուսուցչական ժողովները. — Ներքին Կանոնադրութեան արամագրութեան համաձայն, վերջացող շրջանին մէջ Տնօրինական շրջանակները անխափան ունեցան իրենց այդ ժողովները: Բնական է թէ Ուսուցչական ժողովները առանց վարչական հանգամանք մ'ունենալով՝ այլ լոկ խորհրդակցական ըլլալով, և այս եւս միակայն դպրոցական եւ մանկավարժական խնդրոց չուրջ, անոնք կը ծառայեն աւելի զազախարաց չիտմի, փոխադարձ հասկացողութեան և կրթական գործին բարւոք իրագործումի միջոցներուն որոման, ու իրենց ցանկութիւնները չեն կրնար գործադրուիլ ցորչափ Տնօրիններէն իւրացուցուած չառաջարկուն մեղ:

Այս կերպով Ուսուցչ. ժողովներու ձեռամբ մեծապար և անօգուտ ձեռնարկութեանց առաջըր անուելով հանդերձ—որոնք յաճախ անմեղ երեւոյթներով առաջ կուգան՝ Վարչութիւնը լայնօրէն կ'օգտուի նաև ուսուցչաց փորձառութենէն բոլոր նպատակայարմար թեւադրութիւններէն:

Ուսուցչ. ժողովները այն մասնաւոր օգուտն եւս ունին, որ ուսուցչաց մէջ ծագող անհամաձայնութիւնքն և այլ խնդիրները դեռ իրենց սկզբին ու տաք չեղած միջոցին՝ ամէնուն խորհրդակցութեան առարկայ դառնալով, առանց արժանապատուութեան խնդիր յարուցուելու կրնան կարգադրուիլ և զպրոցը ներքին երկպառակութենէ՛ գերծ պահել՝ հնար եղածին չափ անշուշտ:

Ուսուցչ. ժողովները միանգամայն զպրոց մըն են խակ ուսուցչաց համար, որ փորձ Տնօրինները երբեմնակի վիճարանութիւններով և գծնփէրանաներով կը քրքրեն, կը բացատրեն և կը լուսարանեն կրթական և դաստիարակչական գործոց շուրջ մեծ հեղինակութիւններէ արտայայտուած միտքերն ու մեթոտները:

Տեղական նպաստ. — Գաւառացիները երկար տարիներ վարժուած Միացահայէն ձրի վարժարաններ ունենալու, բնական է որ դժուարանային իրենց կողմէն եւս գումար մը յատկացնելու զազախարին և առաջարկին, ինչպէս որ կը զփկամակին երբ իրենց զաւակաց գրքերուն արժէքը կը պահանջուի իրենցմէ: Այսու ամենայնիւ այդ միևնոյն տեղացիները, երբ իրենց զաւակները օտար և Միսիոնարական հաստատութիւններն ու վարժարանները կը զրկեն, կրէք չեն արանջար և անմուռնջ կը վճարեն անոնց պահանջած թոշակը, այլապէս աւելի ծանր և մեծագումար, քան ինչ որ մեզի չպիտի տային:

Ասկիւ գաւառացւոց անպարտաճանաչութեան ոգին ճնամ է, և որ չնչտուած է ապա, ազգին իրենց հանդէպ՝ դժբաղդ պարագային մէջ՝ ցոյց տուած զրական—ըսենք զրամական աջակցութիւնէն և վերաբերումէն: Ասկիւ հետեւանքն է նպատակ ողորմութեան ձեւին սակ մատակարարութեան ապականիչ

ազդեցութեան, որուն դէմ կռուիլը այժմ սրբազան պարտականութիւն մը պէտք է համարել:

Նոր բացուելիք զպրոցաց համար տեղական նպատակն պահանջը աւելի զիւրին է կարգադրել, ըստ որում իրենց համար մեր աջակցութիւնն ունենալու ուրիշ ճար չեն տեսներ, և ընդունելով ու տալով կը վարժուին: Աւելի դժուարը արդէն բացուած տեղերուն համար է, մանաւանդ Ուլնիոյ շրջանակը, որ ցարդ ստրկած է քաշելը քան տալը:



ՋԵՅՅՈՒՆԻ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Անցեալ շրջանին մէջ ընդամէնը 9617<sup>1</sup>/<sub>2</sub> զըջ. միայն կարելի եղաւ ստանալ տեղացիներէն—Հածըն 3240 զըջ. Ղարս-Պազար 3240 զըջ. Բէսասպ 3137<sup>1</sup>/<sub>2</sub> զըջ. (Փոզայի նուէրովը միայն):

Ներկայ շրջանին համեմատաբար շատ աւելի պիտի առնենք, ինչպէս և գրեմական վաճառումներէն, որուն հասոյթը անցեալ շրջանին եղաւ միայն 3040 զըջ. — Հածըն 1186 զըջ. Ուլնիա 452 զըջ. Ղարս 357 զըջ. և Բէսասպ 935 զըջ.: Տեղական ժողովուրդը պէտք է վարժեցնել յամբօրէն և առանց շատ զգալի ընեու որ չի խրախնի իրենց պարտականութեանը զիտակցութեան: Տեղացիք շատ լսեղ՝ ուր եկեղեցապատական եկամուտներ չունին՝ մեզի տալիք նպատակն հայ-

թայթելու համար մուսթի գրամ կը հաւաքեն աշակերտներէն : Այս պարագան շատ գծուարութիւն կը յարուցանէ դպրոցական վարչութեանց մէջ :

Լեզուի խնդիրները. — Հայերէնի վարժութեան խնդիրը, զգրագրարար դեռ կը մնայ ամենակարեւոր պահանջներէն մէկը Կիրիկեան ազգային վարժարանաց : Բարեբաղդարար մեր հաստատութիւնները այդ էական պէտքին գոհացման համար ամէնէն յատկապէս մնին : Ազգային լեզուն մեր դպրոցաց մէջ կանոնաւորաբար յառաջ կ'երթայ, առանց վնասելու պետական լեզուին վարժութեան :

Ոչ-Միացեալ վարժարանաց մէջ տարբերութիւնը շատ քիչ զգալի է : Նոյն իսկ Մերսինի պէս տեղ մը, ուր գաղթական հայութիւնէն կարեւոր մաս մը հայախօս է, դպրոցին մէջ Թուրքերէնը տիրող է և ուսուցիչները՝ մեծաւ մասամբ՝ այդ լեզուով կը խօսին :

Բողոքականները, որոնք Կիրիկիոյ կրթական մեծամեծ հաստատութիւններն ունէին ձեռքբերելու և երկեսու վարժապետներէն մեծ մասը իրենցմէ կ'առնէին, այդ տեսակէտով իսպառ բացասական արդիւնք մը տուած են և ի մասնաւորի վարժուչիները՝ մասնաւոր Հայերէնի մէջ՝ շատ յետադէմ են, թէ և անոնցմէ շատերը զօրէճական վկայականներ ունին : Բարեբաղդարար անոնք ալ սկսած են մասնաւոր ուշադրութիւն դարձնել Հայերէնի դասաւանդման :

Դպրոցներու սարեկան տեղադրութիւնը. — Կիրիկիոյ զանազան մասերուն կլիմայական տարբերութիւններն և տեղական պայմանները անհնար կ'ընեն դպրոցաց տեղադրութեան ամիսները միեւնոյն ընել : Կարտի մէջ ութը ամիս է առ առաւելն, Չէլթուշի մէջ 8 1/2-9 ամիս, Հաճըն ու Քէտայ՝ մօտ 10 ամիս : Կարս-Պազարը որուն բնակիչներէն մեծ մասը դրսեցի են—Մարաշէ և Հաճընէ — Մայիս գարուն տեղերնին կ'երթան և տեղացիք ալ լեռները կ'ելլեն ու Հոկտեմբերէն առաջ չեն գար : Լեռնազնացութեան պարագան աւելի չեչտուած է զիւղերու մէջ : Ծառ տեղ ինչպէս Փոնուզը՝ վեց ամիսէն աւելի դպրոց չենք կրնար ունենալ, և այս վիճակը դպրոցական աշխատութեանց տեսակէտով պարզապէս յուսահատական է : Հայաստանի կողմերը, ամառը բացուելուն, տղայք դուրս կը տարուին երկրագործական աշխատութեանց պարագայնելու համար, բան մ'որուն առաջքը կամաց կամաց թերեւս կրնայ առնուիլ : Հոս տեղերը թէ՛ այդ պարագան կայ և թէ՛ ամբողջ զիւղին լեռ կլկլու խնդիրը, որ զիւրաւ դարմանուողներէն չէ : Նոր վարժարանաց մէջ մենք տեղադրութեան խնդիրն ալ տեղացւոց հետ բանակցութեան պայմաններէն մէկը կ'ընենք, բայց սպարդիւն յաճախ : Թերեւս ժամանակը և նոր համող սերունդը կարենան զիւղական վարժարանաց այս կարեւոր թերին՝ գէթ մասամբ մը՝ դարմանել :

Աւակիրաց առողջութիւնը. — Գաւառաց մէջ կարգ մը տարաբնուի վտանգաւոր հիւանդութիւններ կան, որք ժամանակին հետ տեղական և տեւական հանգամանք մը ստացած են, և որոնց ակամայ զոհերը կ'ըլլան ու կը մնան անոնց անմեղուկ զաւակները :

Սպասել որ անոնց ծնողքները խելք ունենան իրենց իսկ ձեռամբ իրենց հարազատներուն պատճառած ցաւերը տեսնել և անոնց գէմը առնել աշխատիլ :

ընդունայն յոյս մը պիտի ըլլար : Իսկ այս վիճակին դէմ անտարբեր մնալը, պիտի ըլլար այդ սպանիչ ցաւերուն յաւերժացման պատճառը դառնայ :

Փանկոց տեղական բժիշկները հրաւիրեցինք քննել աղաքը : Ըրին, բայց չարունակիլ չեն ուղեր, իրենց համար վճար չեղած ատեն մասնաւոր պարտաւորութիւն մը չի համարենուն : Եւ յետոյ մի միայն նայլը բաւական չէ : Եթէ լոկ հիւանդներն ճանչնալ և ջոկելու գործն ըլլար՝ բժշկի ալ պէտք չէինք ունենար, կարեւոր անոնց դարմանումի խնդիրն է, և ասիկա ալ առանց մասնաւոր գոհողութեան չըլլար :

Հ. Բ. Ընդհ. Միութիւնը այցելու բժիշկ մը որոշած է զրկել այս կողմերը վեց ամսուան համար, մօտ 200 անգ. ոսկիի ծախքով : Այդպիսի բժիշկ մը աւելի զարդ պիտի ըլլայ, քան իրական օգուտ : Փանի մ'օր մէկ տեղ կամ զիւղ մը մնալ ինչ արժէք կրնայ ունենալ :

Եւ յետոյ ամէնէն կարեւոր կեդրոններն ալ բժիշկներ կան, խնդիրն անոնցմէ օգտուիլն է, և անոնք աւելի օգտակար կրնան ըլլալ իրենց տեւական յատկութեամբը, քան այցելու բժիշկ մը իր թոռուցիկ հանգամանքովը :

Աւելի աղէկ պիտի ըլլար նախ՝ մեր ամէնէն կարեւոր կեդրոններուն մէջ պզտիկ դեղարան մ'ունենալ ամէնէն անհրաժեշտ դեղերով, և սպա բանակցիլ տեղական բժիշկներու հետ, որոշ ամսականով մը—1-2 ոսկի առ առաւելն—պարտաւորցնելով զիրենք՝ որպէսզի բացի պարբերական ընդհանուր զննութիւններէ՝ ամէն անգամ որ իրենց զիմում ըլլուի Դպրոցական վարչութիւնէն, նային հիւանդ աշակերտներն և նոյն իսկ աղքատ ծնողքներն, որոնք բժիշկի վճարելու կամ զիւղի մը կարող չեն : (\*)

Նմանօրինակ կազմակերպութիւն մը օգտակար պիտի ըլլար նաև չրջակայ զիւղական վարժարանաց աշակերտներուն և ի հարկին ծնողքներուն, որոնք պիտի կրնան օգտուիլ թէ՛ դեղերէն և թէ՛ բժիշկէն : Ապա թէ ոչ աղոց առողջական վիճակը կարելի պիտի չըլլայ կանոնաւոր դարմանումի ենթարկել, և մէկին ցաւը պիտի կրնայ մինչև և իսկ առողջ ընկերներուն և ս վարակիլ :

(\*) Ուրախ ենք յայտարարելու որ Տեղեկատիրս մամոյ յանձնուելու պահուն Հ. Բ. Ընդհ. Միութեան Պատ. վարչութիւնը նամակով մը մեզ կը հարգողք մէ ընդունած է Կիրիկիոյ Տեսչի այս առաջարկը և արամաղբիկի գոմարն ալ արդէն զրկած է իր նպատակին գործածելու համար :

### Կ Ա Ր Ն Ո Յ Շ Ր Ջ Ա Ն Ա Կ Ի Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Ը

Գ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն 1910 — 1911

Ներկայ դպրոցական տարելըձանին ունինք 21 մանչերու նախակրթարան և 9 հաս ալ աղջկանց, նաև 2 մանկապարտէզ ընդամենը 32 դպրոց: Աշակերտաց ընդհանուր թիւն է 3008, որոնց 2306ը մանչ են և 702ը աղջիկ: Այս 32 դպրոցներուն մէջ կը պաշտօնավարեն 63 ուսուցիչ և 28 վարժուհի:

Նոր դպրոցներ. — Նախորդ տարելըձանին մեր ունեցած վարժարաններուն վրայ հետեւեալներն աւելցան ներկայ տարելըձանին՝ Թէմրան, Ասաղբերդ, Ճրպլու Գիւղ, Հէրտիֆ, Բալու, Հաւաւ և Արթիւն, ամէն ալ երկսեռ՝ բացի Արթիւնէ: Ուրեմն, ներկայ տարելըձանին Միացեալի հովանաւորութեան տակ առնուեցան 13 վարժարաններ: Եթէ ասոնց վրայ աւելցնենք Քղի-Պատապալի և Խուրի երկսեռ վարժարաններն ու մանկապարտէզները և Խօշմաթի դպրոցը, որոնց վարչութիւնը նախորդ տարելըձանի վերջերք միայն յանձնուեցաւ Տեալութեանս և ներկայ տարելըձանին միայն վերականն նոր կարգադրութիւններով, կ'ունենանք 20 նոր դպրոցներ որ ներկայ տարելըձանին աւելցան: Կարճոյ չըլանակի Միացեալի վարժարանաց թիւը աւելի քան կրկնապատկուած է ուրեմն 1910—11 տարելըձանին:

Զարգացում. — Բոլոր այս վարժարանաց մէջ պաշտօնավարող ուսուցչաց թիւը զրիթէ եռապսակեցիկ և որակն ալ ըստ կարելոյն յարձրացուցինք, որով կարելի եղաւ աշակերտաց կարգերու դասաւորում, կանոնաւոր դասառութիւն՝ որչեպ ազանքու մէջ և որոշեալ թիւերով: Մանչերու դպրոցներն միայն օրինակ առնելով՝ Թէմրանի դպրոցը կը կառավարուէր նախապէս—մեզ փոխանցուած չըլանին նախորդող տարին — միակ դասատուի մը կողմէն. այսօր 100է աւելի աշակերտներով նոյն դպրոցը կը կառավարուի երեք փորձառու և կարող ուսուցիչներով:

Ասաղբերդ ունէր մէկ ուսուցիչ, այսօր ունի երեք. Հէրտիֆ մէկ՝ այսօր երեք, Բալու երկու՝ այսօր չորս, Արթիւն մէկ՝ այժմ երկու, Խուրս երկու՝ այժմ երեք, Քղի-Պատապա չորս՝ այժմ վեց և այլն: Նկատի ունենալով ուսուցչական կազմի այս բարեբեւեմը, քանակի և որակի տեսակէտներով միանգամայն, կրնամ վստահարար յայտարարել թէ սա նուազն կրկնապատիկ աւելի զարգացում ունեցած են Միացեալի հովանաւորութեան տակ առնուած վարժարաններն ընդհանրապէս և կրցած են իրականացնել ճոխալոյն ծրագիր մը՝ կարգաւոր-

րուած դպրոցի մը մէջ: Այս արդիւնքը բացարձակապէս անկարելի պիտի ըլլար՝ եթէ իրենց վիճակին ձգուած ըլլային այս վարժարանները:

Տեղացիներու նպաստ. — Միացեալը այս դպրոցները իր հովանաւորութեան տակ առնելով՝ երբեք ձրիակերութեան չէ վարժեցուցած տեղացիներն, ինչպէս հետուէն զիտողներ կ'աւարկեն երբեմն, ընդհակառակն սա նուազն կրկնապատիկ զո՞ղորութեանց զրգած է տեղացիներն: Այսպէս, Ասաղբերդիք տարեկան 20 լիւրայի պիւտծէով մը կը կառավարէին իրենց դպրոցը, այժմ Միացեալին կը վճարեն 68 ոսկիի նպաստ մը: Թէմրանցիք նոյնպէս 20 ոսկի տարեկապով ուսուցիչ մը կը պահէին, այժմ Միացեալի նպաստ կուտան 95 ոսկի: Խուրս կը վճարէր 60 ոսկի՝ այժմ 100, Հէրտիֆ 20՝ այժմ 50, Բալու իրը 45 ոսկի՝ այժմ 120, նոյնպէս ուրիշ տեղեր:



ՕՅՆԻԻ ՎԱՐժԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Ընկերութեանց ստանձնած գերը Քղի-Պատա չըլանակաց մէջ կը կայանայ ոչ այնչափ այդ դպրոցներուն համար բրած իր գրամական զո՞ղորութեանց՝ այլ յաւէտ անոնց մատակարարութեանը մէջ: Գիւղական համայնքներ երբեք տեսականօրէն բարեկարգ ու զարգացուն դպրոցներ չեն կրնար ունե-

նայ, մինչև անոնց վարչութիւնը չյանձնուի տեղական ազդեցութիւններէ անկախ մարմնոյ մը վերին հսկողութեանը՝ ինչպիսին է Հայոց Միացեալ Ընկերութիւնը:

Կը շեշտեմ հոս իմ խորին համոզումս թէ Միացեալ Ընկերութիւնը խորը դեր մը պիտի կրնան կատարել մեր ազգային կրթութեան գործին մէջ՝ եթէ զբամական գործութիւններ չստանձնելով հանդերձ՝ պարագայից ներսնին չափ չատ թրով զպրոցներու մատակարարութիւնը միայն ստանձնեն: Քղիի և Բայուի գրեթէ բոլոր գիւղերը կրնան իրենց զաւակաց տարրական նախակրթութեան ծախսերն հոգալ ամբողջովին: Միացեալը կարելու է այս տեղերէն իր նպաստի բազմաաբար փոքրիկ գումարներն և անոնց համագումարով հիմնելու է՝ կեդրոնական տեղ մը՝ գիւղատնտեսական բարձրագոյն նախակրթարան մը, որուն պիւտե՛կն մեծագոյն մասը կրնայ զոցուիլ աշակերտաց թոյակներով: Այս տեսակ զաւանդու կրթական ամենամեծ պէտքն է կեդրոնական բարձրագոյն նախակրթարան մը, զոր լրացնելու նախախնամական դերին վսեմ կոչումն ունի Հայոց Միացեալ Ընկերութիւնը:



ՅԻՓՈՂԻ ՎԱՐժԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ

Ուրիշ կարեւոր նկատուածով մին ալ անհրաժեշտ է Միացեալի բոլորովին անկախ վարչութեանը տակ կեդրոնական բարձրագոյն վարժարան մ'ունենալ գիւղային զպրոցներու խրաքանկուր կուռ խմբակցութեան մէջ: Տեղացիներու

հետ պայմանաւորմամբ կառավարուած զպրոցներն, որոնց պիւտե՛կն մեծագոյն մասը տեղական Ազգ. մարմիններէ կը հայթայթուի, երեւութապէս միայն անկախ են: Արտաքին ազդեցութիւններ անուղղակի միշտ կը ներգործեն զպրոցի ներքին կեանքին: Ուսուցչական անհամերաշխութիւններ, որոնք անպակաս են զարգացման ու ազնուացման պահանջուած բարձրութեանը վրայ չգտնուող ուսուցչութեան մը մէջ, իրենց արձագանգներն կ'ունենան ժողովուրդին մէջ ու կողմնակցական քաջակրթութիւն գտնելով կը սաստկանան՝ խանդարելով զպրոցին խաղաղ զարգացումը, ապականելով անոր բարոյական մթնոլորտը, տկարացնելով աշակերտաց տիրութիւնը և նոյն իսկ սպաւնալով զպրոցին գոյութեանը: Ներկայ տարեշրջանին Պայազխի և Հաւաւի մեր զպրոցները այսպիսի տեսարաններ ընծայեցին: Թոշակաւոր աշակերտներով և ստանց տեղական որ և է մարմնոյ հետ պայմանաւորմամբ մատակարարուող անկախ զպրոցի մը մէջ չպիտի կրնային այսպիսի սաստկութեան համուիլ ուսուցչական անհամերաշխութիւններ: Գրաստային կեդրոնական անկախ վարժարաններ անհրաժեշտութիւններ են բացարձակապէս:

Աղջկանց վարժարաններ. — Գաւառի մէջ առ հասարակ չէ ճանչցուած աղջկանց դաստիարակութեան աւագ կարեւորութիւնը: Տեղ տեղ լոկ մանչերու զպրոց բացուած է, աղջիկները զուրկ թողուելով տարրական նախակրթութեան մ'իսկ բարեքներէն: Ուրիշ տեղեր եթէ աղջկանց զպրոց ունենալ խորձած են, միշտ աւելի սժման ուսուցչով կառավարել փորձած են քան մանչերունը:

Ներկայ տարեշրջանին Միացեալի նոր վարժարանները բոլորն ալ աղջկանց բաժին մ'ունին, բացի Արթիւնէն ուր հակառակ ջանքերուս չկարողացայ աղջկանց բաժին մըն ալ ունենալու արտօնութիւնը ձեռք բերել: Եւ կարողագոյն այժմեր հայթայթեցի ուր որ աղջկանց անուանական զպրոց մը միայն կար: Այսպէս Քղի-Գրասպա ուր աղջկանց բաժնին մէջ կարող վարժուհի չկար, այժմ կը պաշտօնավարէ ուսուցանելու մասնաւոր ընդունակութեամբ կարող վարժուհի մը: Նոյնպէս Խուբս, Նոյնպէս Բայու, ուր մէկ վարժուհի մը կ'ուսուցանէր 80է աւելի աղջկանց խառնիճաղանձի մը, այժմ կ'ուսուցանեն երեք վարժուհիներ, մին կարող մանկապարտիզպանուհի մը: Թէմբան կը պաշտօնավարէ երկարատեւ փորձառութիւն ունեցող և բարձրագոյն կրթութիւն ստացած վարժուհի մը, որ կանանց զարգացման համար ալ անձուիրարար կ'աշխատի:

Բայց զժբազդարար Միացեալն ալ նախընթաց տարուան մէջ իր բացած զպրոցներուն մեծագոյն մասը մանչերու միայն յատկացուցած է, զրիկելով աղջիկները: Ասիկա Միացեալի բարձր անունը արատաւորող զրկանք մը կը համարել իջական սեռին: Գարա-Քիլիսէ, Խաստուր, Խաչու, Վէլի-Պապա, Սարը Գայա, Խօշմաթ և Արթիւնէ՝ աղջկանց զպրոց բնաւ չկայ, աղջիկները հասարակ կարգալ գրել իսկ չեն կրնար ուսնիլ: Բացարձակապէս անհրաժեշտ է դարման մը տանիլ այս մեծ չարիքին: Ձիթող և Օձնի թէև Միացեալը մանչերու զպրոց միայն ունի, բայց Ազգանուէր-Հայուհեացն ալ ունի աղջկանց զպրոցներ: Գրամական ու վարչական խնայողութիւն մը պիտի ըլլար և զպրոցներու բարեկարգ ընթացքին մեծապէս նպաստաւոր, եթէ Ազգանուէրն ու Միացեալը կարե-

նային գործակցարար միացնել այսպիսի տեղերու մանչերու և աղջկանց անձնու գպրոցներն: Խնուս-Բերդ ալ Հայ-Աւետարանականաց գպրոցը, որ աղջկանց ալ բաժին մ'ուճի, մասամբ կը լրացնէ աղջկանց գպրոցի պակասը:



ՔԷԻ-ԳԱՍԱՊԱՅԻ ՎԱՐՉԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻՆԵՐԸ

Գպրոցական շենքեր. — Յարմար ուսուցիչներէ վերջ՝ գպրոցական շէնքերու անյարմարութիւնը և կարասեաց չգոյութիւնն է որ ամէնէն աւելի կը դժուարացնէ մեր գործը: Գրեթէ բոլոր շէնքերն ալ խոշոր պակասութիւններ ունին, իսկ ունեւք բացարձակապէս անգործածելի են: Խաչուի մէջ իսկական մութ անտ մըն է յատկացուած գպրոցի: Հաւաքի աղջկանց գպրոցը դժմ մը կրնայ համարուիլ այն տարրերութեամբ որ անձրիւ մը դպրու պարագային ջրհեղեղ մը կ'եննէ գպրոցին մէջ: Քղի-Գասապայի երկուս վարժարանն ու մանկապարտէզը բոլորովին խարխուլ և անբաւական են: Թ. Գալէի գպրոցները աւերակներ են, հին Միացեալի օրերէն անսխալի մնացած: Հէրաթի գպրոցը վարձու լռնուած մութ ու կոշտ սենեակ մըն է միայն, ուր չափազանց խճողում կայ: Իսկ գրասեղաններու և նստարաններու մասին բոլոր գպրոցներն ալ արգանատիկ են պարզապէս, շատեր բլրորովին զուրկ:

Ներկայ տարեջրջանին մասնաւոր ջանքերու շնորհիւ կառուցուեցան մէկ մէկ վարժարաններ Խնուս-Բերդի, Խաչուի և Գարա-Քիլիսէի մէջ, կարևոր նորագոթիւններ եղան Բալուի մէջ և գրասեղաններ շինուեցան: Կարգ մը գրասեղաններ շինուեցան Քղի-Գասապայի մէջ, ուրիշ տեղեր ալ աննշան վտփոխութիւններ եղան միայն:

Գպրոցական շէնքի ու կանաւորման հարցը արժանի է Պատ. Տնօրէն ժողովոյ ամենալուրջ ուշադրութեանը: Ուրիշ ինչ կատարկագործումներ ալ որ ունենանք՝ անկարելի է աշակերտաց առողջութիւնը պահպանել և բարեկարգ ընթացք մը տալ գպրոցին ու արդիւնաւէտ ընծայել ուսումնական աշխատութիւններն, առանց նպատակայարմար գպրոցական շէնքերու և կաներու: Արմատական միջոցներ խորհուելու են: Ուր որ ժողովուրդը ի վիճակի է, պահանջ դնելու է շէնքի կառուցումը կամ նորագոթիւնն՝ իրենց գպրոցէն վերջնականապէս ձեռք քաշելու իրական սպանալիքով: Իսկ ուր որ անկարող է ժողովուրդը, տարուէ տարի վճարելու պայմանաւ համատ գպրոցական շէնքեր կառուցուելու են բարեգործական ընկերութեան մը կամ մարմնոյ մը կողմէն, պայմանաւ որ այդ մարմնոյն անուանը կառուցուին շէնքերը ու մասնակի վճարումներով տեղացիք կարողանան սիրանալ անոր:



ԽՈՒՓՍԻ ՎԱՐՉԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻՆԵՐԸ

Մերոս ուսուցման. — Կարգ մը բարեկարգումներ ներմուծուեցան ուսուցման մեթոտներու մէջ ներկայ տարեշրջանին: Տարրական նախակրթարաններու խոնարհագոյն կարգերու մէջ դասուանդման վաղընկալ մեթոտին աննպատակաշարմար ըլլալն տեսնելով, մասնաւոր ուշադրութիւնս և ջանքեր կեդրոնացուցի Մանկավարժական բաւազոյն մեթոտներու իրականացման: Ամառ Վարժապետանոցը կարելի ընծայեց այս նպատակին իրականացումը, ուր մանկավարժութեան հոգեբանական սկզբունքներուն հետ աւանդուեցան նաև ընթերցանութեան, իրագիտութեան, թուարանութեան և աշխարհագրութեան ուսուցման մեթոտներն:

Ընթերցանութեան դասը «Տեւ-ընէ», «Ճնշական» ու «Վանկային» մեթոտներու յաջորդական դասաւորմամբ կազմակերպուած «Միացեալ» անուն մեթոտով աւանդուեցաւ Քզիի ու Բայուի շրջանակաց մեր բոլոր տարրական նախակրթարաններու սկզբնական կարգերուն մէջ, առանց քերականի: Գրեց միշտ զուգընթաց աւանդուեցաւ կարգալուծն հետ, նաև տասերու ճանաչումը զուգորդուեցաւ ոչ միայն զանոնք գրելուն՝ այլ և ձողիկներով զանոնք ձեւակերպելուն հետ: Ընթերցանութեան ուսուցումը, այսպէս, կատարուեցաւ ոչ միայն աչքի՝ այլ ձեռքի միջոցաւ, ինչ որ հիմնական պայմանն է որ և է ծանօթութեան խրատցումին: Այս մեթոտը շատ յաջող արդիւնք տուաւ ամեն ուր որ պետակցորէն կիրարկուեցաւ:

Թուարանութեան, Աշխարհագրութեան և Իրագիտութեան դասերն այ առարկայական մեթոտով աւանդուեցան, նպատակ ունենալով ոչ թէ կարգ մը ծանօթութիւններ հաղորդել աշակերտաց, այլ մասնաւոր զարգացնել անոնց գիտելու և դասելու կարողութիւններն՝ ինչ որ խորագոյն պաշտօնն է տարրական նախակրթութեան:

Իրիդասնեռական. — Մեր գիւղատնտեսական կարեւորագոյն ձեռնարկն եղաւ թիթենիներու մշակութիւնը Քզիի ու Բայուի շրջանակին մէջ: Հանրային Վարչութեան նուիրած 20000 մատաղատունկ թիթենիներն Կառավարութեան Երկրազորական բաժնի նուիրած 2000 դրուշ գումարին ծախսուածով անկարկեցինք զանազան գիւղերու՝ զարոցին տրամադրութեան տակ դրած գետններու վրայ, ինչպէս՝ Քղի-Փասապա, Ճըպըտ-գիւղ, Ատողբերդ, Թէմրան, Խօյմաթ և Հաւաւ: Թիթենիներու մօտաւորապէս ութ տասներորդը բռնեցին և ընծիւղ կամ տերեւ արձակեցին: Գետններէն ոմանք ծառի ճիւղերով ցանկապատուեցան: ուրիշներ անպատասար մնային: Ամրան արձակուողին, երբ ոչ աշակերտք ոչ ուսուցիչք կրնային հսկողութիւն ընել ու ցրուեցան, ցանկապատներն վերցուեցան և մեր բանջարանոցներէն մնացածներն ու թիթենի մատաղատունկեր ոտնակոխ եղան արձանելու և ոչխարներու կողմէն: Այսպէս, Քղի-Փասապայի, Ճըպըտ գիւղի և Թէմրանի թիթատանները ոտնակոխուելով փճացան: Այժմ ունինք 2000ի մօտ թիթենիներ Խօյմաթի Խորտիկ պարտէզին մէջ, 6000ի մօտ Հաւաւ ու Քաղցրահայեաց վանքին մէջ, 300ի մօտ Ճըպըտ գիւղի մեր ուսուցչին՝ Պ. Նուրիճանեանի պարտէզին մէջ, որ Պրուսայի շերամարտական վարժարանի ուսումնասարտներէն է և որ կատարեց Քզիի դաշտին անկարկութեան աշխատութիւնները: Ու-

նինք նաև 10000ի չափ ցանուած թիթենի սերմերու ծրուներ Պ. Նուրիճանեանի պարտէզին մէջ և զօրս ձրի պիտի բաշխենք բոլոր ուզողներուն: Անհասներու ձրի բաշխելն աւելի նպատակաշարմար կը գտնեմ, քանի որ կրնան անոնք պահպանել ու մշակել թիթատանները շահագործելու դիտումով: Հաւաւի և Խօյմաթի թիթատաններն այլ իթէ մշակուին, պիտի կրնան պայմաններն ստեղծել ընդարձակ շերամարտութեան մը:



ԹԷՄՐԱՆԻ ՎԱՐՓԱՐԱՆԻՆ ԱՇԱԿԵՐՏԵՐԸ

Բանջարեղէններու մշակութիւններ կղան ամէն ուր որ հողեր տրամադրուեցան մեղ, ինչպէս Քղի-Փասապա, Ճըպըտ գիւղ, Ատողբերդ, Թէմրան, Բաւաւ, Խօյմաթ, Հաւաւ և այլն: Հաւաւի Քաղցրահայեաց վանքին մէջ Պ. Խարախանեանի ձեռամբ մշակուեցաւ բնդարձակ բանջարանոց մը, նոր մեթոտով չինուած չորս փեթակներով մեղուանոցի մը միջոցաւ՝ աւանդուեցան մեղուարտածութեան զատիկ և տուի մը շերամի հոռնտով կատարուեցան շերամարտական աշխատութիւններ, որոնք արտադրեցին առաջնակարգ խոզակ: Նոյնպէս Խօյմաթի Խորտիկ պարտէզին մէջ եղաւ բնդարձակ բանջարամշակութիւն:

Բայց տարրական նախադրմանն մը աշակերտող գիւղացի աշակերտներու ս'չ մարմնական, ս'չ մտաւորական վիճակը կը ներքէ գործնական գիւղատնտեսութեան արհեստին տիրացման : Կարգ մը գիտելիքներ ու վարժութիւններ միայն կրնան ստանայ այդ 6—12 տարեկան հասակի տղայք : Ուստի խիստ կարեւոր կը նկատուի իւրաքանչիւր գումարի մէջ նպատակայարմար վանք մը վերածել տղայք ազարակի մը , ուր վեց ամիս կամ տարի մը տեւող զանազան դասընթացքներու հաստատումը՝ գիւղացի երիտասարդներ զան թէ՛ աշխատիլ ազարակին մէջ , թէ՛ օրական մէկ երկու պահ ուսանիլ իրենց կատարած աշխատութիւններուն գիտական սկզբունքներն : Գաւառի Հայութեան ամէնէն ընդհանրական արհեստն եղող երկրագործութեան զարգացմանը համար եղած բոլոր ձեռնարկներուն մէջ ոչինչ աւելի անմիջական և համաարած ազդեցութիւն պիտի կրնայ ունենայ որչափ Միացեալի անկախ վարչութեան տակ վանքերու մէջ հաստատուած գիւղատնտեսական գործնական ու կարճատեւ դասընթացքներ : Եւ ինքնապահ կրնան ըլլալ բոլոր այդ հաստատութիւնները , քանի որ իրենց արամագործութեան տակ պիտի ունենան ընդարձակ հողեր և ստոյգ երիտասարդաց գիւղատնտեսական աշխատութիւններն :

**ԱՄԱՌՆԱՅԻՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
Դ Ա Ս Ը Ն Ք Ա Յ Ք Ե Ի**

(Քաղուածքներ Տեսչական Տեղեկագրերէ)

**ԿԱՐԵՈՅ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՑ 1910ԻՆ**

Յուլիս ամսոյ առաջին շաբթուն սկսաւ Միացեալ Լ'նկերութեան Կարնոյ մէջ բացած ամառնային Գիւղատնտեսական և Մանկավարժական դպրոցը , որուն աշակերտեցին 17 ուսուցիչներ :

Կանոնաւոր աշակերտներէն զատ յաճախ ունեցանք ունկնդիրներ երկուստ ուսուցիչներէ :

Ուսուցիչ և ուսուցման նիւրերը.— Երեք ուսուցիչներով սկսաւ դպրոցը : Պրն . Միքայիլ Մինասեան (1) Գիւղատնտեսական , շաբաթը 6 դասախօսութիւն : (2) Ուսուցանելու Մերոցը՝ շաբաթական երեք դաս : Պրն . Մանուէլ Տէաէեան , ուսուցիչ Սանասարեանի (1) Պատմութիւն Մանկավարժութեան , շաբաթը մէկ դաս :

(2) Տարեի Հոգեբանութեան , երկու շաբաթը երեք դաս : Պրն . Սաչատրեան , Տեսուչ Սանասարեանի՝ ճանօթութիւնք իրադիտական , զրական և պատմական դասերու աւանդման եղանակաց վրայ , շաբաթը մէկ անգամ :

Դժբաղդաբար , Պրն . Սաչատրեան՝ իր գրադմանց շատութենէն՝ միայն մէկ անգամ կրցաւ դասախօսել , ուստի իր դասին ժամանակը յատկացուեցաւ բանջարամշակութեան մասին գործնական գիտելիքներու աւանդման՝ Պրն . Յովհաննէս Ազնաւորեանի կողմէն . Պրն . Մանուէլ Տէաէեան ալ իր ամուսնութեան պատճառաւ շաբաթ մը ստիպուեցաւ բացակայիլ , որուն պարագր լրացուց Պրն . Մ . Մինասեան :

Ուսանողք ամեն առարօս կանոնադրապէս երկու դասախօսութեանց ունկնդրեցին , մին՝ Գիւղատնտեսական և միւսը՝ Հոգեբանական-Մանկավարժական : Իսկ կէս օրէ վերջ՝ պարապեցան Գիւղատնտեսական զանազան վարժութիւններով , բանջարամշակութեամբ՝ Պրն . Ազնաւորեանի առաջնորդութեամբ , և իրենց դասերու գրաւոր պատրաստութիւններով : (Ամէն ուսանողի համար պարտաւորիչ էր նօթագրել դասախօսութիւններն և յաջորդ օրը մաքուրի քաշելով և ընդլայնելով առանձին տետրակներու մէջ՝ ներկայացնել Տեսչութեան :)

Շրջագալութիւն և Այցելութիւն . — Աշակերտք մի քանի անգամ Պրն . Ազնաւորեանի առաջնորդութեամբ շրջագայեցան քաղաքին շրջակայ արտերն ու բանջարանոցները , բերին զանազան հողեր որոնց ասիտային կամ կալաքարային ըլլալն ազատցուցուեցաւ քիմիական պարզ փորձով մը , բանջարեղինաց փաստող միջատ հաւաքեցին և քննեցին անոնց հասուցած փաստները :

Յարմար դեանի մը վրայ բանջարամշակութեան գործնական փորձեր կատարուեցան :

**ԱՄԱՌՆԱՅԻՆ ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՑ Ի ՔՂԻ 1911ԻՆ**

Յուլիս ամսոյ առաջին երկուշաբթին (Յուլիս 4) բացուեցաւ Ամառ . Վարժապետանոցը ու տեւեց ութը շաբաթ , մինչև Օգոստոս 25 :

Աւակիրտութիւն . — Փորձի և տարեկան հարցաքննութեանց մասնակցող աշակերտաց թիւն էր 42 , երկուքը վարժուհի ու քառասունը ուսուցիչ : Ասոնցմէ զատ Վարժապետանոցին դասախօսութեանց կանոնադրապէս հետեւեցան երեք այլ մարդիկ և ինը վարժուհիներ , որոնք սակայն գրաւոր քննութեանց միայն չմասնակցեցան : Այս աղատ-ուսանողներն ալ աւելցնելով քննութիւն անցնող ուսանողաց թուոյն վրայ՝ կ'ունենանք 54 աշակերտներ : Ամառ . Վարժապետանոցի դասախօսութեանց շարունակ ներկայ գտնուող այս ուսանողներէն զուրս յաճախ կ'ունենայինք նաև մի քանի այցելու-ուսնիւղիրներ :

Ընդամենը Միացեալի 42 ուսուցիչներ և վարժուհիներ հետեւած են ուրեմն Ամառ . Վարժապետանոցին — Քղիի ու Բալուի դաշտի վարժարանաց բոլորին ալ Ա. ուսուցիչներ և երկրորդական ուսուցչաց ալ ստուար մեծամասնութիւնը, շատ տեղեր ամբողջութիւնը : Իսկ Կարնոյ դաշտէն Ս. Գայան, Թ. Գայէն ու Խնուօ-Բերդը միայն ներկայացուցիչ չ'ունեցան : Չարսանճագէն 2 ուսուցիչ աշակերտեցան :



ԱՄԱՌՆԱՅԻՆ ՎԱՐՇԱՊԵՏԱՆՈՅ ՔՂԻ 1911

Գիւղացիներու միջոցաւ պահանջուած փորձարկութիւններն կատարեցին աշակերտք զոյգ զոյգ, պարտէզին մէջ մշակեցին քանի մը բանջարեղէններ և նոր մեթոտով շինուած փեթակի մը միջոցաւ աւանդուեցան իրենց մեղուարուծութեան սկզբունքները :

Հողամշակութեան հիմնական սկզբունքները, այսինքն հողին ունեցած յարպերութիւնները օգի, ջրի, բարեխառնութեան, մանրէներու և մանդատու նիւթերու հետ, աւանդուեցաւ ընդարձակօրէն և ազատացուեցաւ ու լուսարանուեցաւ փորձարկութիւններով :

Բանջարամշակութեան մասին դասախօսութիւններն կիրարկուեցան՝ մի քանի բանջարեղէններ անկելով և մշակելով՝ մինչեւ ծրելին :

Հրապարակային դասախօսութիւն. — Գրաւոր հարցաքննութիւններէն զատ, յաջողագոյն աշակերտներէն վիճակով ինը հատ ընտրուեցան ժողովուրդին առջեւ 10ական վալլիեան խօսելու Մանկավարժական կամ Գիւղացանտեսական նիւթի մը վրայ՝ իրենց փորձի թաղարներով, իրազիտական ատարկաներով և պատկերներով լուսարանելով դասախօսութիւններն : Մեծապէս շահեկան եղան մասնաւորապէս Փորձադասերն և Գիւղացիներու շուրջը լսողները :

Այս առաջին տարուան Ամառ . Վարժապետանոցի սուած և տալիք արդիւնքներէն դատելով՝ կրնամ վստահարար յայտարարել թէ եռամեայ կանոնաւոր շրջանով մը կարելի պիտի ըլլայ իրենց պաշտօնին յաջող կատարման կարողութիւնը ապ ըզոր այն ուսուցչաց որ գոնէ բարձրագոյն նախակրթարանի մը սուած զարգացման աստիճանն ունին և ուսուցանելու ալ բնական յարմարութիւն : Գարձեալ, կրնամ յայտարարել թէ անհրաժեշտ է որ կանոնադրաբար Վարժապետանոցի մը չհետեւող ամէն ուսուցիչ, ինչ աստիճանի ալ բարձր ըլլայ իր իմացական զարգացումը, երբէք չկրնար արժանաւորապէս կատարել դասաւանդութեան իր պարտականութիւնները : Հետեւաբար ոչ մի ուսուցիչ թոյլատրուելու է պաշտօնավարել Միացեալի վարժարաններուն մէջ, մասնաւորապէս որ և է Տնօրէն կամ Օգն. Տեսուչ, որ չհետեւի Ամառ . Վարժապետանոցի դասախօսութեանց և յաջող քննութիւն չունցներ : Համոզուած է թէ այսպիսի խիստ միջոցներով միայն կարելի պիտի ըլլայ զգրոցներու ընդհանուր բարեկարգումն ու արդիւնաւորումը ապահովել :

Ժողովրդային դասախօսութիւններ. — Կրթական հաստատութիւն մը պէտք է օժանդակէ նաև այն ընկերութեան զարգացմանը և վայելէ անոր համակրութիւնը ուր կ'ապրի : Ուստի յարմար դատուեցաւ հրապարակային դասախօսութիւններ և սարքել ժողովուրդին համար : Կիրակի օրեր Հայերէն լեզուա խօսուեցաւ Հայոց, լսարան մը կանանց տրուեցաւ, և լսարան մըն ալ Ուրբաթ օր տրուեցաւ Թուրքերէն լեզուա թրքաց զպրոցին մէջ՝ Գիւղացանտեսական նիւթի մը վրայ : Ամէնուհետ ալ մեծ ըզմութիւն ներկայ գտուեցաւ և ամէն կողմէ փափաք կը յայտնուի, որպէս զի ձմեռն ալ նոյնօրինակ հրապարակային դասախօսութիւններ չարուեսակուին :

ԱՄԱՌՆԱՅԻՆ ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՑ Ի ՄԵՐՍԻՆ, 1911ԻՆ

Դասաւանդութիւններ. — Մանկավարժական ճիւղի ուսուցչի չգոյութեանն միայնակ մնացած ըլլալով, Գիւղատնտեսական ճիւղը ընտանաբար աւելի երկար ըրի և ընդարձակ, քան ինչ որ կրնար դասախօսուիլ 24 ժամուան մէջ, թէև միշտ ծրագրի նիւթին և սահմաններուն մէջ: Այդպէս բրինք մասամբ մը Մանկավարժական ճիւղին պակասը դարձանելու և միւս կողմէն ծրագրին տրամադրութիւնները լաւ իմն իրադրծելու համար: Այլապէս, չատ համառօտ՝ հասկնալի և բնորոշելի պիտի չըլլար ուսանողաց:

Նկատելով թէ դասախօսութիւնս՝ որ բոլորովին նոր և օտար էր իրենց համար՝ պէտք եղածին պէս պիտի չկրնային նօթագրել, ստիպուեցայ նախապէս գրել դասերս, զորս ապա կ'օրինակէին իրենք, որով և իրենց դասախօսութեանց նիւթերը, ըստ կարի, լիակատար ունենալու միջոց մ'եղաւ ստիպա:

Ծրագրէն դուրս ըլլալով, հողաբանական իրենց լսեղծուէկ ծանօթութիւնները ընդարձակելու համար համառօտ երկրաբանութիւն մը դասախօսուցի: Մտադրած էի նաև դաս սոյլ կենդանեաց ընդհանուր կազմախօսութեան վրայ, սակայն ուսանողաց յոգնութիւնը և անոնց մէկին ևս տկարութիւնը ստիպեցին դիւս որ զանց առնեմ այդ դասը:

Յաւելուածական ուրիշ դասախօսութիւնք—գօնֆերմաններ — եղան Միքայէլ Էֆ. Սաչիկեանի միջոցաւ, զի նաւորարար ուսուցչական պարտաւորութեանց և ուսուցչաց ունենալիք դիրքին մասին՝ սակայն սահմանափակ թուով, որովհետև Սաչիկեան Էֆ. ևս ենթակայ ըլլալով նին տկարութեան մը լաւական կը նեղուէր, ուստի և չուզեցի շատ յոգնեցնել զինք և բաւականացնէք եղածով:

Պետ. — Ուսանողք դասերէն վերջ և երեկոյեան դէմ ու կիրակիները, զի նաւորարար Մ. Սաչիկեան Էֆ.էնալի առաջնորդութեամբ քաղաքիս չըջակաները կ'երթային, այցելելու բամպակի և սուսամի մշակութիւնները: Գործադրարար այդ եղանակներուն ասոնցմէ դուրս ուրիշ կարևոր մշակութիւնք չէին գտնուէր: Շատ ստիպեցի ցոյց տրուեցաւ և բացատրուեցաւ իրենց զանազան հոլորը ճանչնալու գործնական և գիւրջին միջոցները:

Անտարակոյս այս կարգի դասընթացը մը որպէս զի գործնական առաւելութիւններ ընծայէ, պէտք է որ ըլլայ այնպիսի տեղ մը ուր արամազրելի գտնուին կարգ մը գործիքներ, մշակելի հող և յարմար մշակութիւնք, ինչ որ հնար ըլլայ թերևս երբ Լեկերութիւնը ստանձնէ Քէլէկեան Որդանցին վարչութիւնը:

Որոշեցայ զիրենք առաջնորդել Ատանալի և Սիսի մօտերը կարգ մը պետական տիպար ազարակներն ու ասպատանները, սակայն աչքի առաջ ունենալով ծախքին չատութիւնը, որ առանց այն ալ Լեկերութեան կանխորոշածէն շատ

աւելի կ'ըլլար, և չուզելով աւելի ծանրաբեռնել Լեկերութեան զօհողութիւնը, հարկադրուեցայ զանց առնուլ ատոնք:

Դասընթացի մասին. — Այնու ամենայնիւ մեր ոչ նպատաւոր պայմանաց և ուսուցչիներու չգոյութեան մէջ միայնակ մնացած, մենք առանձին ձեռնարկեցինք Դասընթացքին Յուլիսի սկիզբէն մինչև Օգոստոսի կէտը, մօտ մէկ շաբաթ պակաս կանխորոշ ժամանակէն, և շարունակեցինք առանց ընդհատումի:

Տեղէն Մանկավարժութեան ուսուցչին չգրկուելուն, Զեր ցանկութեան համաձայն՝ դիմեցինք Ատանա Տեսրց Արամէրի և Գույուսմանի: Սակայն զրթազգաբար արդէն միշտ մեկնած ըլլալը և միւսին մասնաւոր դրադուսները արգելք եղան անոնց մասնակցութեան:

Դասախօսութիւնները տեղի ունեցան Մերսինի նորակերտ վարժարանին մեծ սրահին մէջ առաւօտեան ժամը 3էն (Ը. Ե.) մինչև ժամը 10ը, որմէ ետք ուսանողք կը զբաղէին իրենց գասերուն գրութեամբը:

Այս դասախօսութիւնք անգամ մին ալ ինձ այն համոզման բերին որ մեր Դասախօսական վարժարանաց մէջ գիտութեանց պակասը ճշմարիտ ազդեցութեան մ'առտիճանին ձգած է զիրենք: Գիտական ամենապարզ սկզբունքներն իսկ արդէն զիրբմբռնելի քիչ շատ արամազրուած ուղեղներու՝ յաճախ անմաշկելի և անբնորոշելի կը մնային:

Դասախօսութեանց նիւթերը. — Հոս աւելորդ կը համարեմ Գիւղատնտեսական դասաւանդութեանց նիւթերուն և ճիւղերուն վերլուծումն ընել մէկիկ մէկիկ: Անոնք համաձայն են կանխորոշ ծրագրին:

Որպէս զի դասախօսութիւնք օգտակար ըլլան հետեւորդներուն — որոնք իրենց կարգին պիտի դասախօսեն իրենց չըջանականերուն մէջ — խնդրած եմ Հաճոյ Տնօրէնութեանն որ զանոնք բօյկկրափով հանէ: Երբ ունենամ ասոր օրինակներէն, պիտի կրնամ հատ մը հոս Զեղ չղել, որով ճշգրիտ գալափար մը պիտի ունենայ թէ որ աստիճան յաջողուած է ինձ իրականացնել Ամսոն. վարժապետանոցի ծրագրին այդ ճիւղը:

Աւսիկհրճներն և բնութիւնները. — Քէսապէն և Կարսէն յարմար հետեւորդներ չգտնուելուն, դասընթացքին բոլոր ուսանողները ընտրուեցան Զէլթունէն և Հաճընէն. սակայն անոնցմէ մէկ մէկ հատ այս չըջանելի պիտի պաշտօնավարեն և Քէսապ:

Ուսանողներն երեքը, զեռ դասընթացքները չաւարտած, տկարութեան և ջերմի պատճառաւ չուզելով հոս մնալ՝ կիսատ թողին դասերը և տեղերին վերադարձան, մին Հաճըն և երկուքը Զէլթուն:

Բնութիւնները կատարուեցան երկու անգամով, ընտանացի՝ զանազան նիւթերու վրայ և գրաւոր՝ չորս նիւթերու վրայ, որոնցմէ մէկը՝ բոլորին ալ արուած: Իսկ արդիւնքը հաշուուած է, բերանացին՝ մեկ և գրաւոր՝ երկու, և երկուքին գումարը բաժնուելով երեկոյն կամ միջինը իրենց նիւր կը ցուցնէ:

### ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՑՈՅՑ

Վերջին դպրոցական Երջանին Տնօրեն ժողովը փորձեց վիճակագրութիւն մը կազմել վարժարաններու աշակերտութեան առողջական վիճակի մասին: Ղըրկուած հարցարաններուն պատասխանեցին միայն 47 վարժարաններ, որոնք դրժբաղպարտ գոնացուցիչ չէին գիւղերու մէջ բժիշկ չզտնուելուն պատճառաւ: Սոյն վիճակագրոցները Տօբ. Վահրամ Յ. Թորգոմեանի Բնութեան յանձնուած ըլլալով՝ իր երակացութիւնները շնորհակալութեամբ կը հրատարակենք ստորեւ:

Պատիւ ունեցայ ստանալ Միացեալ Ընկերութեան վարժարաններու առողջապահական 47 վիճակագրոցները, զորս հաճած էք իմ ուսումնասիրութեանն ներկարկել:

Շնորհակալութիւններս Ձեզ յայտնելով ինձ ընծայուած յոյժ պատուարեր կարեւորութեան, կը փութամ ներկայացնել Ձեզ իմ տկար տեսութիւններս վերոյիշեալ վիճակագրոցներու մասին:

Ներող եղէք ինձ նախ որ բտմ թէ Առողջապահական մակդիրով որակուած այդ 47 վիճակագրոցները բոլորովին հետի են և զուրկ այդ անունին յատուկ օրինական հանգամանքներէն, որովհետեւ բժիշկի մանրակրկիտ քննութեան արդիւնք չեն առնէք, և հազիւ մէկ երկուք անոնցմէ կը կրնն բժիշկի ստորագրութիւն, այն ալ այնպիսի հարեւանցի կերպով որ միւսներէն բնաւ չեն տարբերի:

Այսու ամենայնիւ, խղճի պարտք ինձ համարեցի ուշի ուշով կարգալ այդ 47 վիճակագրոցները, և զանոնք վերածելով ընդհանուր պատկերի մը, զոր կը գտնէք ներքեակ, տեսայ որ Միացեալ Ընկերութեան 47 վարժարանները յաճախող արու և էդ գրեթէ 5000ի մօտ աշակերտները մեծագոյն մասամբ առողջ և քաջառողջ վիճակի մէջ կը գտնուին. անոնց մէջ բացի բնական խեղանդամութիւններէ, շատ ու շատ հազուադէպ են պատահական սուր հիւանդութիւններ և հիւժական պատեր, ինչ որ վերագրելի է գիւղերու բարձրագիւր ու առողջարար կացութեան, մաքուր կլիմային և անապակ ջուրին: Կէտ մը սակայն այդ վիճակագրոցէն խորապէս խոցեց սիրտս, և տխրազգեցիկ ուշադրութեանս առարկայ եղաւ. այդ կէտն է չպատուաստուած կամ առանց պատուաստի մեացած մանուկներու հոծ առատութիւնը, որ 1042 պատկառելի թուով նշանակուած է վիճակագրոցին մէջ:

Մասնաւորապէս պիտի խնդրէի, որ Միացեալ Ընկերութիւնն իր աւագ պարտականութիւնն համարէր դարման փութացնել այս մեծ թերութեան, և այգու մանուկ սերունդներու բազմաթիւ կեանքեր ստոյգ մահուան ճիւղաններէն:

փրկել: Ան այս հարկ է ուրինն լուրջ միջոցներ խորհիլ. նախ, պատուաստի չիճուակն առատութեամբ գրկել այդ գիւղերը, յետոյ բժիշկ չեղած վայրերը պատուաստի գործողութեան վերաբերեալ մասնաւոր հրահանգներ յղելով պահանջել՝ որ գիւղին քահանան կամ գայեակը, վարժարաններու զաստիարակներն ու զաստիարակուհիներն ուսնին պատուաստ ընկու ամենաչնչին գործողութիւնը և կատարեն զայն, որով անոնք պիտի յաջողին անկասկած զերժ կացուցանել գիւղերու բազմագունչ երականեր Մաղիկ հիւանդութեան աւերիչ և մահացուցիչ հետեւութիւններէն:

Բաց աստի՝ պիտի խնդրէի նաև, որ ամէն տարի հրատարակուէին առողջապահութեան պարզ հրահանգներ գիւղացի ժողովուրդին հասկացողութեան համաձայն, և ուղղուած զաստիարակ-ուսուցիչներու կամ ուսուցչուհիներու, որպէս զի անոնք առողջապահ կանխարգել միջոցներ սորվին, և բժիշկի պակասը աստիճան մը զգալի չընելով, գտնէ զխանան գալիք հիւանդութիւններէ զերժ ապրելու փրկաւէտ միջոցներն ի կիր արկանել:

Ահա ինչ որ ախ յախոյ կը ներշնչեն ինձ Ձեր վարժարաններու առողջապահական վիճակագրոցները, ինչ որ կը թկապրեն ինձ իրբւ պիտողութիւն, զորս ներկայացնելով Ձեզ, մեծ յոյս ունիմ թէ բազմաթիւն «Ընկերութիւնդ Միացեալ» պիտի հասնի ուշադրութեան ստանել զանոնք և միանգամայն գործադրել:



ՋԷՅԹՈՒՆ



# ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐ

(ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ)

1909-10 ԵՒ 1910-11 ՇՐՋԱՆՆԵՐ

	ՇՐՋԱՆԱԿ	ԲԱՑՄԱՆ Ք ՈՒ Ա Կ Ա Ն	ԱՇԱԿԵՐՏ		ՊԱՇՏՈՆԵՈՒՔ		Պ Ի Տ Ճ Է	
			1909-10	1910-11	1909-10	1910-11	1909-10	1910-11
	ԿԱՐՆՈՑ ՇՐՋԱՆԱԿ							
	Ընդհ. Տեսչութիւն				2	2	30452	28836
1	Զիրով . . . . .	1 Սեպտ. 1909	150	125	5	5	6126	9504
2	Օձնի . . . . .	1 Սեպտ. »	200	152	4	4	5009	6662
3	Վեյի Պապա . . . . .	15 Դեկտ. »	100	85	4	4	2142	4644
4	Սարը Գայա . . . . .	1 Փետր. 1910	80	64	3	2	1512	4212
5	Խնուս բերդ . . . . .	1 Սեպտ. 1909	120	102	5	5	9319	13932
6-7	Պայազիս . . . . .	1 Սեպտ. »	125	209	8	7	11026	50 19710
8	Գարա Գիլիսե . . . . .	1 Սեպտ. »	150	211	5	7	8135	9720
9-10	Ալաւիտր . . . . .	1 Սեպտ. »	150	147	7	7	10003	50 13069
11	Խասուր . . . . .	1 Հոկտ. »	50	52	4	3	1140	50 2160
12	Խաչու . . . . .	1 Սեպտ. 1908	50	50	2	2	1296	1836
13-15	Բղի-Գասապա . . . . .	1 Սեպտ. 1909	430	456	14	16	22736	50 30834
16-18	» Խուփա . . . . .	1 Սեպտ. »	235	293	9	11	5920	14567
19-20	Հերշիֆ . . . . .	1 Ապրիլ 1910	80	70	4	4	1980	5637
21-22	Թեմրան . . . . .	1 Սեպտ. »	—	194	—	5	—	12304
23-24	ձրպրո . . . . .	1 Սեպտ. »	—	50	—	3	—	5832
25-26	Ասդրերդ . . . . .	1 Սեպտ. »	—	132	—	4	—	8208
27	Խօւմար . . . . .	1 Սեպտ. 1909	120	160	5	4	6286	7403
28-29	Բալու . . . . .	» 1910	—	246	—	7	—	16956
30	Արքիան . . . . .	» »	—	45	—	3	—	4374
31-32	Հաւա . . . . .	» »	—	243	—	8	—	19062
			2040	3086	81	113	123084	— 239464

ՇՐՋԱՆԱԿ	ԲԱՑՄԱՆ Ք ՈՒ Ա Կ Ա Ն	ԱՇԱԿԵՐՏ		ՊԱՇՏՈՆԵՈՒՔ		Պ Ի Տ Ճ Է	
		1909-10	1910-11	1909-10	1910-11	1909-10	1910-11
33	Ամառն. Վրժպսնց.	17	42	3	4	216	4153 50
	ԿԻԼԻԿԻՈՑ ՇՐՋԱՆԱԿ						
	Ընդհ. Տեսչութիւն	—	—	1	1	8907 75	23874
4-38	Չոք Մարզուան . . . . .	1 Հոկտ. 1909	450	—	6	—	9998 75 —
39-40	Բեասպ . . . . .	1 Նոյ. »	240	210	7	8	8707 50 15281 25
41-43	Հանքն . . . . .	1 Սեպտ. »	430	537	16	17	26075 34577
44	Ֆեհե (Վանկայ) . . . . .	1 » 1910	—	35	—	—	400
45	Շար Տերե . . . . .	1 Յուն. 1911	—	70	—	—	1026
46-47	Ղարս Պազար . . . . .	1 Սեպտ. 1909	180	180	4	4	5006 8629
48-52	Զեյթուն . . . . .	1 Յուն. »	455	505	10	12	18300 50 21776 25
53	Կապան . . . . .	1 Նոյ. »	150	63	2	2	1188 2268
54	Ֆրնուզ . . . . .	1 » »	150	134	2	2	1188 1836
55	Քիբեհ . . . . .	1 Յուն. 1910	60	34	1	1	433 972
56	Տաօ Օլուֆ . . . . .	1 Փետր. »	55	43	1	1	324 972
57	Շիվիլի . . . . .	1 » »	60	48	1	1	432 972
58	Կոկխան . . . . .	1 Նոյ. 1909	35	41	1	1	1188 2160
59	Ալպսան . . . . .	1 Սեպտ. »	80	75	1	1	1620 1674
60	Տեյիւմեհ Տերե . . . . .	1 Յուն. 1910	30	35	1	1	216 432
61	Միխալ . . . . .	1 » »	45	50	1	1	432 648
62	Քեպուսիե . . . . .	1 Ապրիլ 1911	—	80	—	2	—
63	Ամառն. Վրժպսնց.	—	16	—	1	—	8620 50
		2420	2156	55	59	84016 50	126118 —

(\*) Այս վարժարանին հասանալի հաշիւը նոր շրջանին անցած է:

ԵՐԶԱՆԱԿ	ԲԱՅՄԱՆ Ք ՈՒՒԱԿԱՆ	ԱՇԱԿԵՐՏ		ՊԱՇՏՈՆԵՈՒՔ.		Պ Ի Ի Տ Ճ Է		
		1909-10	1910-11	1909-10	1910-11	1909-10	1910-11	
<b>ՄԵՈՑ ԵՐԶԱՆԱԿ</b>								
64	Մուլ . . . . .	1 Յուն. 1909	165	122	7	8	15202	18654
65	Վարդինիս . . . . .	1 Հոկտ. »	80	75	3	4	2921	5969
66-67	Փուրխ   Տալարիկ . . . . .	1 » »	30	41	4	3	4726	3843
			275	238	14	15	22849	28467
<b>ՍՂԵՐԴԻ ԵՐԶԱՆԱԿ</b>								
68-69	Սղերդ . . . . .	1 Ապրիլ 1910	132	161	3	7	2324	14848
70	Տեհ . . . . .	1 Սեպտ. »	—	94	—	4	—	3906
71	Զոզ . . . . .	20 Մարտ 1911	—	44	—	2	—	626
72	Ռնուան . . . . .	1 Ապրիլ »	—	40	—	3	—	837
73	Տուսասաֆ . . . . .	1 Սեպտ. »	—	—	—	—	—	—
74	Գուպին . . . . .	27 Մարտ »	—	61	—	3	—	677
75	Մալախան . . . . .	22 » »	—	25	—	2	—	670
76	Հազզո . . . . .	1 Ապրիլ »	—	103	—	4	—	1344
77	Հազո . . . . .	1 Սեպտ. 1910	—	122	—	4	—	4535
			132	650	3	29	2324	27445
<b>ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԵՐԶԱՆԱԿ</b>								
78	Կրապիս . . . . .	1 Յուն. 1911	—	70	—	4	—	1620
79	Քերեֆ . . . . .	1 » »	—	25	—	2	—	1620
80	Կունսեհանո . . . . .	1 » »	—	35	—	2	—	1620
81	Հաքեր . . . . .	1 » »	—	45	—	2	—	1620
82	Հեյին . . . . .	1 » »	—	35	—	3	—	1620
83	Պաճնիֆ . . . . .	1 » »	—	35	—	2	—	1620
84	Ապի . . . . .		—	25	—	2	—	1620
			—	270	—	17	—	11340
	Համագումար		4884	6442	156	237	232490	436988

1909-10 շրջանի 4884 աշակերտներուն 474ը, իսկ 1910-11 շրջանի 6442 աշակերտներն 601ը ազդի վարժարաններուն միւս էր 1909-10 շրջանին՝ 53, իսկ 1910-11ին՝ 84:

**Խ Ն Դ Ր Ա Ն Ք Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ա Ց**

Ստորեւ կը նրատարակենք այն տեղերու ցանկը ուրիշ վարժարանաց բացման համար դիմում եղած է Միացեալ Ընկերութեանց: Ասոցմէ շատեր բացարձակապէս զուրկ են դպրոցէ եւ մինչեւ իսկ անտեղեակ իրենց մայրենի լեզուն: Արդարեւ ազգային ընդհանուր գոնուակութեան արժանի գործ մ'ըրած պիտի ըլլայ այն անձնաւորութիւնը կամ մարմինը որ պիտի օգնէ Ընկերութեան այս խեղճ գիւղացիներու արդար խնդրանքին զոնացում տալու:

- |                           |                |
|---------------------------|----------------|
| Կարին                     | Մանագիտեր      |
| Բասէն—Ս. Աստուածած. վանք  | Բերդուան       |
| Դերջան                    |                |
| Սպեր                      | Ճապաղզուր      |
| Գարապէյ Ալաշկերտի         | Չիֆթլիկ գիւղ   |
| Մանկասար Գարաքիլիսէի      |                |
|                           | Կիւնն          |
| Մուլ                      | Արշէն          |
| Թիլ գիւղ                  | Զքթէ           |
| Ս. Կարապետ                | Մարաշգուլթ     |
| Ս. Սահակ հայրապետի վարժոց | Փէզար          |
| Խզլապաճ                   | Կէօյնուկ       |
| Սուլուխ                   |                |
| Ընձքար                    | Սասուն         |
| Լիքովաօինչ                | Կէլիկուզան     |
|                           | Մասէն-Առաքելոց |
| Վարդօ                     | Մըջեղ          |
| Պտաբան գիւղ               | Ահարոնք Խուլիի |
| Կիւնաէմլը                 | Իշխընձոր-Խիանք |
| Տօսան                     | Փանայ          |
| Պաղրիան                   | Դարւորիկ-Պեղմ  |
|                           | Մքթինք         |
| Պուլանրդ                  | Կուցղեր        |
| Ս. Դանիէլ                 | Բոնաշէն        |
| Լիզ                       | Խուլի          |
| Կոր                       | Գղիս           |

Խուժ  
 Մտականի գիւղերը  
 Շատախի »  
  
 Բաղե  
 Բաղէշի գիւղերը  
 Կիզալ Տէրէ  
 Տատիկ  
 Ախլաթ  
 Խիզան  
 Ապակերտ  
  
 Աղերդ  
 Աղերդի գիւղերը  
  
 Վապուրական  
 Խաղէնց  
 Աղիւր  
 Անդղ  
 Խարակոնիս  
 Կէճ  
 Արտամէտ  
 Թողաս  
 Գործօթ  
 Աղգայ  
 Վարազի վանք  
 Աղթամարի թեմի գիւղերը  
 Կարճկանի գիւղերը  
 Ս. Գոմոց վանք  
 Լիմ Անապատ  
 Խօչապի գիւղեր  
 Նորդուզի գիւղեր  
  
 Տիարպեֆիւ  
 Սեւերէկ  
 Էարզան  
 Տուսատաք  
 Թրպէսիի  
 Իււրիւն  
 Վարդաշան  
  
 Քօճան  
 Քնիաթ  
 Տանուտի  
 Հայնէ  
 Պէրան  
 Ճիւղէղ  
 Քօշան  
 Մէլիք Շահ  
 Գուլլք  
 Հատ Հատք  
 Հիգնամէր  
 Ճանապարհ  
 Ճարտագոն  
 Պիմէր  
 Քէլէվօք  
 Պարէնչ, Պանքիթի  
 Սրպի  
 Գոնիզալ  
 Արցնի Մատէն  
 Նաղատէ  
 Շիրվան  
 Լիճէ  
 Զնքուչ  
 Սըլվանի գիւղերը  
 Պըշէրիկի 30 գիւղերը  
 Պարալի 15 »  
 Վէրան Շէշիբ  
 Ճէղիբէ  
  
 Մալաթիա  
 Մալաթիոյ գիւղերը  
 Քնաղթէի »  
  
 Տիվրիկ  
 Խուսնավիկ  
 Սինճան  
 Մրվանայ  
 Պէշեանի  
 Տիվրիկի միւս գիւղերը 7 հատ

Եղեսիա  
 Եղեսիոյ գիւղերը  
 Նէղիւզ  
  
 Եւդոկիա  
 Չիֆթիկ  
 Պօլուս  
 Քէրվանէրայ  
 Կէտաղաղ  
 Նաթմիւշ  
  
 Սեբասիա  
 Թուղասար  
 Բանոց  
 Մանոց  
 Գոչ Հիւար  
 Ազիլիէ  
 Տարէնտէ  
 Խուսնիկի  
  
 Կիւրիկ  
 Կիւրիկի գիւղերը  
 Կապան-Մատէն  
 Գանկալ  
 Մեծկերտ  
 Ալիզըն  
 Ակն  
 Լիճք  
 Նարվէր  
  
 Երզնկա  
 Ս. Լուսաւորիչ վանք  
 Խնձորէկ  
 Վերի Բաղատիճ (Կամախ)  
 Մեծ-Արման (Գուրու Չայ)  
 Տանձիք  
 Բերկրի (Բալամոր-Տէրսիմ)  
 Կերանուր  
 Դերջան-Մամախաթուն  
 Լաւոզիկէ  
  
 Քէմախ  
  
 Եօզլաս  
 Պէքէր  
  
 Քիլի  
 Խաչատուր Գիւղ  
 Չանաքճի  
 Մերմազ  
 Չիֆթիկ  
 Լզեկ  
 Շարուկ  
 Գլլզուզ  
  
 Տիւրիմ  
 Չմէկածակի 4 գիւղերը  
 Չմէկածակ քաղաքը  
 Միստուն գիւղ  
  
 Շապին-Գարանիսար  
 Շ. Գ. Հիւարի գիւղերը (12  
 Վերին Ածպտեր [հատ)  
 Թամզարա  
 Անդրէասին  
  
 Կիլիկիա  
 Տարսոն  
 Ատանա  
 Ատանայի գիւղերը  
 Մարաշ  
 Պանրոզ  
 Տընտըճազ  
 Բուսիու  
 Հասան Պէլլի  
 Տասըլլի (Ճէպէլի-Պէրէքէթի)  
 Էքպէղ  
 Անտիոք  
 Իսկէնտէրուն  
 Անտիոքի գիւղերը  
 Սիսի չըջանակ

Գարատուբան	Հածի Հապիպի
Սիւէյաիէի գիւղերը	Պէյի
Նէրէպագան	Պիրէճիք
Ունիոյ 25 գիւղերը	Ալապաշ
Նփեսոս	Պուրուն Գըշա
Օսմանիէ	Ազէճիք
Պահէ	Բաշադակ
Լարաշու	Էզրէկ
Խարունի	Աշուշէն
Քիլիս	Հոշէ
Սելիւկիս	Ազ-Շէճիք
Նաճաղու	Պիանք
Օճաղու	Պաղու
Էնթիկի	Կիււ Կիււ
Կէօքչալըր	Մուսուլ
Քիշիշ	Նարբուզ



ՏԷՔԷԻ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԱԵԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ

### ՄԱՄՈՒԼԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Շատ անգամ մեկ մասը կը դնենք միայն այն բազմաթիւ զնահասականներուն որոնք երեւցած են Հայ մամուլի մեջ վերջին երեք տարուան ընթացքին: Ընկերութիւնս հրատարակաւ իր անկեղծ շնորհակալութիւնը կը յայտնէ ազգային լրագրութեան որ շարունակ աջակից ու զօրավիգ հանդիսացաւ Գաւառի կրթական գործին:

Հին բռնապետական ուժերը իր ամենասարսափելի ճիրաններով չկարողացաւ բողբոջելն քամիկ Հայուն արիւնը և մտցնել անոր մէջ ուսման և քաղաքակրթութեան սաղմը: Կեդրոնական զաւառները, ուր Հայերը համեմատաբար աւելի հոծ բազմութիւն մը կը ներկայացնէին, կարողացան տեղ տեղ իրենց վանքերով և եկեղեցական ծխական զպրօցներով պահել զէթ իրենք զիրենք ուսման և քաղաքակրթութեան շուղին վրայ: Այդ զաւառներուն մէջ մասնաւորապէս անդնահատելի ծառայութիւն է մատուցեր նաև Հայոց Միացեալ Ընկերութիւնը իր աշխարհային ու գիտական զիւրմտութիւն կրթութեամբ, որով զաւառացիին առջև բացած է նորն իսկ Համալսարանի դռները:

Արեւմտեան քաղաքակրթութիւնը և Միլիթարեան գրականութիւնը մօտ երկու դարէ ի վեր մուտ գործած են մեր մէջ, սակայն այսօր ամէն զաւառացի Հայ կարող է խոստովանել որ Միլիթարեան կրթութիւնը այն գործնական և իրական օգուտները չէ տուած Գաւառին, ինչ որ տուած է Հ. Մ. Ընկերութիւնը իր անցեալ շրջանին մէջ:

Ո՞վ կարող էր նաևտալ որ Մշեցի պատանին յանդգնութիւն կ'ունենայ գիւղատնտեսական և գիտական դանազան ճիւղեր կատարելագործելու համար եւրոպական Համալսարաններու դռներ բաղխել, կուրծք ապ, յոգնիլ ու աշխատիլ և վկայականով դառնալ իր հայրենիքը: Այս կարգի օրինակները մէկէ աւելի են այժմ Մշոյ աշխարհին և Սասնոյ շրջանակին մէջ: Եւ միթէ այսօր վառք չէ՞ Միացեալին որ մեր տաղանդաւոր Երզնէ Պ. Արմենակ Շահ-Մուրատեանը Մշոյ Ներսէսեան վարժարանի նախկին սաներէն է: Սակայն ի՞նչ է եղեր անոր դերը քրդախօս ծայրագաւառներու համար. եթէ ըսեմ որ Միացեալը եղեր է անոնց ուղղակի կրթական փրկիչ, չեմ սխալիր: Այո՛, այս տողերը գրողը բազմ է ունեցեր 95ական թուականին անձամբ շրջապայիլ Խուբ, Դարգան և Բշերի քրդախօս զաւառները և տեղւոյն վրայ դիտել թէ ինչպէս Միացեալի նորհու քիչ շատ Հայերէն և մասնաւոր գրել կարգալ գիտցողները այդ տարօրինակ երկրի Մովսէսներն ու Քաննոթոնները կը համարուին: Քրդախօս զաւառներն այլ տուած

են Միացեալի նին շրջանին բեզմաւոր արդիւնք և մտաւորական սերունդ մը : Սա Միացեալի նախկին շրջանի, անցեալ գործունէութեան հակիրճ, բայց խիստ բեղմնաւոր նկարագիրն էր :

ԱՐԵՒԵԼՔ, 2 Յունիս, 1910

Ձեզի, Ռուսահայեր, ձեզի շատ բաւ ծանօթ է Քիւրքահայոց երբեմնի կրթասիրական Միացեալ Ընկերութիւնը : Համիտական վերջին շրջանին մեր կարգ մը յատկաշնորհական ձեռնարկներուն հետ ան կը կործանուէր, իսկ հիմա այդ Ընկերութիւնը վերակազմուած է և նախանձնելիօրէն կը գործէ :

. . . . Ուրախ եմ ըսելու որ Քիւրքահայը հիմա շատ համակրութեամբ կը մտածէ Միացեալի վրայ, միայն դաւայի է որ գաւառի պէտքերուն խոչորու-  
թիւնը կը ծածկէ, կը նսեմացնէ Միացեալի ներկայ վտարկութիւնը :

ՄՇԱԿ, 12 Յունիս, 1910

. . . . Միացեալ Ընկերութեան այս գովելի և ազգին համար յոյժ օգ-  
տակար ձեռնարկին պէտք է նպաստէ ամէն անհատ իր կարողութեան չափով  
որպէս զի Դաւառի կրթութեան գործն աւելի ընդարձակուի և ապացոյցուի միան-  
գամայն թէ երբ միասակար ձեռնարկներու և գործերու դէմ կը պայքարինք,  
զիտենք նաև մասնանի ընել թէ որո՞նք են Ազգին պէտքերը, Ազգին համար օգ-  
տակար գործերը :

ԲԻԻՉԱՆԴԻՈՆ, 10 Օգոստոս, 1910

Մեր նախորդ սերունդին ամէնէն հոյակապ ու տեսուն գործն է աս՝ որ  
անվերապա համակրանքի ու համազգային գուրդուբանքի առարկան եղած ըլ-  
լալու էր այսօր :

. . . . Եթէ նշանակելի եղաւ Միացեալին դերը անցեալին մէջ, եւս  
աւելի կարեւոր գործ մը վերապահուած է անոր ներկայ ուժիովն տակ—Քուրքիոյ  
արդի վերածնութեան նորարաց շրջանին մէջ :

. . . . Օգնենք Միացեալին, օգնած ըլլալու համար մեր զիւղերու մտա-  
ւոր վերածնումին :

ԱՉԱՏԱՄԱՐՏ, 19 Օգոստոս, 1910

. . . . Միացեալի անցեալը և ներկայ մարմինը մեզ մեծ յոյս կուտան  
թէ բաւ և կարող Ընկերութեան մը առջեւ կը գտնուինք որ միտք ունի և կարող  
է գործ տեսնել եթէ ծանր դժբաղդութիւններու չհանդիպի և եթէ մնացեալ Հայ  
տարրերը անոր ոյժերը չչէզոքացնեն : Միացեալը իր մտաւոր կարողութեան, իր  
խմաստութեան ապացոյցը արդէն կուտայ իր ծրագրին և գործելակերպին մէջ :  
Անկարելի է առանց մեծ գոհունակութեան զգացումի վերջացնել իր հրատարա-

կած տեսրակին մէն մի պարբերութիւնը : Հոն հեռաստեութիւնը, խոհեմութիւնը,  
գործնականութիւնը և ճշմարիտ հայրենասիրութիւնը իրենց արժանի տեղը գրա-  
ւած՝ երեւան կուգան շատ որոշ կերպով :

. . . . Մենք կը մաղթենք որ Հայը իր բոլոր ուժովը քաջալերէ Միացեալը :  
ԿՈՉՆԱԿ, Նիւ-Եորք, 12 Նոյեմբեր, 1910

. . . . Ուրախ ենք տեսնելու որ Օսմ. Սահմանադրութեան Դրօշին տակ  
ուսումը, իր երկարամտայ կաշկանդումներէն ձերբազատուած, ազատ թռիչք մը  
մը առնել սկսած է նորո՞նի ազատ Կառավարութեան՝ բոլոր Օսմանցիներուն մէջ  
հաւասարապէս, իսկ նորո՞նի Միաց. Ընկերութեան՝ Հայոցս մէջ մասնաւորա-  
պէս : Ամէն Հայու պարտականութիւնն է օժանդակել Միացեալին նիւթական ու  
բարոյական ամէն միջոցներով :

Մեր քաղաքական կազմակերպութիւնները կրթական գործին մէջ պէտք է  
առպարելը բաց թողուն Միացեալի առջեւ ու օժանդակեն անոր ամէն ձեռնարկ-  
ներուն :

Ամէնքս մէկին՝ Միացեալին համար, ու մէկը՝ Միացեալը՝ ամէնուս հա-  
մար, որովհետեւ Միացեալը մեր ազգային բոլոր կազմակերպութեանց ծնուցիչն  
եղած է, ու մեր մայր կազմակերպութիւնն իսկ է, և ան է որ բոլոր շրջանակ-  
ներու հարկ եղած ՄԱՐԴը պիտի հասցնէ :

ԱՉԳ, Պոսթրմ, 26 Հոկտ., 1911

. . . . Երկար տարիներ առաջ, Ապրիլ Համիտ իր թշնամութիւնը յայտ-  
նել առաջ, Հայերը «Միացեալ կրթ. Ընկերութիւն»ը կազմակերպեցին, որու  
վարչութեան ներքեւ Հայաստանի այլ և այլ մասերուն մէջ նախնական զարգացնող  
բացուեցան : Սակայն երբ Սուլթանը հայածել սկսաւ, զարգացնող փակուեցան :  
Սակայն սահմանադրութենէն առջին Ընկերութիւնը վերակազմուած է կարող  
վարչութեան մը ներքեւ ու սքանչելի գործ կը տեսնէ՝ Հայաստանի այլ և այլ մա-  
սերուն մէջ զարգացնող բանալով :

. . . . Հայ ժողովրդին փառասիրութիւնը անսահման է, իրենց ազգային  
հպարտութիւնն աւելի մեծ է քան ուրիշ ու է մէկ ազգինը : Ոչ մէկ ժողովուրդ  
այչափ չարաբուած է, սակայն և սչ մէկը Հայերուն չափ չահած է :

ԲԷՔԸՐՏ ՀԷՐԸԼԸՏ, Շիխալօ, 12 Նոյեմ. 1910

Պէտք է շունամ հոս ծանրանալու վանի գերազանցապէս Հայկական կեդրո-  
նին մէջ վարժապետանոցի մը հաստատման կարեւորութեան ու օգտակարու-  
թեան մասին :

Մեզի ամէնէն աւելի պէտք եղածը՝ զարգացնել չորս պատերէն առաջ՝ անոր  
հոգին կազմել կոչուած վարժապետն է :

Այս ճշմարտութիւնը հազար անգամ կրկնած ենք և չենք խորհիր որ անոր մասին երկու կարծիք գտնուի մեր մէջ :

Բարեգործականին կողմէ առնուած գործնական քայլը՝ Վանի կեդրոնականը Վարժապետանոցի վերածելու համար՝ ամէնէն շքեղ ժէսթը պիտի մնայ իր կրթնապաստ գործունէութեան :

Մենք, այս առթիւ, սրտազին կը խնդակցինք մեր Վանեցի եղբայրներուն, կը մաղթենք որ կրթական այս նոր ու բարձրագոյն հաստատութիւնը իրիմեաններու, Սրուանձտեանցներու, Տիկանցներու, Ամիրջանեաններու, Փիրղայէմեաններու, Թօխմախեաններու հզօր ցեղէն մտաւորական նորանոր ստեղծագործ ուժիւր ծնուցանէ . . . :

ԴԱՇԻՆՅ, Իզմիր, 21 Յունուար, 1911

. . . Si tous les concours sont venus à la Miatzial, c'est que cette institution est digne de toutes les sympathies.

Constituées depuis 40 ans, les Sociétés Unies Arméniennes Miatzial ont pour but de répandre gratuitement l'instruction dans les localités les plus reculées de l'Asie Ottomane. Elles ont—comme nous avons souvent eu l'occasion de le dire—rendu les plus grands services à la nation Arménienne et à l'Empire.

STAMBOUL, 4 Mars, 1911

. . . Սահմանադրութեան հոչակումէն յետոյ երբ այլեայ կազմակերպութիւններ Ազգը վերականգնելու փքուուոյց խոստումներ կ'որոտային, Հայոց Միացեալ Ընկերութիւնի անունով լուսատու վաղեմի ճրագը՝ որ Համիտեան բռնականութեան փոթորիկին մէջ մարտի երեւոյթով մը կը սլուլար անշէջ՝ կամեց մը սկսաւ նշունագեղ փայլել, և ահա՛ ամէն կողմէ Լուսաւորչականը, Կաթիլիկն ու Բողոքականը փութացին իրենց իւրի կաթիլներովն ապահովել Միացեալին լոյսը՝ որ հանդարտիկ տարածումով անխտիր կը ցոլացնէ այսօր իր ճառագայթներն ամէն Հայ անուն կրող ուսանողին, ինչ որ այ ըլլայ անոր կրօնական դասաններ :

Ահա կեդրոն մը որ վարչական կամ վարդապետական կենճիւ չունի : Գործունէութեան ասպարէզ մ'է, ուր որչափ որ զիրար գերազանցելու ճիգով մրցին Ազգին երեք հատուածները, ամբողջ ազգութիւնն է որ պիտի շահի : Ուրեմն ամէն անոնք՝ որ նախանձախնդիր են Ազգ. Միութեան, անոնք որ կը վստահին դատարարութեան հրաշագործ կարողութեանը, թող Միացեալը միանան և շատ չանցած պիտի սեննուի բազմապատիկ բարերար արդիւնք :

ԲԻԻՉԱՆԴԻՈՆ, 11 Մայիս, 1911

. . . Նոր ծրագրի մը համեմատ, Միացեալ Ընկերութիւնը այս տարի կ'ունենայ դպրոցական արձակուրդի առթիւ ամառնային դասեր, իր գործունէութեան այլ և այլ շրջանակներուն մէջ :

. . . Երկու ամուսն կեանք մը միեւնոյն վայրերու մէջ, միեւնոյն դասերը, միեւնոյն վաղերները Ընկերութեան ուսուցիչ-սաներու համար : Ճաշել միեւնոյն սեղաններու վրայ, չնչել միեւնոյն օդը, իրարու հետ շփում սրտով ու մտքով, իրարու հետ լաւ ծանօթութիւն, հոգեկան եղբայրակցութիւն, միեւնոյն ուղղութիւնով պատրաստութիւն մեր գաւառացի մանկութեան մտաւոր կեանքին համար, որոնք ամէնը ունին իրենց մեծ առաւելութիւնը :

Ու ընտա տարակուսելի չէ որ երեք տարի ետքը, այսօրուան ուսուցիչ-ուսանողները, համեմատաբար շատ աւելի լաւ վարժապետներ են, կազդուրուած մարմինով ու մտքով, նորոգուած և զբեթէ վերաստեղծուած մեր գաւառի մանկութեան դաստիարակութեան գործի մասին :

ԱՉԱՏԱՄԱՐՏ, 24 Յուլիս, 1911

. . . Ահա ազգին կրթական ամէնէն կարեւոր Ընկերութիւնը որ խօսքէ աւելի գործք ունեցած է անցեալին մէջ ու պիտի ունենայ նաև ներկային ու ապագային մէջ : Ենթադրութիւն մը որ իրաւունք ունի ամէն մէկ Հայէ ազնկալելու բարոյական կամ նիւթական աջակցութիւն մը իր այնքան կենսական գործը շարունակելու և հետզհետէական աճումով ընդարձակելու համար :

ԲՈՂԲՈՋ, 15 Սեպտ., 1911

. . . Հայոց Միացեալ Ընկերութիւնը մեր ընկի կրթական ներքին վիպտեարութիւնն է հայալատ և խաւառակուան կեդրոններու և գիւղերու մէջ, որ նպատակ ունի կրթութիւնը ծաւալել և փրկել ու լուսաւորել Հայը :

Միակ կրթուած լուսաւորուած ժողովուրդներն են որ կրնան իրենց գոյութիւնը պահել և յտնաջիւնջ այս լուսաւոր գարուն մէջ : Անկերթ ժողովուրդները ճակատագրուած են ընկալուի դասակարգն ըլլալ աշխարհի : Հայոց Միացեալ Ընկերութիւնը ուրեմն փրկարար գեր մը կը կատարէ մեր համայնքին մէջ :

ԵՓՐԱՏ, 1 Հոկտեմբեր, 1911

. . . The Union of Educational Societies, or "Miatzial", enjoys the confidence of all classes and parties, its chief aim being to spread education in Armenia without distinction as regards race or creed.

. . . These institutions are extremely modern and practical. In all country sections agriculture is taught as a part of elementary education, and, in cities, such trades as tailoring and carpentering.

THE NEAR EAST, London, 1 March, 1912

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՄԸ ՎԱՆԷՆ

Ազնուայոյք Ասեմայես եփ. եւ

Մեծայարգ Տեարք Անդամք Տեօրեկ ժողովոյ Հայոց Միաց. Ընկերութեանց  
ի Կ. ՊՈԼԻՍ

Մեծայարգ Տեարք,

Լրագիրներէն իմացանք որ Պատկ. Տեօրէն ժողովոյք անդամներէն Բրօք. Տեար Յովհաննէս Յակոբեան Եգիպտոս եղած ատեն «Հայոց Ընդհանուր Բարեգործական Միութեան» Պատկ. Կեդր. Վարչութեան հետ խորհրդակցելով որոշում տուած են Բարեգործականի ստարութեամբ Վանի մէջ Վարժապետանոց մը բանալ, ընդ հովանաւորութեամբ Պատ. Տեօրէն Սորհրդոյք:

Այս լուրը անհուն ուրախութեամբ լսեցուց մեր և ժողովուրդի սիրար, վասն զի ցաւատանջ հայրենիքի ամենակենսական մէկ պէտքն է որ կը մտածեն լրացնելու տարանակ Հայութեան յաւաքոյն զաւակները:

Մայր Հայրենիքի կրթութեան նուիրուած Հայոց Միացեալ Ընկերութիւնը երկրորդ անգամն է որ կը ձեռնարկէ իւր մասնաւոր գուրգուրանաց առարկայ դարձնել ըզմակարօտ Վասպուրականը. կատարեալապէս կը յուսանք որ 80ական թուականներու Վարժապետանոցին և անոր շարունակութիւնն եղող Կեդրոնականի թէև արդիւնաւոր բայց կարճատեւ կեանքը պիտի չունենայ այս անգամուան Վարժապետանոցը, քանի որ նոյն չրջանի տխուր պայմանները գոյութիւն չունին այժմ և մանաւանդ Վանեցի իմակ առաւել գիտակցօրէն պիտի փարի այդ հաստատութեան և Պատկ. Տեօրէն Սորհրդոյք արամադրութեան տակ պիտի գնէ իր սրտագին աշակցութիւնը երբ կը տեսնէ որ Հայազգի երկու հոյակապ կազմակերպութիւնները, Բարեգործականը և Միացեալը, ձեռք ձեռքի տուած ընդատակ կ'երթան Հայրենիքի պահանջներուն:

Ընդունեցէք, Տեարք, մեր և ժողովրդի սրտազեղ շնորհակալութեան և յարգանքներու զգացումները:

Դիւան Թաղականութեան	Նորալինու (Ստորագրութիւն և Կնիք)		
»	»	Ս. Յակոբի	«
»	»	Հայկալանքի	«
»	»	Յայնկոյսներու	«
»	»	Արաբի	«
»	»	Քաղաքամէջի	«
Դիւան Հայկ. Կեդր. Վարժարանի	Խնամակալութեան		«

ՎԱՆ, 14 Փետր. 1911

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԷՔ

Ինչպէս Տեղեկագրիս յառաջաբանէն յայտնի է՝ Տեօրեկ ժողովը բանակցութիւններ կատարելով Բարեգործական Միութեան հետ այժմ կը վայելէ այդ պատական Ընկերութեան գնահատելի աջակցութիւնը ու գործակցութիւնը: Ստորեւ կը նրաստակենք Միութեան մեր ստացած կարգ մը նամակները որոնք ընդհանուր շանեկանութիւն ունին և երեւան կը բերեն երկու ուր Ընկերութեանց համաբաւոյնութիւնը:

Պանիրե, 15 Նոյեմբեր, 1910  
Թիւ 1311

Պատ. Տեօրեկ ժողով Միացեալ Ընկերութեանց  
Կ. ՊՈԼԻՍ

Տեար Ատենայես

Կեդր. ժողովս ժամանակին պատիւ ունեցաւ ստանալու Ձեր 9 Օգոստոս ամսաթիւ նամակը յարակից տեղեկագրի պատճէններով ու ցուցակներով, սակայն անդամներուն ամառնային բացակայութեան պատճառաւ չի կրցաւ աւելի կանուխէն որոշումի մը յանգիլ այն խնդիրներուն մասին որ պարզուած են ձեր վերոյիշեալ նամակին մէջ, և որոնց նկատմամբ մեր պաշտօնակիցներէն Տեարք Անդրանիկեան և Մալէղեան եւս հաճօյքը ունեցած են անձամբ խորհրդակցելու Պատ. ժողովիդ հետ:

Աւելորդ է ըսել թէ Կեդր. ժողովս եւս ջերմապէս կը փափաքի ընդհանուր համաձայնութեան մը գալ ձեռք հետ, ինչպէս որ կը թելադրէք, իր նպատակին կրթական բաժնին մասին. սակայն ստ այժմ կանխահաւ նկատելով այդ բանը, արուած ըլլալով թէ Միութիւնը իր գործունէութեան նախնական շրջանին մէջ կը գտնուի և թէ տակաւին իր միջոցները չեն ներք տարբեր յանձնառութեանց, կը գոհանանք մասնակի գործակցութեամբ մը՝ մասնաւոր պարագաներու մէջ, այն համազումով որ հետզհետէ մեր սիրալի յարաբերութիւնները կը ձգտին երկուստեք ցանկացուած ընդհանուր և վերջնական համագործակցութեան:

Ինչպէս արդէն նախնական խորհրդակցութեան մը նիւթ եղած է Պատ. ժողովիդ մէջ, այս անգամ Միութիւնս խնդիրը իր տեսակէտէն ուշիւ քննելէ վերջ, տարեկան 300 անդ. ոսկիի գումար մը քուէարկեց Հայաստանի 16 և Կիլիկիոյ 4 փոքր գիւղերու մէջ 20 նախնական դպրոցներու բացումին համար, պայմանաւ որ ոչ այդ վարժարաններուն թիւը 20էն պակաս ըլլայ և ոչ ալ անոնց տարեկան ծախքը 300 ոսկին անցնի, անշուշտ ջանադիր ըլլալով իւրաքանչիւր

գիւղի գիւղացիները եւս ըստ կարելոյն մասնակից ընել բացուելիք զպրօցներուն ընդհանուր ծախքերուն: Ժողովս այդ հաստատութեանց յանուն Միութեանս բացումը և անոր հաշուոյն անօրինութիւնը առ այժմ կը վստահի Միացեալ Լճակերութեանց, և այդ նպատակաւ յառաջիկայ Յունուար մէկէն սկսեալ յանձն կ'առնէ վեց ամիսը անգամ մը 150 անգլ. ոսկի վճարել Պատ. Ժողովիդ. առաջին վեցամսեան ներքակ չէքով կը զրկենք:

Տարակոյս չունինք թէ մերադնի մանկտիկն կրթութեանը համար ձեր ցոյց տուած խիստ գնահատելի անձնութեան շնորհիւ, Միութեանս անունով և հաշուին բացուելիք զպրօցները քիչ ատենէն յուսացուած արդիւնքը պիտի տան և թէ ձեռք բերուելիք յաջողութիւնը Միութեան համար զրգու մը պիտի ըլլայ նորանոր ազգօգուտ ձեռնարկներու:

Հաճեցէք ընդունիլ, Տեար Ասենապետ, մեր կանխայայտ շնորհակալութիւն հետ մեր խորին յարգանքին հաւաստիքը:

Ի գիմաց Հ. Բ. Ը. Միութեան  
Կեդր. Վարչ. Ժողովի  
Գանձապետ  
Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ  
Փոխ-Ասենապետ  
ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ

Գահիրե, 20 Յունուար, 1911  
Թիւ 1509

Մեծայարգ ԲրոՅ. Յովն. Յակոբեան  
Լիազօր Պատուիրակ Միացեալ Բնկերութեանց  
և Անգլամ Տնօրէն Ժողովի  
Ա Ս Տ

Մեծայարգ ԲրոՅեւոյ

Կը փութանք իմացնել ձեզի թէ Կեդր. Ժողովս, իր վերջին նիստին մէջ, նկատի առնելով ձեր 16 ամսաթիւ նամակը, որոպէս ըստ սովորութեան այս տարի եւս ֆ 100 հարիւր անգլ. ոսկիի գումար մը տրամադրել Միացեալ Լճակերութեանց, իր ծանրալուծ բնուր մասամբ թեթեւեցնելու ցանկութեամբ: Սոյն գումարը առաջին անթիւ պիտի զրկուի Տնօրէն Ժողովի Գանձապետի հրամանին:

Սորին յարգանքներով

Ի գիմաց Հ. Բ. Ը. Միութեան  
Կեդր. Վարչ. Ժողովի  
Ասենապետ  
Վ. ՄԱԼԷՉԵԱՆ  
Գանձապետ  
Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Գահիրե, 21 Յունուար, 1911  
Թիւ 1510

Մեծայարգ ԲրոՅ. Յովնանէս Յակոբեան  
Լիազօր Պատուիրակ Միացեալ Բնկերութեանց  
և Անգլամ Տնօրէն Ժողովի  
Ա Ս Տ

Յարգելի ԲրոՅեւոյ

Հաճոյքը ունինք հաղորդելու ձեզի թէ Կեդր. Վարչ. Ժողովս, իր վերջին նիստին մէջ, շատ նպատակայարմար գտաւ յանուն Միացեալ Բնկերութեանց ձեր ներկայացուցած ծրագիրը որով Միութեանս կ'առաջարկէք Վարժապետանոց մը հիմնել Վանի մէջ:

Արդէն Ժողովս վաղուց զգացած էր այդպիսի հաստատութեան մը անհրաժեշտ պէտքը մեր Ազգին մէջ և ուրախ ենք որ ձեր զրական թելադրութիւնը յարմար առիթը հղաւ իրագործելու մեր մտադրութիւնը:

Ժողովս, համաձայն ձեր ծրագրին, որոպէս է յառաջիկայ Սեպտեմբերին Վանի մէջ Վարժապետանոց մը հիմնել, ստանձնելով 450 օսմ. ոսկիի ծախք մը և յանձնելով ասոր մատակարարութիւնը Միացեալ Բնկերութեանց: Նախնական պիտոյքներու գնման համար եւս ձեր Բնկերութեան տրամադրութեան ներքեւ կը դնենք 200 անգլ. ոսկիի գումար մը:

Ինչպէս ցոյց տրուած է ձեր ծրագրին մէջ և անձամբ եւս բացատրեցիք Ժողովիս, Վանի Հայկազեան վարժարանը կը վերածուի—անշուշտ սոյն վարժարանին արդի նամակալութեան հետ վերջնական համաձայնութեամբ մը—«Հայկազեան Վարժապետանոցի», յանուն և ի հաշիւ «Հայկազեան Ընդհանուր Միութեան»: Այս պարագային յիշեալ վարժարանին հաստատ եկամուտը — կտակ, նուէր և տեղական հասոյթ —, որ ըստ ձեր ցուցմունքի կը հասնի 150 օսմ. ոսկիի, բարգաւաճելով Միութեանս յանձն առած գումարին վրայ, առաջադրուած Վարժապետանոցին տարեկան պիւտժէն 600 օսմ. ոսկի կ'ըլլայ:

